ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր

ԵՐԵՎԱՆ 2009

§Ð³ïáó å³ ïÙáõÃïáõÝ ¦ ³é³ñÏ³ïÇ ã³÷áñáßÇãÝ»ñÝ áõ Íñ³·ñ»ñÁ Ùß³Ïí»É »Ý ÐÐ Î¶ Ý³Ë³ñ³ñÇ 10.11. 2006Ã N892-²/ø Ññ³Ù³Ýáí Ñ³ëï³ïí³Í Ñ³Ýñ³ÏñÃ³Ï³Ý ³í³·¹åñáó ã³÷áñáßÇãÝ»ñÇ ¨ Íñ³·ñ»ñÇ ÑÇÙ³Ý íñ³£

Լրամշակել՝ Ա. Նազարյան

«Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ

**Վաճառքի ենթակա չէ:**

Երևան - 375070 Ս.Վրացյան փող. 73
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Հաստատված է
ՀՀ ԿԳ նախարարի

02.12. 2008թ. N -1078 Ա/Ք հրամանով

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

## ՉԱՓՈՐՈՇԻՉ

(X - XII դասարաններ)

# Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, ՀՀ կառավարության կողմից հաստատված ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը:

Հայոց պատմության ավագ դպրոցի չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը,
- առարկայի ուսումնական նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնական գործունեության տեսակները,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները,
- ուսումնառության արդյունքների գնահատումը,
- գրականության ցանկը:

Սույն չափորոշչի հայեցակարգային դրույթների, մոտեցումների ու պահանջների հիման վրա կազմվում են «Հայոց պատմություն» առարկայի ընդհանուր, հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի ծրագրերը և կազմակերպվում է ուսուցման գործընթացը ավագ դպրոցում:

# Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

Հայոց պատմության ուսումնասիրությունը ավագ դպրոցում պայմանավորված է սովորողներին հետագա կրթության կամ աշխատանքային գործունեության նախապատրաստելու, հարափոփոխ արդի դարաշրջանում հասարակության մեջ ազգային և հայրենասիրության ոգով նրանց դաստիարակելու անհրաժեշտությամբ:

Ավագ դպրոցում, ընդհանուր և տարբերակված ուսուցման հոսքերում, Հայոց պատմության դասավանդումն այնպես պետք է կազմակերպվի, որպեսզի սովորողները հիմնարար և կայուն գիտելիքներ ձեռք բերեն Հայաստան երկրի ու պետության անցած փառավոր ուղու, հայկական քաղաքակրթության ստեղծած արժեքների մասին, գիտական պատկերացում ունենան Հայոց պատմության հիմնախնդիրների վերաբերյալ:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Պատմությունն աշխարհաճանաչողության և ինքնաճանաչողության հիմքն է: Անցյալի չիմացությունն անխուսափելիորեն հանգեցնում է ներկան չհասկանալուն:

Սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայ ազգի և պետության գոյությունն ու շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր:

Պատմությունը հանդիսանում է սերունդներին իրար կապող հիմնական օղակը, նրա միջոցով է պահպանվում ու փոխանցվում ազգերի և ժողովուրդների պատմական հիշողությունը: Պատմական ժառանգությունը և փորձը ծառայում են սովորողի բարոյական և մշակութային կատարելագործմանը, հասարակության մեջ իր տեղը գտնելուն, իր պատմական արմատները ճանաչելուն և պատմական հիշողությունը ձևավորելուն:

Հիմք ընդունելով վերը շարադրված առանցքային գաղափարները և սկզբունքները՝ պատմության առարկայական չափորոշիչները, նոր ուսումնական ծրագրերը և գնահատման համակարգը մշակելու համար կարևորվում են հետևյալ մոտեցումները.

1. Պատմական կրթության հիմքում դնել ազգային առանձնահատուկ նպատակները, որոնք բխում են Հայաստանի, հայ ժողովրդի բազմադարյան հարուստ փորձից, ներկա իրավիճակից և զարգացման հեռանկարներից:

Միաժամանակ հաշվի առնել համաշխարհային պատմական փորձն ու համամարդկային արժեքները:

2. Պատմական կրթության բովանդակությունը ըստ դպրոցի երեք աստիճանների անհրաժեշտ է կառուցել հաջորդականության և հետևողականության հիմքի վրա, որպեսզի այն ծառայի սովորողների գործունեական կարողությունների ու հմտությունների և արժեքային համակարգի շարունակական ձևավորմանն ու զարգացմանը:
3. Պետք է ամրագրել կրթության բովանդակության առաջնայնությունները, ուսումնական նյութի ընտրության սկզբունքները և գործիքակազմը:
4. Հայոց պատմության և մյուս առարկաների բովանդակային միջուկը ձևավորել գիտականության սկզբունքի վրա՝ ամրապնդելով այն ճանաչողական, գործունեական-կիրառական և դաստիարակիչ բաղադրիչներով:
5. Նոր չափորոշիչներում և ծրագրերում հիմնական շեշտադրումն անել հայ մարդու գործունեության, նրա պատմական և ժամանակակից նկարագրի բացահայտման վրա:
6. Ապահովել արդյունավետ համամասնություն (հաշվեկշիռ) պատմության չափորոշիչների ու ծրագրերի գիտական-ակադեմիական և գործունեական բաղադրիչների միջև՝ հիմք ընդունելով սովորողների տարիքային առանձնահատկությունները և ավագ դպրոցի ռազմավարական խնդիրները:
7. Ստեղծել և ներդնել պատմության առարկայական չափորոշիչների պահանջների իրականացումը վերահսկելու և գնահատելու իրատեսական, արդյունավետ, ճկուն համակարգ:

Ազգային արժեքների ստեղծման ու պահպանման գործում հսկայական է ազգային մշակույթի դերը: Համաշխարհայնացման մեր ժամանակներում հատկապես կարևորվում է մշակույթի ազգապահպան գործառույթը, մշակութային ժառանգականության ապահովումը: Ստորև նշվող դրույթները կօգնեն ավելի հանգամանորեն պատկերացնելու ազգային մշակույթի նշանակությունը և այն արտահայտել առարկայի բովանդակային միջուկում ու ծրագրերում.

- Հայաստան աշխարհը իր ուրույն նկարագիրն ստացել է հայ ժողովրդի բազմադարյան աշխատանքով, ինքնատիպ մշակույթով՝ հոգևոր և նյութական արժեքներով: Հայոց հայրենիքը մեր ժողովրդի պատմամշակութային տարածքն է, հայկական մշակույթի, հայության պատմական հիշողության և ազգային ինքնագիտակցության նյութական կրողը:
- Հայ ժողովուրդը դեռ հնագույն ժամանակներից կերտելով իր անընդհատ պատմությունը, ազգային մշակույթը՝ շարունակաբար ապրել ու ստեղծագործել է քաղաքակրթությունների բոլոր հերթափոխությունների ժամանակաշրջանում: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում մեր ազգային մշակույթը հավասար երկխոսության մեջ է մտել ժամանակի զարգացած մշակույթների հետ:

- Մշակույթը մեր օրերում կարևորագույն դեր է խաղում հասարակության, ազգի և անհատի կյանքի կարգավորման գործում: Ազգային մշակույթի համակարգում են մշակվում և ստեղծվում ազգային արժեքները, որոնց միջոցով պահպանվում, վերարտադրվում և զարգանում է հայոց արժեհամակարգը:
- Ազգային արժեքները կամ դրանց որոշակի մասը մշակույթի միջոցով բազմակի անգամ վերարտադրվում են, կրկին ու կրկին ստեղծվում: Շարունակաբար վերարտադրվող արժեքներ են հանդիսանում արվեստի և գրականության ստեղծագործությունները, ուսուցման և դաստիարակության միջոցները, հասարակության և պետության կառավարման ձևերը, մարդկանց փոխհարաբերությունների ընդունված ձևերն ու նորմերը և այլն:
- Այսօր անհերքելի է այն իրողությունը, որ քաղաքակրթական համընդհանուր ձևերը` քաղաքական, տնտեսական, կրթական, գիտատեխնիկական, ընդգրկում են մարդու կեցության միայն մի մասը: Մարդու անմիջական կեցությունն ընթանում է մշակութային ձևերի մեջ, որոնց հետ են կապված նրա անմիջական ապրումները, զգացմունքները, ակնկալիքները, բարոյական, գեղագիտական և ճանաչողական արժեքները: Իսկ մշակութային այդ ձևերն իրականում գոյություն ունեն էթնիկական բազմազանության մեջ: Կոնկրետ ազգությանը և մշակույթին պատկանելու գիտակցությունը մարդուն ստիպում է դավանել անմիջական կեցության մեջ իրական արժեքներ:
- Կրթության և գիտության համակարգերի միջոցով հայկական մշակութային ժառանգությունը ոչ միայն փոխանցվում է նոր սերունդներին, այլև վերջիններիս ջանքերով վերարտադրվում է, թարմացվում և զարգանում: Այսպիսով` մշակույթը ժառանգվում է վերարտադրության ճանապարհով:
- Նոր սերունդների էթնիկական սոցիալականացումն իրականացվում է ազգային մշակույթի միջոցով: Պատմական և գեղարվեստական գրականությունը, ժողովրդի պատմական հիշողությունը, հոգևոր արժեքները վիթխարի դեր են խաղում հայերի ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման ու զարգացման գործում: Մշակույթի էթնոպաշտպան գործառույթը իրականացվում է այն դեպքում, երբ այդ մշակույթը պահպանվում և վերարտադրվում է յուրաքանչյուր նոր սերնդի ջանքերով: Եթե ազգը կորցնում է իր մշակույթը, ապա դրանով իսկ զրկվում է շրջապատող միջավայրին հարմարվելու, դիմակայելու իր փորձից: Պատմական պայմանների փոփոխման դեպքում ազգը պետք է իր մշակույթի մեջ նորամուծություններ կատարի, համապատասխանեցնի այն ժամանակի պահանջներին:
- Ազգային կրթությունը, գիտությունը, գրականությունը, մամուլը, արվեստը, հասարակական կյանքի կազմակերպման իրավաքաղաքական ձևերը մշտապես նպաստել են, որպեսզի հայ ժողովրդի տարբեր հատվածները, թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում իրենց գիտակցեն որպես մեկ ընդհանուր

հայկական մշակույթի կրողներ և սերնդեսերունդ վերարտադրեն իրենց մշա-կութային ժառանգությունը:

- Հայկական մշակույթը պատմական անընդհատության գործընթացի մեջ է և հավաստում է իր կրող ժողովրդի անընդհատ գոյությունն իր հայրենիքում: Մշակույթի միջոցով է փոխանցվում և վերարտադրվում հայ էթնոսի ազգային առանձնահատկությունները, նրա նկարագիրը, մի խոսքով՝ մշակութային ամբողջ ինքնատիպությունը: Պատմական յուրաքանչյուր դարաշրջանում դրսևորվում են հայ ժողովրդին առանձնահատուկ աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը, մտածելակերպն ու գործելակերպը:

Ավագ դպրոցում առարկայի ուսումնական բովանդակության ձևավորման համար հիմնական չափանիշ է առաջարկվում պատմության մեկնաբանման և արժևորման քաղաքակրթական սկզբունքը՝ զուգորդելով այն ֆորմացիոն տեսության ձեռքբերումների հետ: Բովանդակային միջուկը ժամանակագրական առումով ընդգրկում է հայկական քաղաքակրթության ամբողջական պատմությունը՝ նրա սկզբնավորման ակունքներից մինչև ժամանակակից հետարդյունաբերական հասարակության շրջանը:

«Հայոց պատմություն» առարկայի չափորոշչի բովանդակային միջուկի առանցքը կազմել է հայկական պետականության պատմությունը, որովհետև քաղաքակրթական արդի փուլում մեզ համար կարևորվում է ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը:

Հայաստանը հին ժամանակներից հայտնի է որպես քաղաքակրթության բնօրրան, եղել է եվրոպական ու արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցու-թյան և փոխազդեցության կենտրոնում: Հայ ժողովուրդը ստեղծել, պահպանել ու զարգացրել է յուրատիպ մշակույթ, որի շնորհիվ հայությունը, հազարամյակներ կտրելով, հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակույթի հարուստ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրումը կազմել է երկրորդ կարևոր բովանդակային ուղղությունը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է նաև ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը, ինչը, բնականաբար, կազմել է առարկայի բովանդակային միջուկի մյուս ուղղությունը:

Կրթության որակի բարելավման խնդրի հաջող իրագործումը մեծապես կախված է նաև ուսուցչից: Մեծ նշանակություն ունի ուսուցիչների աշխարհայացքային մոտեցումների հստակեցումը, նախորդ շրջանից մնացած «ավելորդ» գաղափարական բեռից ազատումը և իր անկախությունը վերականգնած Հայաստանի ազգային-պետական շահերի տեսանկյունից համապատասխան մտածելակերպի ու գործելակերպի որդեգրումը: Ցանկացած հասարակարգում պատմության ուսուցիչը եղել և մնում է գաղափարախոսական ճակատի սկզբնական ձևավորողը և գլխավոր ներկայացուցիչը: Ահա թե ինչու կարևոր է, որ պատմաբան ուսուցիչները հիմնավորապես յուրացնեն առարկայի չափորոշչային ու ծրագրային բովանդակությունը, հստակեցնեն իրենց առջև դրվող կրթական նոր պահանջները:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայոց պատմության դասավանդման գլխավոր նպատակն է՝

- սովորողին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության մասին,

- զարգացնել սովորողի ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները,

- ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ,

- դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները,

- ապահովել սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նրա մասնակցությունը:

Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրն է՝ ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը:

Հայոց պատմության ուսուցումն ավագ դպրոցում կնպաստի սովորողների աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ավագ դպրոցում ուսումնառությունը կօգնի սովորողներին ավելի լավ ճանաչել ժամանակակից աշխարհը, կողմնորոշվել հասարակական բազմաբնույթ հարաբերություններում, ամբողջական պատկերացում ունենալ Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Հայոց պատմության չափորոշչի ու ծրագրի մշակման և ավագ դպրոցում նրա դասավանդման հիմքում ընկած են հետևյալ գիտական ու մեթոդական կարևոր մոտեցումները՝

- Պետականության անհրաժեշտության՝ որպես ազգի հարատևման գրավականի գիտակցության ձևավորումը և ամրապնդումը:
- Ազգային գաղափարախոսության՝ որպես պետականության պահպանման և զարգացման կարևոր նախադրյալի, գիտակցության ձևավորումը:
- Քաղաքացիական գիտակցության և պետական մտածելակերպի ձևավորումն ու ամրապնդումը:
- Պետություն - անհատ, պետություն - հասարակություն ներդաշնակ հարաբերությունների գիտակցության ձևավորումը:
- Հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդումը:
- Կոնկրետ պատմական դարաշրջանը բնութագրող մշակութային հիմնական արժեքների կարևորումը:

- Համամարդկային մշակույթի մեջ հայ մշակույթի հաստատուն տեղն ապահովող արժեքների վերաբերյալ հիմնարար գիտելիքների յուրացումը,
- ուսուցման գործընթացի կազմակերպումը մանկավարժության հիմնարար սկզբունքների հիման վրա:

## ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

Ավագ դպրոցում Հայոց պատմության պարտադիր բովանդակային միջուկը հիմք է ծառայում հումանիտար, ընդհանուր և մյուս հոսքերի ծրագրերի մշակման համար:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** «Հայոց պատմություն» առարկայի բովանդակությունը ավագ դպրոցում: Աղբյուրները: Հայոց պատմության պարբերացումը: Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները. Հայկական լեռնաշխարհը հայոց քաղաքակրթության բնօրրան, աշխարհաքաղաքական դիրքը, տարածքը, հաղորդակցության ուղիները:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հայկական լեռնաշխարհը՝ մարդկության պատմության զարգացման վաղնջական բնօրրան: Հնագույն բնակատեղիները Հայկական լեռնաշխարհում: Քաղաքակրթության ակունքներում. Նեոլիթյան հեղափոխությունը և էնեոլիթը Հայկական լեռնաշխարհում: Պաշտամունքը, հավատալիքների համակարգը: Արվեստը: Գիության տարրերի առաջացումը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

**Հայոց ծագումնաբանությունը:** Հայոց ազգաբանության հիմքերը, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը: Հայկ Նահապետը և Հայկյան Արամ աշխարհակալ թագավորը՝ հայ-արմեն ցեղանվան և Հայք-Արմենիա երկրանվան անվանադիր նախնիներ: Հայաստանի մասին վկայությունները Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում:

**Վաղ պետական կազմավորումները Ք. ա. III հազարամյակից մինչև Ք. ա. I հազարամյակի սկզբները:** Շենգավիթի, Մեծամորի, Լոռի-բերդի, Բարձր Հայքի և այլ հնագիտական մշակույթը պետական վաղ կազմավորումների զարգացման մասին: Քաղաքները, ամրոցները, բերդ-շեները: Հայկական պետական վաղ կազմավորումները (Արատտա, Արմանում): Հայասայի թագավորությունը, նրա հարաբերությունները Խեթական պետության հետ: Հայկյանների Այրարատյան թագավորությունը, Արմավիր մայրաքաղաքը: Նաիրյան համադաշնությունը՝ որպես հայ նախարարական համակարգի վաղագույն դրսևորում:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Վանի համահայկական թագավորությունը:** Վանի թագավորության հիմնադրումը. Արամե: Սարդուրի I: Վան-Տուշպայի բարձրացումը: Վանի թագավորության հզորացումը Իշպուինի, Մենուա թագավորների օրոք: Թագավորությունը Առաջավոր Ասիայի հզորագույն տերություն Արգիշտի I-ի ժամանակ: Թագավորությունը նրա հաջորդների օրոք: Վանի թագավորության տնտեսությունը, շինարարության հզոր վերելքը: Հայկական պետականության զարգացումը:

**Հայկազուն Երվանդյանների թագավորությունը:** Հայոց թագավոր Պարույր: Հայկազուն Երվանդյանների թագավորությունը: Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները Ք. ա. VI դարի վերջից մինչև Ք. ա. IV դ. 30-ական թթ.: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Աքեմենյան տերության անկումը: Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփք-Կոմմագենեի թագավորությունները: Պայքար Սելևկյանների դեմ Ք. ա. III դ. վերջում:

Տնտեսական կյանքի վերելքը: Հնագույն Արմավիրի զարգացման նոր փուլը: Երվանդաշատ մայրաքաղաքի և այլ քաղաքների կառուցումը: Պետական կարգը, բանակը:

**Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը:** Աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում Ք. ա. II դ. սկզբին: Մագնեսիայի ճակատամարտը, Մեծ Հայքի ու Ծոփքի թագավորությունների վերականգնումը: Արտաշես I Բարեպաշտ. Արտաշեսյանների հարստության հիմնումը: Հայկական հողերի վերամիավորումը: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշես I–ի բարեփոխումները, դրանց նշանակությունը: Մեծ Հայքի պետության հզորացումը, դերը միջազգային հարաբերություններում:

Տիգրան II Մեծ: Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին, արտաքին նվաճումները: Քաղաքաշինության վերելքը, Տիգրանակերտ մայրաքաղաքի և այլ քաղաքների հիմնադրումը: Հայ–հռոմեական պատերազմը. պատճառները, սկիզբը: Պատերազմի ընթացքը: Պոմպեոսի արշավանքը և Արտաշատի հաշտությունը: Տիգրան Մեծի դերը համաշխարհային և Հայոց պատմության մեջ:

Մեծ Հայքի թագավորությունը Տիգրան Մեծի հաջորդների օրոք: Հայաստանի դերը միջազգային նոր իրադրությունում: Արտավազդ II: Հայ-պարթևական դաշինքը և հռոմեա-հայկական հարաբերությունների սրումը: Պայքար հռոմեական նվաճողների դեմ. Արտաշես II-ի գահակալությունը: Արտաշեսյանների թագավորության անկումը. պատճառները և հետևանքները:

**Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը I-III դարերում:** Քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում. պայքար Հայոց գահի շուրջ I դարի առաջին կեսին: Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Տասնամյա պատերազմը, Հռանդեայի պայմանագիրը: Տրդատ I Արշակունի. Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը: Վաղարշ I. Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Մեծ Հայքում Արշակունիների ժառանգական

իշխանության հաստատումը: Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները III դարում: Տրդատ III Մեծի գահակալումը: Մծբինի հաշտությունը:

Պետական կարգը Արշակունիների օրոք: Տնտեսության զարգացումը: Բնակչությունը, քաղաքները և գյուղական բնակավայրերը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**Հայկական մշակույթը Ք. ա. IX – Ք. ա. III դարերում:** Մշակույթի զարգացման պատմական պայմանները: Վանի թագավորության շրջանի մշակույթը. կրոնը, գիրը, գիտելիքը, արվեստը, ճարտարապետությունը: Հայկազուն Երվանդյանների ժամանակաշրջանի մշակույթը: Առասպելները: Հին հայկական վեպը: Դիցարանը: Նյութական մշակույթը:

**Մշակույթի վերելքը հելլենիզմի դարաշրջանում:** Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը: Շինարարության զարգացումը, նյութական մշակույթը: Դիցարանը: Արվեստը: Տոմարը: Հայ հին գրչությունը: Գրականությունը:

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը: Հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները, դրանց նշանակությունը համաշխարհային պատմության մեջ:

# ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց քաղաքակրթության զարգացման պատմական պայմանները, առանձնահատկությունները և արդյունքները միջնադարում:

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Քրիստոնեության ընդունումը: Ավատատիրության հաստատումը:** Քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Քրիստոնեության ընդունման նախադրյալները: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն (301 թ.): Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատումը: Ազգային և քրիստոնեական արժեքների համադրումը, ազգային արժեքային նոր համակարգի ձևավորումը: Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:

**Ավատատիրության հաստատումը:** Նոր հասարակական հարաբերությունների ձևավորումը: Ավատատիրական աստիճանասանդուղքը: Պետական կառավարման համակարգը: Բանակը: Բնակչությունը, քաղաքային կյանքը:

**Արշակունյաց թագավորությունը 301-428 թվականներին:** Պայքար թագավորական իշխանության ուժեղացման համար: Տրդատ III Մեծի գործունեությունը: Երկրի հետագա ամրապնդման Խոսրով III Կոտակի քաղաքականությունը: Տիրան թագավորը:

Պետություն-եկեղեցի հարաբերությունները: Արշակ II-ի քաղաքականությունը: Ներսես Մեծ կաթողիկոսը: Աշտիշատի առաջին եկեղեցական ժողովը: Հայ-պարսկական պատերազմները, հետևանքները:

Պապ թագավորի գահակալումը: Ձիրավի հաղթական ճակատամարտը: Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը: Թագավորության թուլացումն ու անկումը: Արշակունիների պետության թուլացման պատճառները: Մեծ Հայքի 387 թ. բաժանումը: Թագավորության վերամիավորումը Խոսրով IV և Վռամշապուհ արքաների օրոք: Հայ Արշակունիների թագավորության անկումը, դրա հետևանքները:

**Հայկական պետականության նախարարական շրջանը:** Հայոց պետականության անցումը նախարարական համակարգին: Մարզպանական Հայաստանը. պարսից արքունիքի քաղաքականությունը: Վարդան Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական ապստամբությունը: Ավարայրի ճակատամարտը, պատմական նշանակությունը: Վահանանց ապստամբության պատճառները, սկիզբը և ընթացքը: Նվարսակի պայմանագիրը: Արևելյան Հայաստանի ինքնուրույնության հաստատումը. Վահան Մամիկոնյանը՝ Հայոց տանուտեր:

Հայաստանը VI - VII դարերում: Արևմտյան Հայաստանը VI դ. առաջին տասնամյակներին: Հուստինիանոս I-ի ռազմավարչական վերափոխությունները:

Արևելյան Հայաստանի վիճակը VI դարի սկզբներին: Դվինի 506 թ. և 554 թ. եկեղեցական ժողովները: Հայոց 571 թ. ապստամբության վերաճումը պարսկա-բյուզանդական պատերազմի: Հայաստանի բաժանումը 591թ.:

Արաբական նվաճումները և Հայաստանը: Հայ-արաբական պայմանագրի կնքումը Թեոդորոս Ռշտունու կողմից: Հայաստանի անկախության վերականգնումը VII դ. երկրորդ կեսին:

Նախարարական համակարգը արաբների տիրապետության շրջանում: «Արմինիա» փոխարքայության կազմավորումը խալիֆայության կազմում: Հայ նախարարների և Հայոց եկեղեցու իրավունքների սահմանափակման արաբների քաղաքականությունը: VIII դ. հակաարաբական ապստամբությունները և դրանց նշանակությունը: Հայկական իշխանական տների հզորացումը IX դ. առաջին կեսին: 850-855 թթ. ապստամբությունը, դրա նշանակությունը:

## ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

**Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը:** Հայոց թագավորության վերականգնման նախադրյալները: Աշոտ I Բագրատունի: Հայ-բյուզանդական հարաբերությունները և պայքարը արաբական նվաճողների դեմ: Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացումը: Աշոտ II Երկաթ: Աբաս Բագրատունի: Աշոտ III Ողորմած: Անին Հայաստանի մայրաքաղաք: Սմբատ II Տիեզերակալ: Հայկական թագավորությունների համադաշնությունը: Հայաստանի հզորացումը Գագիկ I-ի օրոք:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Հայոց եկեղեցին: Ավատատիրական հարաբերությունների զարգացումը: Բնակչությունը: Բագրատունյաց թագավորության տնտեսական կյանքի վերելքը:

Թագավորության թուլացման պատճառները: Պայքար Բյուզանդիայի դեմ. Գագիկ II: Անիի թագավորության անկումը:

**Հայոց պետականությունը XI-XIV դարերում:** Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: Հայերի զանգվածային արտագաղթը: Հայական թագավորությունները և իշխանությունները: Կարսի, Սյունիքի, Լոռու թագավորությունները: Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխությունները:

Ազատագրական պայքարը մահմեդական ամիրայությունների դեմ: Զաքարյանների գլխավորած իշխանությունները Հայաստանում: Իշխանական նոր տները: Մոնղոլական ասպատակությունները: Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ: Հայկական իշխանական տները XIII դարի երկրորդ կեսին - XIV դարում:

**Հայկական պետությունը Կիլիկիայում:** Հայկական պետականության ստեղծման նախադրյալները Կիլիկիայում: Հայկական իշխանությունների առաջացումը Կիլիկիայում: Ռուբեն I: Խաչակիրները և Կիլիկիայի հայերը: Ռուբինյան իշխանության ընդլայնումը և ամրապնդումը: Հայոց եկեղեցու նոր թեմերի ձևավորումը, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա: Լևոն I Մեծագործ, Կիլիկիայի Հայկական թագավորության հռչակումը: Հեթումյանների արքայատոհմի հաստատումը: Կիլիկիայի հայկական պետության հարաբերությունները խաչակիրների, մոնղոլների և մամլուքների հետ: Պապականությունը և Կիլիկյան Հայաստանը, ունիթորական և հակաունիթորական շարժումը: Թագավորության թուլացումը և անկումը: Պետականության պահպանումը Կիլիկիայի լեռնային շրջաններում:

Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Գյուղատնտեսությունը, արհեստները: Ծովային և ցամաքային առևտուրը, կապերը այլ երկրների հետ:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Ավատատիրական հարաբերությունների առանձնահատկությունները: Քաղաքները և քաղաքային կյանքը: Բնակչությունը: Արևելքի ու Եվրոպայի հետ քաղաքակրթական շփումները, փոխազդեցությունները:

## ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

**Կորուստների և վերականգնումի ժամանակաշրջան** (XV դար-XVII դարի առաջին **կես):** Հայկական անկախ պետականության անկման հետևանքները: Պայքար վաչկատուն ցեղերի դեմ: Ազատագրական լեգենդը: Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում: Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին: Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները, դրանց հետևանքները:

Հայաստանի ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը (Ստեփանոս Սալմաստեցի, Աբգար Դպիր Թոխաթեցի): Հայկական իշխանությունները հայոց պետականության կրողներ. Արցախի, Սյունիքի մելիքությունները, Ջեյթունի իշխանությունը:

**Հայկական գաղթավայրերը:** Հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: «Գաղութ» և «համայնք» հասկացությունները: Գաղթավայրերի ներդրումը ազգային ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանման, զարգացման գործում: Հիմնական գաղթավայրերը:

## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

**Ազգային – քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը:** Հայկական մշակույթի վերելքի նախադրյալները: Մաշտոցյան գրերի գյուտը, նշանակությունը: Դպրոցը: Մշակույթի Ոսկեդարը: Թարգմանական և ինքնուրույն գրականության սկզբնավորումը: Մեսրոպատառ հայ պատմագրության հիմնադրումը: Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը», ազգային գաղափարախոսության ձևակերպումը: VII - VIII դարերի պատմագրությունը: Փիլիսոփայություն: Բնափիլիսոփայություն. Անանիա Շիրակացի: Եկեղեցական կանոնական գրականություն: Արվեստը:

**Մշակույթի վերելքը X-XIV դարերում:** Հայ մշակույթի վերելքի պատմական պայմանները: Կրթական գործի առաջընթացը: Բարձրագույն դպրոցներ և համալսարաններ. Անի, Սիս, Գլաձոր, Տաթև: Պատմագրությունը: Իրավագիտությունը: Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը. Գրիգոր Տաթևացի: Գրականությունը: Արվեստը: Հայկական մշակութային վերածննդի հիմնական արդյունքները:

**Մշակույթը դժվարին ժամանակներում (XV դար – XVII դարի առաջին կես):** Հայկական մշակույթի պահպանման և զարգացման պայմանները: Դպրոցը: Պատմագրությունը: Բնագիտությունը և բժշկությունը: Տպագրությունը: Արվեստը:

## ՆՈՐ ՇՐՋԱՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** Նոր շրջանի պատմության բովանդակությունը, առանձնահատկությունները, հիմնական արդյունքները:

## ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
## (XVII դարի երկրորդ կես – XIX դարի առաջին կես)

**Ազատագրական շարժումները XVII դ. երկրորդ կեսին - XVIII դարում:** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները: Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը, Մահտեսի Մուրադ Բաղիշեցի, Հովհաննես

Թուրքունջի: Էջմիածնի 1677թ. ժողովը, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակության գործունեությունը: Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու ծրագրերը: Օրու գործունեության նշանակությունը:

**Արցախի և Սյունիքի զինված պայքարը:** Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում XVIII դարի սկզբին: Ռազմական ամրությունների (սղնախներ) կազմավորումը Արցախում: Ռուսական զորքերի 1722 թ. Կասպիական արշավանքը: Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս: Երևանի հերոսական պաշտպանությունը: Շարժման ծավալումը Արցախում:

Ազատագրական պայքարը Սյունիքում: Դավիթ Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Հալիձորի պաշտպանությունը: Մխիթար սպարապետ: Ապստամբության ավարտը: Զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունը Արցախում (Խամսայի մելիքությունններ):

**Ազատագրական պայքարը XVIII դարի երկրորդ կեսին:** Պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմին. նրա գործունեության նշանակությունը: Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը: Հայաստանի ազատագրության Հյուսիսային (Հովսեփ արք. Արղության) ծրագիրը: Մադրասի հայրենասիրական խմբակը: Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» և Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունները: Հայաստանի ազատագրության Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը:

Հայոց եկեղեցին և ազատագրական պայքարը XVIII դարում:

**Հայոց պետականության վերականգնման խնդիրը XIX դարի առաջին կեսին: Արևելյան Հայաստանը և Ռուսաստանը:** Քաղաքական կացությունը Անդրկովկասում, տերությունների շահերի բախումը: Ռուս – պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայերի մասնակցությունը պատերազմներին և ակնկալիքները: Ներսես Աշտարակեցի: Պարսկահպատակ հայերի վերադարձը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ: Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մարզը: Հայոց եկեղեցին և ցարական կառավարության քաղաքականությունը. 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

**Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:** Արևելյան հարցը և ռուս – թուրքական պատերազմները, դրանց արդյունքները: Հայերի մասնակցությունը պատերազմին և ակնկալիքները: Արևմտահայերի տեղափոխությունը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ: Արևմտահայության ծանր դրությունը 1830-1840-ական թվականներին:

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում:** Ագրարային վերափոխման իրականացումը Արևելյան Հայաստանում: Քաղաքացիական բարեփոխումները: Գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը հետռեֆորմյան շրջանում: Քաղաքային կյանքը: Հայ բուրժուազիայի և բանվորության ձևավորումը: Սոցիալական շարժումները: Ցարական կառավարության քաղաքականությունը ազգային հարցում:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հայ գյուղացիության հողազրկումը Օսմանյան կայսրությունում: Քաղաքները: Արհեստներն ու առևտուրը: Մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը:

**Հայկական հարցի միջազգայնացումը:** Արևելյան հարցի սրումը, մեծ տերություն-ների միջև հակասությունները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմ պատճառները, ընթացքը, արդյունքները: Հայկական հարցը՝ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Եվրոպական տերությունների և Ռուսաստանի միջև հակամարտությունը: Հայկական պատվիրակությունը Եվրոպայում: Բեռլինի կոնգրեսը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի տարբերությունները:

Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: «Երկաթե շերեփի» գաղափարը:

**Ազգային - հասարակական զարթոնքը: Հայ քաղաքական կյանքի կազմակերպումը:** Հայ հասարակական-քաղաքական հոսանքները: Հայկական պահպանողականությունը, առանձնահատկությունները: Լիբերալիզմի հիմնական գաղափարները, դրսևորումները հայ իրականության մեջ: Ազգայնականությունը հայ իրականության մեջ: Սոցիալիզմը հայ իրականության մեջ:

**Ազգային-հասարակական շարժումները:** Արևմտահայերի սահմանադրական շարժումը, «Ազգային սահմանադրությունը», դրա նշանակությունը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և դրա պատմական նշանակությունը:

Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացումը: Ազատագրական զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը. Մկրտիչ Խրիմյան, Րաֆֆի, Ծերենց, Մուրացան, Ռ. Պատկանյան, Մ. Շահազիզ:

Ազատագրական խմբակների և կազմակերպությունների ստեղծումը, դրանց ծրագրերն ու գործունեությունը, նշանակությունը:

**Հայ ազգային կուսակցությունները:** Կուսակցությունների առաջացման նախադրյալները և պատմական պայմանները:

Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը: «Արմենիա» թերթը: Արմենականները 1890-ական թթ.: Հնչակյան կուսակցության հիմնադրումը: Կուսակցության ծրագիրը: «Հնչակ» թերթը: Լոնդոնի համագումարը և կուսակցության բաժանումը երկու մասի: Հ.Յ. Դաշնակցություն: Հիմնադրումը: Կուսակցության

ծրագիրը: «Դրոշակ» թերթը: Դաշնակցությունը որպես հայ հասարակական-քաղաքական կյանքի գերիշխող կուսակցություն: Կուսակցությունների գործունեության նշանակությունը:

**Հայ ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը: Հայդուկային շարժումը:** Հայդուկային շարժման առաջացման պատճառները: Նշանավոր հայդուկներ. Արաբո, Աղբյուր Սերոբ, Հրայր, Մեծն Մուրադ, Անդրանիկ, Գևորգ Չաուշ և ուրիշներ: Արևմտահայերի զինված պայքարը օսմանյան տիրապետության դեմ: Ֆիդայական շարժումը և հայ քաղաքական կուսակցությունները: Ֆիդայական շարժման վերելքը 1890-ական թվականներին:

Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը: 1894-1896 թթ. զանգվածային կոտորածները: Հայ ազատագրական պայքարը 1894-1896 թվականներին: Հայկական հարցը և մեծ տերությունները: 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Ազատագրական պայքարի դասերը, նոր մարտավարության ընդունումը:

**Ազատագրական շարժումները XX դարի սկզբին**

**Արևելյան Հայաստանը:** Սոցիալ-տնտեսական դրությունը: 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքը: Հայերի հակացարական շարժումը, արդյունքները: Հայ - թաթարական (ադրբեջանական) ընդհարումները ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին: Հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, արդյունքները: Արևելյան Հայաստանը 1907-1914 թվականներին. սոցիալական և քաղաքական իրավիճակը: Ցարիզմը և Հայոց եկեղեցին: Հայ հոգևորականության մասնակցությունը ազատագրական շարժմանը:

**Արևմտյան Հայաստանը:** Արևմտահայերի ծանր վիճակը: Զինված ընդհանուր ապստամբության նախապատրաստումը: Առաքելոց վանքի կռիվը (1901 թ.): Սասունի 1904 թ. ապստամբությունը, դրա նշանակությունը: Համիդյան վարչակարգի ընդդիմադիր ուժերի համախմբման փորձերը: Երիտթուրքերի 1908 թ. հեղաշրջումը: Հայ ազատագրական շարժման նոր մարտավարությունը, քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: Երիտթուրքերը հայերի ոչնչացման համիդյան ծրագրի շարունակողներ. հայերի կոտորածը Կիլիկիայում: Պանթուրքիզմը երիտթուրքերի պետական քաղաքականության առանցք:

Հայկական հարցը 1912-1914 թվականներին: Բալկանյան պատերազմը և Հայկական հարցի վերաբացումը: Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը, գործունեությունը: Մեծ տերությունները և հայկական բարենորոգումների խնդիրը: 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը:

**Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին:** Աշխարհամարտի սկիզբը: Ռուսաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական պլանները Մերձավոր Արևելքում: Աշխարհամարտի կովկասյան ճակատը. ռազմական գործողությունների ընթացքը, արդյունքները: Հայ կամավորական շարժումը. ջոկատների ստեղծումը, մասնակցությունը մարտական գործողություններին: Հայկական հարցը և

տերությունները. Սայքս – Պիկոյի համաձայնագիրը: Ցարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում:

**Հայոց Մեծ եղեռնը:** Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն: Ցեղասպանության իրագործման փուլերը: Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին: Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը: Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու պատժումը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

**Հայաստանը 1917 թ. ռուսական հեղափոխությունների շրջանում:** Փետրվարյան հեղափոխությունը. ցարիզմի տապալումը: Օզակոմի ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Արևմտահայերի առաջին համագումարը. Արևմտահայ Ազգային խորհրդի ստեղծումը: Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Արևելահայերի համագումարը: Արևելահայ Ազգային խորհրդի ստեղծումը:

Հոկտեմբերյան հեղաշրջումը: Իրադրությունը Անդրկովկասում և կովկասյան ճակատում: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական հողերի բռնակցումը Թուրքիային:

**Անկախության վերականգնման ճանապարհին:** Ռուսական զորքերի հեռացումը կովկասյան ճակատից: Հայկական ազգային զորամիավորումների ստեղծումը: Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայկական միասնական ճակատի ստեղծման ծրագիրը: Բաքվի կոմունան և նրա պայքարը թուրք զավթիչների դեմ:

Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը: Հայոց անկախ պետականության վերականգնումը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ
### Հայկական մշակույթը (XVII դ. երկրորդ կես - XIX դ. առաջին կես):
### Մշակույթը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում:

Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Լուսավորականությունը որպես աշխարհի մասին պատկերացումների նոր համակարգ. հայկական լուսավորականությունը: Դպրոցները: Տպագրությունը: Առաջին հայ պարբերականը՝ «Ազդարար»: Գիտությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Պատմագիտությունը: Գրականությունը: Արվեստը: **XIX դարի առաջին կեսի մշակութային զարգացման արդյունքները:** Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցը: Գիտությունը: Գեղարվեստական գրականությունը: Արվեստը:

**Մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:** Մշակույթի զարգացման նախադրյալները: Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցական ցանցը, հայկական դպրոցները գաղթավայրերում: Գիտության զարգացումը: Հումանիտար գիտությունները: Պատմագիտությունը Փիլիսոփայությունը: Լեզվաբանությունը և գրականագիտությունը: Բնական գիտությունների զարգացումը:

Մամուլը: Կուսակցական մամուլի առաջացումը: Մամուլի դերը: Գրականության զարգացումը, հասարակական նշանակությունը: Նշանավոր գրողները: Արվեստը և ճարտարապետությունը: Հայկական մշակույթի նվաճումները նոր շրջանում:

**Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում (XVII դ. երկրորդ կես-XX դ. սկզիբ):** Գաղութահայ հիմնական կենտրոնները, նրանց առջև ծառացած խնդիրները: Ազգային-հասարակական և մշակութային կյանքը հայ գաղթավայրերում: Հայոց եկեղեցու գործունեությունը գաղթավայրերում: Հայ գաղթավայրերի դերը ազգային մշակույթի պահպանման և զարգացման գործում:

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:** Հայոց պատմության նորագույն շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները: Հայաստանի առաջին Հանրապետությունը: Հայոց պատմության խորհրդային շրջանը: Հայկական անկախ պետականության վերականգնումը և զարգացումը: Ազգային հիմնախնդիրները արդի փուլում: Հայկական մշակույթի նվաճումները:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

**Նորանկախ պետության ներքին կյանքը: Հանրապետության կայացումը:** Հայաստանի հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների ստեղծումը: Ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայերենը՝ պետական լեզու: Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

**Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը:** Սոցիալ – տնտեսական դրությունը: Գաղթականության և ներգաղթի խնդիրը: Ագրարային վերափոխումները, արդյունաբերության և առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումները: ԱՄՆ–ի օգնությունը Հայաստանի Հանրապետությանը, Ամերկոմի գործունեությունը:

Քաղաքական կուսակցությունները: Հասարակական կազմակերպությունները: Արևմտահայերի 2-րդ համագումարը:

Դպրոցական գործի կազմակերպումը: Հայաստանի համալսարանի հիմնադրումը: Գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան: Հանրային գրադարանի, պետական թանգարանի հիմնադրումը:

Հայ առաքելական եկեղեցին հայոց անկախ պետականության վերականգնման և կայացման շրջանում:

**Երկրի կայունությանը սպառնացող վտանգներ:** Թուրք – թաթարական խռովությունները, դրանց ճնշումը, արդյունքները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը. ընթացքը, պարտությունը, հետևանքները:

**Հանրապետության միջազգային դրությունը: Հայկական հարցը:** Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Տերությունների դիրքորոշումն ու քաղաքականությունը Անդրկովկասի և Հայաստանի նկատմամբ: Հայ-վրացական հարաբերությունները. 1918 թ. հայ-վրացական պատերազմը, Լոռու «չեզոք գոտու» ստեղծումը: Զանգեզուրի պայքարը 11-րդ կարմիր բանակի և Ադրբեջանի դեմ: Պայքարը Ադրբեջանի ոնկրտումների դեմ Ղարաբաղում, Նախիջևանում, Շարուր - Դարալագյազում:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը: Հայկական երկու պատվիրակությունների գործունեությունը, միացյալ ծրագրի կազմումը: 1919 թ. մայիսի 28-ին Անկախ և Միացյալ

Հայաստանի հռչակումը ՀՀ խորհրդարանի կողմից: Հայկական հարցը Սան-Ռեմոյի կոնֆերանսում: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը:

**Կիլիկիահայության աղետը:** Հայկական լեգեոնը: Մ. Տամատյանի կառավարության ստեղծումը: Ֆրանսիայի դիրքորոշումը և Կիլիկիայի նվաճումը Թուրքիայի կողմից:

**Հայ–ռուսական հարաբերությունները:** Հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Խորհրդային Ռուսաստանի աղրբեջանամետ դիրքորոշումը: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը:

**Առաջին Հանրապետության անկումը**: Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալական շարժումը և Հայաստանը: Բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումը: Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականությունը:

1920 թ. թուրք – հայկական պատերազմի սկիզբը, ընթացքը: Հայ-թուրքական բանակցությունները, Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Հայհեղկոմի նոյեմբերի 29-ի հռչակագիրը Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը: Հայաստանի խորհրդայնացումը:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

**Խորհրդային Հայաստանը 1920-1922 թվականներին:** Խորհրդային իշխանության մարմինների՝ Հեղկոմների, կազմավորումը և գործունեությունը: «Ռազմական կոմունիզմ»-ի քաղաքականության կիրառումը և դրա հետևանքները: 1921թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում: Ապստամբության պարտությունը և խորհրդային իշխանության վերահաստատումը: ՀՍԽՀ նոր կառավարության՝ Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ) կազմավորումը:

Անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը (նէպ): Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և արտաքին օգնությունը:

ՀՍԽՀ խորհուրդների ընտրությունները և առաջին համագումարը: ՀՍԽՀ Սահմանադրությունը: Հայաստանի Կարմիր բանակը:

Խորհրդային հանրապետությունների տնտեսական և ռազմաքաղաքական միավորման քաղաքականությունը: Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության (ԱԽՍՀԴՄ) ստեղծումը: Անդրկովկասյան դաշնային հանրապետության (ԱԽԴՍՀ) ստեղծումը: ԽՍՀՄ-ի կազմավորումը:

**Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը:** Զանգեզուրի գոյապայքարը (1920թ. վերջ – 1921թ. հուլիս): «Լեռնահայաստանի» հռչակումը: Գարեգին Նժդեհ: Զանգեզուրի միացումը ՀՍԽՀ-ին:

Հայկական տարածքների հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում: 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը:

Հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերությունները ու սահմանների հարցը: Լոռու «Չեզոք գոտու», Ջավախքի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրները:

Հայ-իրանական հարաբերությունները: Հանրապետության դիվանագիտական կապերը: Հայկական հարցը Լոնդոնի 1921թ. և Լոզանի 1922-1923թթ. խորհրդաժողովներում:

**Սոցիալիստական հասարակության ձևավորումը Հայաստանում 1922-1941թվականներին : Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը:** Տնտեսության վերականգնումը նէպի հիմքի վրա: Նէպի կասեցումը:

**Խորհրդային Հայաստանի ինդուստրացումը:** Ինդուստրացման աղբյուրները, տեմպերը: Հնգամյա ծրագրերը: Ինդուստրացման արդյունքները: Անցումը կառավարման վարչահրամայական եղանակի:

**Գյուղատնտեսության կոլեկտիվացումը:** Գյուղի վիճակը 1920 - ական թթ. վերջերին: Անցում կոլեկտիվ տնտեսությունների ստեղծմանը: Համատարած բռնի կոլեկտիվացումը: Կոլեկտիվացման արդյունքները և հետևանքները:

**Հասարակական-քաղաքական կյանքը:** Հասարակության սոցիալական կազմի փոփոխությունները: Կոմունիստական մենիշխանության հաստատումը: Քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասերը: Անհատի պաշտամունքի ձևավորումը: Ամբողջատիրությունը բոլշևիզմի օրինաչափ հետևանք: Խորհրդային պետության ազգային քաղաքականությունը: Զանգվածային բռնությունները:

Պետության անհանդուրժողական քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն:

***Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:*** Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: ՀԽՍՀ-ն ֆաշիստական Գերմանիայի և Թուրքիայի ծրագրերում: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Հայ ռազմիկների մասնակցությունը մարտական գործողություններին: Խորհրդային Միության հայ հերոսները: Խորհրդային բանակի հայ զորավարները: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին:

Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Հայկական լեգեոնի կազմակերպումը, նպատակը: Սփյուռքահայ հակաֆաշիստական կազմակեր-պությունները: Հայ առաքելական եկեղեցին պատերազմի տարիներին:

**Հետպատերազմյան տարիները (1945-1985 թվականներ):** Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը: Բնակչության սոցիալական վիճակը և փոփոխությունները:

Հասարակական-քաղաքական կյանքը: Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: «Մեծ հայրենադարձության» կազմակերպումը: Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949թ. զանգվածային աքսորը:

Անհատի պաշտամունքի քննադատումը և հետևանքների վերացման սկիզբը: Հայաստանը խրուշչովյան «ձնհալի» տարիներին: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը: Յա. Զարոբյան:

Խորհրդային Հայաստանը լճացման ժամանակաշրջանում: ՀԽՍՀ-ում արդյունաբերական նոր ճյուղերի հիմնումը, արդյունաբերության զարգացումը շրջաններում: Բնապահպանական խնդիրների սրումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Լճացման երևույթները տնտեսության մեջ և սոցիալական բնագավառում: Հակասություններ պաշտոնական գաղափարախոսության և հասարակական գիտակցության միջև: Այլախոհությունը Հայաստանում:

**Խորհրդային Հայաստանը վերակառուցման շրջանում: Վերակառուցման քաղաքականությունը:** Վերակառուցման տեղապտույտը Հայաստանում և լճացման երևույթների խորացումը: Վերափոխումները քաղաքական համակարգում, բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը:

**Արցախյան շարժման նոր փուլը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը: ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 1988թ-ի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը: ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթի դեպքերը, դրա խեղաթյուրված որակումը կենտրոնի կողմից: Շարժման հետագա վերելքը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ստեղծումը: ՀԽՍՀ գերագույն խորհրդի 1988թ-ի հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը Արցախի հիմնահարցի վերաբերյալ: Հայերի բռնագաղթեցումը Ադրբեջանից: «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունը: Կառավարման հատուկ կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ-ում: Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի 1989թ-ի դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Բաքվի դեպքերը (1990թ. հունվար): Ադրբեջանի ոտնձգությունները Հայաստանի սահմաններում: Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և հանրապետության սահմանների պաշտպանությունը:

1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը: Երկրաշարժի ավերիչ հետևանքները: ԽՍՀՄ հանրապետությունների, արտասահմանյան երկրների և Սփյուռքի օգնությունը:

Խորհրդային բանակի և Ադրբեջանի ՄՀՕՋ-ի գործողությունները ԼՂԻՄ-ում 1991թ.: «Օղակ» գործողությունը: Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը:

**Հայաստանի անկախության գործընթացը:** ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիսի 20-ի այլընտրանքային ընտրությունները: Հայաստանի անկախության մասին 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը: Ազգային շարժումների ուժեղացումը ԽՍՀՄ-ում: 1991թ. օգոստոսյան խռովությունը: ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

**Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության պետականության կայացման գործընթացը:** 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն. ՀՀ անկախության հռչակումը: ՀՀ իշխանության մարմինների ստեղծումը: ՀՀ խորհրդանիշները՝ զինանշան, դրոշ, օրհներգ: Ազգային բանակաշինությունը: Անցումը

նախագահական կառավարավարման ձևին: ՀՀ Սահմանադրության ընդունումը (1995թ. հուլիս), ՀՀ Սահմանադրության նոր բարեփոխված տարբերակը (2005թ. նոյեմբեր):

**Ներքին դրությունը:** Տնտեսական կացությունը: Տնտեսական վերափոխումները: Հողի սեփականաշնորհումը: Բանկային նոր համակարգի ստեղծումը: Ֆինան-սավարկային և հարկային քաղաքականությունը: Արտահանումը և ներմուծումը:

Բնակչության զբաղվածությունը և սոցիալական վիճակը: Զանգվածային գործազրկությունը և արտագաղթը: Հասարակության սոցիալական բևեռացումը:

**Հասարակական - քաղաքական կյանքը:** Հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացումը: Հայ առաքելական եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեծդման ու կայացման տարիներին: Հայ ավանդական կուսակցությունների վերադարձը Հայաստան, նոր քաղաքական կուսակցությունների ստեղծումը: Ազգային ժողովի և նախագահական ընտրությունները: Քաղաքական ճգնաժամի խորացումը և ՀՀ նախագահի հրաժարականը 1998թ.: Քաղաքական ուժերի նոր վերադասավորումը: 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը և նրա հետևանքները: Ներքաղաքական ճգնաժամը և ներքաղաքական զարգացումները 1999-2007թթ.: 2007թ. խորհրդարանական և 2008 թ. նախագահական ընտրությունները: Ներքաղաքական նոր զարգացումները:

**ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:** Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: Հայաստանը ԱՊՀ, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ:

Հարաբերությունները հարևան երկրների հետ: Հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ : Հայ-ռուսական հարաբերությունները: Դիվանագիտական հարաբերությունները արևմտաեվրոպական երկրների հետ: ՀՀ - Եվրամիություն հարաբերությունները: ՀՀ - ԱՄՆ դիվանագիտական կապերի հաստատումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայոց ցեղասպանության ճանաչումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից 1991-2008 թվականներին:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը :** Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հռչակումը և կայացումը: ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը: Անցում կառավարման նախագահական համակարգի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդանիշները. զինանշան, դրոշ, օրհներգ: Բանակը:

**Ադրբեջանա-Ղարաբաղյան պատերազմը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը: Շուշիի ու Լաչինի ազատագրումը (1992թ. մայիս): Ադրբեջանական զորքերի հարձակումը ԼՂՀ-ի վրա: Պատերազմի հետագա ընթացքը: Ղարաբաղյան բանակի հաղթանակը և զինադադարի կնքումը (1994թ. մայիս): Արցախյան ազատամարտի հերոսները:

**ԼՂՀ արտաքին քաղաքականությունն ու միջազգային դրությունը:** Արցախյան հիմնախնդիրը միջազգային տարբեր ատյաններում (ԵԱՀԽ, ՄԱԿ և այլն): ԵԱՀԽ Մինսկի խմբի գործունեությունը: Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ

գագաթնաժողովներում: Ղարաբաղյան հիմնախնդրի փուլային և փաթեթային տարբերակները: Հարցի նոր քննարկումներ միջազգային ատյաններում:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

**Հայկական Սփյուռքը 1920-1939 թվականներին:** Սփյուռքի առաջացումը: Գլխավոր կենտրոնները: Սփյուռքահայ կուսակցությունները: Հայ Առաքելական եկեղեցին Սփյուռքում: Համասփյուռքյան կրթամշակութային և բարեգործական կազմակերպությունները: Հայկական հարցը և սփյուռքահայությունը:

Խորհրդային Հայաստան - Սփյուռք հարաբերությունները: Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): «Հայկական օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում: Ֆ.Նանսեն: Սփյուռքահայերի հայրենադարձությունը:

**Սփյուռքը 1946-1991թվականներին:** Հայրենադարձությունը: Հասարակական-քաղաքական կյանքը: Հայ դատի հանձնախմբերը: Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայրենիք - Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը:

**Հայկական Սփյուռքը 1991-2008 թվականներին:** Զանգվածային արտագաղթը և սփյուռքի ստվարացումը: Սփյուռքահայության տեղաշարժերը 1990-ական թթ.: Սփյուռքի հասարակական - քաղաքական կյանքը: Հայ դատի համար պայքարի ակտիվացումը: Նոր մոտեցումներ հայրենիք-սփյուռք հարաբերություններում: Եկեղեցու դերը սփյուռքում: Սփյուքի դերը համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման գործում: Սփյուռքահայ երիտասարդության արդի հիմնախնդիրները, ազգային արժեքներն ու «վերադարձ»-ի գաղափարը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԾՐՋԱՆՈՒՄ

**Մշակույթը 1920-1941թվականներին: Խորհրդային Հայաստանի մշակույթը:** Առաջին միջոցառումները կրթության և մշակույթի բնագավառում: Տարրական և յոթնամյա դպրոցներ: Միջնակարգ մասնագիտական և բուհական համակարգի ձևավորումն ու զարգացումը: Երևանի պետական համալսարանը: Գիտահետազոտական առաջին կենտրոնները: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը: Հասարակական և բնական գիտությունները:

Խորհրդահայ գրականությունը: Արվեստը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը: Խորհրդահայ մշակույթը կոմունիստական գաղափարախոսության ոլորտում:

**Սփյուռքի հոգևոր-մշակութային կյանքը:** Սփյուռքահայ դպրոցը: Գրականությունը: Արվեստը: Հայագիտությունը: Ազգապահպանության հիմնախնդիրը:

**Հայկական մշակույթի վերելքը** (1945-1991 **թվականներ):**

**Խորհրդային Հայաստանի մշակույթը:** Մշակույթի զարգացման հիմնական միտումները, արդյունքները: Կրթական համակարգը: Գիտությունը: Գիտությունների ակադեմիան: Գիտահետազոտական կենտրոնները, Բյուրականի աստղադիտարանը: Հայագիտության զարգացումը, ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը:

Գրականությունը: Արվեստը. երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը: Ճարտարապետությունը: Գիտական և մշակութային կապերը:

**Սփյուռքահայ մշակույթը:** Դպրոցը: Կրթամշակութային ցանցի նշանակությունը ազգային նկարագրի պահպանման խնդրում: Սփյուռքահայ գրականությունը, մամուլը, արվեստը: Հայրենիք - Սփյուռք մշակութային կապերի ամրապնդումը:

**Հայկական մշակույթի արդի վիճակը:** Մշակույթի դժվարին վիճակը, դրա հաղթահարման փորձերը: Գիտակրթական վերափոխումների քաղաքականությունը: Կրթական նոր համակարգի հիմնումը, դրա զարգացման միտումները: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը: Ճարտարապետությունը: Խորհրդային Հայաստանի մշակույթի նվաճումները, բացթողումները: Սփյուռքահայ մշակույթը. դերը հայապահպանության և սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման գործում:

Հետարդյունաբերական հասարակության զարգացման միտումները և Հայաստանը: Մշակույթի զարգացման հիմնական միտումները արդի փուլում:

# ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Հայոց պատմություն» առարկայի ուսուցման գործընթացում կարող են կիրառվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝ տեսական նյութի հաղորդում, քննարկումներ, բանավեճեր, բանավոր հարցում, գրավոր թեմատիկ, գործնական և ինքնուրույն աշխատանքներ, էքսկուրսիաներ, կինոդիտումներ, էլեկտրոնային ուսումնական նյութերի հետ աշխատանք և այլն:

Մեթոդական ձեռնարկներում կտրվեն գործնական աշխատանքների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ):

Բոլոր հոսքերում հանձնարարվում է վերլուծել տեսական բնույթի խնդիրներ, քննարկել առօրյա կյանքից վերցված օրինակներ, որոնց հիման վրա արվող ընդհանրացումները, քննարկումները և գնահատումները մեծապես կնպաստեն սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը և տրամաբանական մտածողության ձևավորմանը:

Ուսուցման գործընթացում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը սովորողների՝ պատմական տարբեր երևույթները համակողմանի ընկալելու, վերլուծելու, համեմատելու, համադրելու և գնահատելու կարողությունները զարգացնելու, այնպես էլ ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու հնարավորությունն ընդլայնելու տեսանկյունից:

| Ա մակարդակ - միջին | Բ մակարդակ - բարձր |
| --- | --- |

<table>
<tr>
<td>
Պատկերացում ունենա՝<br><br>
- հայ պատմագիտության անցած ուղու վերաբերյալ:<br>
- Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում Հայաստանի մասին վկայությունների վերաբերյալ:<br><br>
Կարողանա՝<br><br>
- ներկայացնել հայկական քաղաքակրթության առաջացման ակունքները, հայկական վաղ պետական կազմավորումները,<br>
- բացատրել Վանի թագավորության հզորացման և անկման պատճառները,<br>
- ներկայացնել Վանի թագավորության դերը Հայոց պատմության մեջ:<br><br>
Իմանա՝<br><br>
- Հին շրջանում Հայաստանի միջազգային հարաբերությունների մասին:<br><br>
Կարողանա՝<br><br>
- վերլուծել Հայկազուն Երվանդյանների թագավորության մասնատման հետևանքները:<br>
- արժևորել արտաքին գործոնը ճկուն կերպով օգտագործելու՝ Արտաշես ստրատեգոսի կարողությունը,<br>
- վերլուծել Արտաշես I–ի ներքին ու արտաքին քաղաքականությունը, գնահատել նրա գործունեությունը:<br>
- գնահատել Տիգրան II-ի գործունեության արդյունքները և նշանակությունը:<br>
- գնահատել Արտավազդ II-ի որդեգրած արտաքին քաղաքականությունը:<br><br>
Պատկերացում ունենա՝<br><br>
- Հին շրջանում հայ ժողովրդի ապրելակերպի, աշխարհընկալման, նպատակադրումների և գործունեության հիմնական տեսակների մասին:
</td>
<td>
Հիմնարար գիտելիքներ ունենա՝<br><br>
- հայ ժողովրդի ազգային հիմնախնդիրների մասին,<br>
- Հայոց պատմության պարբերացման և յուրաքանչյուր դարաշրջանի առանձնահատկությունների վերաբերյալ:<br>
- հայերի տեղաբնիկ ծագումնաբանության և վաղ պետական կազմավորումների վերաբերյալ,<br>
- Ք.ա IX-I դարերի Հայկական պետությունների քաղաքական ու վարչական կառուցվածքների և տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու տնտեսական իրավիճակի մասին:<br><br>
Կարողանա՝<br><br>
- մեկնաբանել հայ ժողովրդի կազմավորման մասին եղած տեսակետները:<br>
- քննարկել և ներկայացնել Վանի թագավորության և Ասորեստանի, Երվանդունյաց պետության և Աքեմենյան տերության, Մեծ Հայքի Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների օրոք հայ-պարթևական և հայ-հռոմեական քաղաքական առնչությունները և դրանց ազդեցությունը հայոց պետականության զարգացման վրա:<br><br>
Գնահատի՝<br><br>
- Հայաստանի տնտեսական կյանքի մակարդակը՝ այն համեմատելով ժամանակի հարևան պետությունների տնտեսական ձեռքբերումների հետ:<br><br>
Կարողանա՝<br><br>
- Օգտվելով սկզբնաղբյուրներից և այլ տեղեկատվությունից ինքնուրույն գնահատել, վերլուծել, համեմատել փաստերը և մտահանգումներ անել:
</td>
</tr>
</table>

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

## Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

## Ավագ դպրոցի շրջանավարտը ուսումնառության արդյունքում պետք է՝

| | |
|---|---|
| **Կարողանա՝**<br><br>- համեմատել հայ Արշակունի տարբեր թագավորների գործունեությունը,<br>- ներկայացնել և բացատրել հայ Արշակունի թագավորների ժառանգական իշխանության հաստատումը և հայ Արշակունի թագավորներին ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության,<br>- վերլուծել և բացատրել Սասանյան հեղաշրջումից հետո հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման պատճառները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- գնահատել գործակալությունների դերը երկրի կառավարման բնագավառում,<br>- գնահատել հայկական բանակի դերը պետության կյանքում:<br>- մեկնաբանել գյուղական համայնքների և մասնավոր տնտեսությունների դերն ու կարևորությունը հայկական պետության կյանքում,<br>- ներկայացնել հեթանոսական նոր պանթեոնը և տոմարը:<br><br>**Իմանա՝**<br>- Վարդանանց և Վահանանց պատերազմների պատճառները,<br>- պարսկա–բյուզանդական տիրապետու-թյան դեմ հայերի պայքարի պարտության պատճառները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- գնահատել ազատագրական պայքարի ղեկավարներին և նրանց գործունեությունը,<br>- վերլուծել և գնահատել V դարի ապստամբությունների պատմական նշանակությունը:<br>- վերլուծել VIդ. Հայաստանում Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքները: | **Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու հետևանքով ազգային և քրիստոնեական արժեքների համադրման, արժեքային նոր համակարգի ձևավորման և քրիստոնեության ընդունման պատմական նշանակության վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- ներկայացնել և վերլուծել ավատատիրական հարաբերությունների առանձնահատկությունները Հայաստա-նում:<br>- առանձնացնել և վերլուծել IV դարում Հայաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական կյանքի ամենակարևոր խնդիրները ու ներկայացնել դրանց վերաբերյալ տարբեր քաղաքական դիրքորոշումներ,<br>- վերլուծել Արշակունիների պետության անկման պատճառները և դրա հետևանքները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- օգտվելով սկզբնաղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և ներկայացնել սեփական տեսակետը V դարի ազատագրական պայքարի ղեկավարների և քաղաքական տարբեր գործիչների դիրքորոշումների վերաբերյալ:<br>- վերլուծել և մեկնաբանել VI դարում Հայոց եկեղեցու ինքնուրույնության պահպանմանն ուղղված քաղաքականության նշանակությունը: |

| | |
|---|---|
| **Իմանա՝**<br><br>- դեպի Հայաստան արաբների արշավանքների նպատակը, 652 թ. հայ–արաբական պայմանագրի պայմանները, նշանակությունը:<br>- Հայաստանում արաբների քաղաքականության նպատակները և հիմնական ուղղությունները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- համեմատել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ:<br>-ներկայացնել Հայաստանի ինքնավարության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները:<br>- վերլուծել և գնահատել 850-855թթ. համաժողովրդական ապստամբության պատմական նշանակությունը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորության և տեղական թագավորությունների միջև եղած քաղաքական պայքարն ու ենթակայական հարաբերությունները:<br>- մեկնաբանել Բագրատունյաց թագավորության հզորացման և անկման ներքին ու արտաքին պատճառները:<br><br>**Իմանա՝**<br><br>- Զաքարյան իշխանական տոհմի դերը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման գործում:<br>- Ռուբինյանների անկախ իշխանության առաջացման, Կիլիկյան թագավորության ստեղծման ներքին և արտաքին նախադրյալների, Հեթումյան և Լուսինյան արքայատոհմերի թագավորների գործունեության մասին:<br><br>**Կարողանա՝**<br><br>- գնահատել հայրենիքի բնիկ տարածքներից հեռու պետականություն կերտելու հայ ժողովրդի ձգտումը:<br>- բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու՝ Հեթում I-ի քաղաքականության պատճառները,<br>- բացատրել դեպի Արևմուտք քաղաքական շրջադարձի պատճառները, | **Կարողանա՝**<br><br>- վերլուծել նախարարների և Հայոց եկեղեցու իրավունքների սահմանափակման արաբների քաղաքականության հետևանքները:<br>- վերլուծել արաբների դեմ համաժողովրդական պայքարի անհրաժեշտության և արաբական տիրապետության դեմ VIII դ. ազատագրական պայքարի անհաջողության պատճառները,<br>- մեկնաբանել VII-IX դարերի ազատագրական պայքարում հայ իշխանական տարբեր տների դիրքորոշումը:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- Բագրատունիների դարաշրջանի նշանավոր իրադարձությունների, երևույթների ու փաստերի մասին.<br><br>**Գնահատի՝**<br><br>- Հայոց եկեղեցու դերը Բագրատունյաց թագավորության վերականգնման ամրապնդման գործում:<br><br>- Բագրատունիների դարաշրջանի քաղաքական, ազգային, հոգևոր կառույցների, բարձրագույն դպրոցների և անհատների դերը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- օգտվելով սկզբնաղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և ինքնուրույն կարծիք ներկայացնել Բագրատունյաց ժամանակաշրջանի պետական և հոգևոր նշանավոր գործիչների վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- ներկայացնել և վերլուծել Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: |

| | |
|---|---|
| - համեմատել Բագրատունյաց թագավորության և Կիլիկիայի թագավորության տնտեսական և պետական կարգը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- գնահատել հայոց եկեղեցու գործունեությունը, ներկայացնել աղանդավորության ներկայացրած վտանգը:<br>- բացատրել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռն Էջմիածնում վերահաստատելու անհրաժեշտությունն ու նախադրյալները:<br>-գնահատել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Էջմիածնում վերահաստատելու փաստը:<br><br>**Պատկերացում ունենա՝**<br><br>- XVI-XVII դարերի թուրք-պարսկական տիրապետության տակ ապրող հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել 1604 թ. հայերի բռնագաղթի պատճառները և հետևանքները,<br>- համեմատել թուրք-պարսկական իշխանությունների վարած քաղաքականությունն Արևմտյան և Արևելյան Հայաստանում,<br>- ներկայացնել հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVIIդ. վերջին:<br>- բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները:<br>- վերլուծել Արցախի և Սյունիքի զինված պայքարի արդյունքները /XVIIIդ. 20-ական թթ./:<br><br>**Կարողանա՝**<br><br>- համեմատել և վերլուծել նոր ժամանակներում հայոց ազատագրական պայքարի խաղաղ և զինված դրսևորումների դրվագները, առանձին դրվագներում հայերի հաղթանակի կամ պարտության պատճառները, Հայաստանի ազատագրության ծրագրերը: | **Կարողանա՝**<br><br>- մեկնաբանել Կիլիկիայում կրոնական-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և փորձել գնահատել դրանց ազդեցությունը պետության հետագա ճակատագրի վրա:<br><br>**Կարողանա՝**<br><br>- օգտվելով սկզբնաղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և ինքնուրույն կարծիք ներկայացնել Կիլիկյան Հայաստանի պետական և հոգևոր նշանավոր գործիչների վերաբերյալ:<br>- վերլուծել Կիլիկիայի հայկական թագավորության թուլացման ու անկման պատճառները,<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել թուրք-պարսկական տիրապետության հետևանքները հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական կյանքում:<br><br>**Կարողանա՝**<br><br>- Կարողանա իրականացնել ինքնուրույն հետազոտական աշխատանք և գրել ռեֆերատներ XVII-XIX դարերի ազատագրական պայքարի գործիչների վերաբերյալ:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- ազատագրական պայքարի փուլերի, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների և ազատագրական պայքարի նշանավոր գործիչների վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- համեմատել կոնկրետ գաղթավայրերը և վեր հանել տնտեսության մեջ, կենցաղում, ընդունող պետության հետ հարաբերություններում, առևտրում և այլ |

| | |
|---|---|
| - համեմատել և վերլուծել ազատագրական պայքարի հայտնի կազմակերպիչների, ղեկավար գործիչների և քաղաքական ուժերի /կազմակերպություններ, կուսակցություններ/ դերը:<br>- ներկայացնել և վերլուծել հայդուկային շարժման առաջացման պատճառները և դերը:<br>- վերլուծել մեծ տերությունների դիրքո-րոշումը 1894-1896թթ.և 1915-1916թթ. հայերի ցեղասպանության նկատմամբ:<br>- վերլուծել Օսմանյան կայսրության ու Գերմանիայի պատասխանատվությունը հայերի բնաջնջման գործում:<br><br>**Կարողանա՝**<br>- ներկայացնել և վերլուծել XX դարի սկզբի ազատագրական շարժումները:<br><br>**Իմանա՝**<br>- Ցեղասպանության սահմանումը, ցեղասպանություն համարվող հինգ գործողությունները:<br><br>**Կարողանա՝**<br>- վերլուծել Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում և այդ քաղաքականության նկատմամբ արտահայտել սեփական վերաբերմունքը:<br>- վերլուծել եվրոպական մեծ տերությունների պետական շահերն ու դրանցից բխող միջպետական հակասություններն Արևմտյան Հայաստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին:<br><br>**Կարողանա՝**<br>- ներկայացնել և վերլուծել հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները և ընթացքը:<br><br>**Կարողանա՝**<br>- բացատրել Հայաստանի առաջին հանրապետության արտաքին քաղաքականության «Անկախ և Միացյալ Հայաստանի» սկզբունքը,<br>- բացատրել Ամերկոմ, Արմենկոմ, մանդատ (հովանավորություն), առաջադիմական | ասպարեզներում եղած տարբերությունները:<br><br>**Կարողանա՝**<br>- վերլուծել հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշա-կութային կյանքում Հայաստանի քաղաքական մասնատվածության հետևանքները:<br><br>**Կարողանա՝**<br>- օգտվելով աղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ սեփական տեսակետ արտահայտել Հայկական հարցի միջազգայնացման վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br>- վերլուծել1894-1896թթ., 1915-1916թթ. և 1918-22թթ. Հայոց ցեղասպանության փուլերն ու առանձնահատկությունները:<br>- համեմատել և վերլուծել դրանք իրականացնող գործիչների շահերն ու նպատակները:<br><br>**Գնահատի և արժևորի՝**<br>- Հայոց եկեղեցու և հոգևոր գործիչների դերը ազատագրական պայքարի նախաձեռնության, կազմակերպման գործում, մասնակցությունը XIV- XX դարերի այդ պայքարում:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br>- Նոր ժամանակների հայ ժողովրդի հոգևոր և նյութական արժեքների, դրանց ստեղծման, պահպանման ու զարգացման գործում անվանի մտավորականների, ազգային գործիչների, Հայոց եկեղեցու և կրթական հաստատությունների դերի վերաբերյալ:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br>- գաղութների հայ համայնքների ազգային, կրոնական, տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ: |

| | |
|---|---|
| եկամտահարկ, ուլտիմատում (վերջնագիր), ռազմհեղկոմ անվանումները, հասկացությունները և տերմինները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- համեմատել Բաթումի և Բրեստ-Լիտովսկի, Բրեստ-Լիտովսկի և Սևրի, Սևրի և Բաթումի, Սևրի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը,<br>- վերլուծել Հայաստանի առաջին հանրապետության անկման պատճառները,<br>հիմնավորել Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիությունը,<br>- բացատրել 1920թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված Երևանի համաձայնագրի նշանակությունը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել և համեմատել տնտեսության բնագավառում խորհրդային իշխանության իրականացրած ռազմական կոմունիզմի, նէպ-ի, արդյունաբերության ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության ծրագրերը,<br>- վերլուծել Հայաստանի սահմանների վերաբերյալ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի ու աշխարհասփյուռ հայերի ճակատագրի հարցերի քննարկումը Լոնդոնի ու Լոզանի խորհրդաժողովներում:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- հայրենական պատերազմի հայ զորահրամանատարների, հերոսների կյանքի և գործունեության վերաբերյալ:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- Հայաստանի անկախության մասին հռչակագրի, ԱՊՀ ստեղծման, Հայաստանի անկախության հռչակման և միջազգային ճանաչման մասին:<br>- Հայաստանի երրորդ հանրապետու-թյան քաղաքական ու վարչական կառուցվածքների և տարածաշրջանի աշխարհաքաղաքական ու տնտեսական իրավիճակի մասին:<br>- համակարգված գիտելիքներ ունենա Լեռնային Ղարաբաղի հանրապետության | **Կարողանա՝**<br>- ներկայացնել և վերլուծել գաղթավայրերի դերը ազգային ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանման ու զարգացման գործում:<br><br>**Կարողանա՝**<br><br>- օգտվելով աղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից՝ վերլուծել և արտահայտել սեփական վերաբերմունքը Սևրի, Բաթումի, Բրեստ-Լիտովսկի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, Լոնդոնի ու Լոզանի կոնֆերանսների վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել և համեմատել Ջավախքի, Լոռու, Ղարաբաղի և Նախիջևանի հիմախնդիրները, բացահայտել դրանց պատճա-ռահետևանքային կապերը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- ներկայացնել, վերլուծել և արտահայտել սեփական վերաբերմունքը 1920-1930-ական, ապա՝ 1940-ական թթ. Հայաստանում զանգվածային բռնաճնշումների, բռնագրավումների և աքսորի քաղաքականության հետևանքների վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- վերլուծել տնտեսության պետական կարգավորման, պլանավորման, խորհրդային հանրապետությունների տնտեսական ինքնուրույնությունն էապես սահմանափակելու, տեղական զարգացման առանձնահատկությունները հաշվի չառնելու բացասական հետևանքները,<br>- վերլուծել ադրբեջանական իշխանությունների և Խորհրդային Հայաստանի կառավարության դիրքորոշումն Արցախյան հիմնախնդրի նկատմամբ,<br>- մեկնաբանել ԽՍՀՄ փլուզման ներքին և արտաքին պատճառները: |

| | |
|---|---|
| անկախ պետականության հռչակման, ԼՂՀ ներքին դրության, արտաքին քաղաքականության ու միջազգային դրության վերաբերյալ:<br>- հայրենադարձության կազմակերպման հիմնական փուլերի և դրանց արդյունքների մասին:<br><br>**Կարողանա՝**<br><br>- մեկնաբանել Սփյուռքի դիրքորոշումը ֆաշիզմի նկատմամբ,<br>- արժևորել Հայրենիք-Սփյուռք կապերը տնտեսության, հասարակական-քաղաքական և մշակութային ոլորտներում:<br><br>**Համակարգված գիտելիքներ ունենա՝**<br><br>- տարբեր դարաշրջաններում հայկական մշակույթի զարգացման պատմական պայմանների մասին,<br>- Հայոց հոգևոր և նյութական արժեքների, հայոց մշակույթի պատմության հիմնական փուլերի և առանձնահատկությունների մասին:<br>- V-IX, X-XIV, XV-XVII, դարերի և նոր շրջանի ( XVIIդ. 2-րդ կես – XIդ. և XIX-XXդդ.) հայոց մշակութային նվաճումների, տվյալ փուլերին հատուկ օրինաչափությունների ու առանձնահատկությունների վերաբերյալ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- բացատրել հայոց գրերի գյուտի պատմական նշանակությունը և արդյունքները,<br>- արժևորել Խորենացու «Հայոց պատմությունը»,<br>- գնահատել Անանիա Շիրակացու ներդրումը հայ և համաշխարհային գիտության մեջ:<br><br>**Կարողանա՝**<br><br>- ներկայացնել խորհրդային Հայաստանի մշակույթի հիմնական ձեռքբերումներն ու արդյունքները:<br><br>**Պատկերացում ունենա՝** | **Կարողանա՝**<br><br>- ներկայացնել և վերլուծել Հայաստանի երրորդ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության հաջողություններն ու թերությունները, բացատրել դրանց պատճառները:<br>- վերլուծել Արցախյան շարժման և Ադրբեջանա-Ղարաբաղյան պատերազմի պատճառները:<br>- գնահատել միջազգային կառույցների՝ ԵԱՀԽ-ի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի դերակատարումը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում,<br><br>**Կարողանա՝**<br><br>- բացատրել և ներկայացնել արդի համամոլորակային հիմնախնդիրները, միջազգային հարաբերությունների առանձնահատկությունները և Հայաստանի համար համաշխարհայնացման հնարավոր հետևանքները:<br>- բացատրել ցեղասպանության միջազգային ճանաչման, հայոց պահանջատիրության ուղղությամբ հայկական պետության ու ամբողջ հայության շարունակական պայքարի անհրաժեշտությունը:<br><br>**Կարողանա՝**<br><br>- ներկայացնել Հին Հայաստանի և հելլենիստական դարաշրջանի հայոց մշակութային նվաճումների ու համաշխարհային գանձարանում հայոց մշակույթի ունեցած դերը:<br><br>- ներկայացնել X-XIV դարերի մշակութային վերածննդի հիմնական արդյունքները,<br><br>- բնութագրել պատմագրության ուղղությունները X-XIV դարերում:<br>- վերլուծել և ներկայացնել X-XIV դարերի |

| | |
|---|---|
| - Հայկական մշակույթի արդի վիճակի և նրա զարգացման հեռանկարների վերաբերյալ:<br><br>**Գնահատի և արժևորի՝**<br><br>- հայ ժողովրդի V-IX, X-XVII, XVII-XIX, XIX-XX դարերի հոգևոր և նյութական արժեքների ստեղծման, պահպանման ու զարգացման գործում ազգային, հոգևոր կառույցների և անհատների դերը: | համալսարանների գործունեությունը,<br>- գնահատել X-XIV դարերի մշակութային գործիչների, վարդապետարանների դերը մշակույթի պահպանման և զարգացման գործում:<br>- - համեմատել հայ մշակույթի զարգացման տարբեր դարաշրջանները և զարգացման արդյունքները:<br><br>**Կարողանա՝**<br><br>- գնահատել սփյուռքահայ մշակույթի դերը հայապահպանության և Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում:<br>- վերլուծել հայրենիք-սփյուռք հարա-բերությունների վերաբերյալ արդի մոտեցումները:<br>- արժևորել մշակութային կապերի դերը համայն հայության միասնության պահպանման ու ամրապնդման գործում: |

# ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է, որ ավագ դպրոցն ավարտողը պետք է`

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին.
- կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք.
- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- կարևորի պետության և ազգային-հոգևոր կառույցների դերը հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում.
- կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը. գիտակցի անձնական, խմբային, ազգային և պետական շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը.
- գիտակցի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները կատարելու, ազգային և բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտությունը.
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը.
- կարևորի իր ակտիվ մասնակցության նշանակությունը Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում.
- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում.
- գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը.
- գիտակցի սեփական մշակույթի` լեզվի, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը.
- գիտակցի իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.
- անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները` բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

# ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական արդյունքները վերահսկելու գործընթաց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է և ուսման որակի վերահսկումը:

Ընթացիկ գնահատման շնորհիվ պարզվում է սովորողների, ուսուցիչների և դպրոցների կողմից «Հայոց պատմության» առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները, ուսուցման գործընթացում սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները: Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքը ուղղորդելու, դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Հիմք ընդունելով ավագ դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման մոտեցումները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1. սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտումը, նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրումը, հաշվառումը և վերլուծությունը,

2. սովորողի կողմից՝ պետական և առարկայական չափորոշիչներով ամրագրված Հայոց պատմության ծրագրային բովանդակության յուրացման և տիրապետման աստիճանի շարունակական, փուլային ստուգումն ու գնահատումը:

Գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության, անկողմնակալության և թափանցիկության սկզբունքները:

Սովորողների ընթացիկ գնահատման նպատակներից և սկզբունքներից բխում են հետևյալ առանցքային խնդիրները՝

1. գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները,

2. գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

3. ուսուցանող (ձևավորող) գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,

4. առավելագույնս իրազեկել ծնողներին իրենց երեխաների ցուցաբերած առաջադիմության ցուցանիշներին և բարձրացնել ուսումնառության գործընթացի նկատմամբ սովորողների պատասխանատվության զգացումը,

5. նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի բացահայտմանը, խթանել նրա ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը,

6. գնահատման նոր համակարգի ներդրման շնորհիվ բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Ընթացիկ գնահատման համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառույթները.

ա. Ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խրախուսել յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,

բ. հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,

գ. շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ,

դ. փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ,

ե. հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը,

զ. վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝ ուսուցանող գնահատում և սովորողների առաջադիմության միավորային գնահատում: Գնահատման այս երկու ձևերի նպատակային և գործառութային բազմազանությունը ապահովելու համար գործածության են երաշխավորվում ստուգման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, տնային աշխատանք, ինքնուրույն աշխատանք, գործնական աշխատանք, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, քննարկումներ և կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Դրանց մի մասը առավել կիրառելի է ուսուցանող գնահատման համար, իսկ որոշ տեսակներ՝ սովորողների ընթացիկ առաջադիմության արդյունքները պարզելու համար:

Առաջադրանքների կիրառումը իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական:

Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր նախատեսված է ուսումնական տարվա մեկ կիսամյակը:

«Հայոց պատմություն» առարկայից սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային-անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝

- չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը.
- սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները.
- մտավոր գործունեության մակարդակը:

Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ պարզելու համար երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. թեմատիկ գրավոր աշխատանք,
3. գործնական աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը: Ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախությունը որոշելու նպատակով առաջարկվում է ամբողջ ստուգվող և գնահատվող ծրագրային նյութը բաժանել թեմաների: Ստուգման յուրաքանչյուր տեսակից մեկ կիսամյակի ընթացքում տրվող առաջադրանքների քանակը որոշում են մասնագիտական խմբերը՝ հիմք ունենալով պետական և առարկայական չափորոշիչների պահանջները, առարկայի առանձնահատկությունները և շաբաթական ժամաքանակը:

## Սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման տեսակները

Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով գործածության երաշխավորվող չորս տեսակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային որակները: Միաժամանակ, ստուգման և գնահատման յուրաքանչյուր տեսակ ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ, որոնց միջոցով առավել շեշտադրված և նպատակային ձևով պարզվում են սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջական տարրապատկերի որոշակի կողմերը:

### *Բանավոր հարցում:*

Ուսումնական գործընթացում կիրառվում է բանավոր հարցման երկու ձև՝ համառոտ և ծավալուն:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը՝ համառոտ հարցում՝ մինչև 2 րոպե, ծավալուն հարցում՝ 2 րոպեից ավելի,
- հաճախությունը՝ մեկ կիսամյակում 4-7 անգամ՝ կախված ընդհանուր և հումանիտար հոսքերի շաբաթական ժամաքանակից և դասարանից:

***Թեմատիկ գրավոր աշխատանք:*** Ծրագրային յուրաքանչյուր թեմայից սովորողների ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսվում է գրավոր

աշխատանք: Այն պետք է կազմված լինի տվյալ թեմայից սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են`

- տևողությունը` 45 րոպե,
- հաճախությունը` թեմաների թվին հավասար,
- առաջադրանքների տիպերը` ընտրովի կամ կարճ պատասխան պահանջող թեստեր, ծավալուն պատասխանով առաջադրանքներ, խնդիրներ,
- առաջադրանքների բնույթը` փաստերի իմացություն, գիտելիքի կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, համեմատություն, համադրում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք: վորը` ընթացիկ բոլոր բանավոր հարցումների միավորների միջին գնահատականն է:

***Գործնական աշխատանք:*** Նախատեսվում են տարբեր տեսակի գործնական առաջադրանքներ` զեկուցումներ, ելույթներ, ռեֆերատներ, ինքնուրույն հետազոտական աշխատանքներ և այլն:

***Կիսամյակային ամփոփիչ աշխատանք:*** Ամփոփիչ աշխատանքը կիրառվում է ուսումնական կիսամյակի վերջում, ծրագրով նախատեսված կիսամյակային բովանդակությունը ուսումնասիրելուց հետո: Կարող է կիրառվել բանավոր կամ գրավոր եղանակը:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են`

- տևողությունը` 45 կամ 90 րոպե,
- հաճախությունը` 1,
- առաջադրանքների տիպերը` բաց և փակ պատասխանով առաջադրանքներ` ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով, ընդարձակ պատասխանով, հարցարաններ, ինքնուրույն-հետազոտական աշխատանք,
- առաջադրանքների բնույթը` փաստերի իմացություն, գիտելիքի կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, համեմատություն, համադրում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

«Հայոց պատմություն» առարկայից սովորողների գնահատման համար ավագ դպրոցում գործածության է երաշխավորվում կիսամյակային գնահատականի ձևավորման կշռային գործակիցներով հաշվարկման մեթոդը: Սովորողի ընթացիկ առաջադիմության կիսամյակային գնահատականը ձևավորվում է ստուգման չորս տեսակներից նրա վաստակած գնահատականների հիման վրա: Ուսուցիչը ստուգման յուրաքանչյուր տեսակից սովորողի կիսամյակային գնահատականը որոշելիս հաշվի է առնում կիսամյակի ընթացքում նրա առաջընթացը:

Սովորողի կիսամյակային վերջնական գնահատականը կշռային մեթոդով ստանալու համար նախ՝ հաշվարկվում է ստուգման տվյալ տեսակից սովորողի ստացած կիսամյակային միջին գնահատականը: Ապա՝ որոշվում է ստուգման յուրաքանչյուր տեսակից սովորողի վաստակած կիսամյակային միավորի ազդեցության չափը (կշռային գործակիցը) նրա կիսամյակային վերջնական գնահատականի ձևավորման վրա: Սովորողի ընթացիկ առաջադիմության կիսամյակային վերջնական գնահատականը 10 միավորային սանդղակով հաշվարկելու համար գործածության է երաշխավորվում հետևյալ բանաձևը՝ $ԿԳ = կ_1.Բ + կ_2.Գ + կ_3.Թ + կ_4.Կ$

Բանաձևում Բ, Գ, Թ և Կ մեծատառերով նշանակված են ստուգման տեսակներից սովորողների վաստակած կիսամյակային միավորները, $կ_1$,$կ_2$,$կ_3$,և $կ_4$ - ով՝ դրանց համապատասխան կշռային գործակիցները, իսկ ԿԳ-ով՝ կիսամյակային գնահատականը:

Բ - բանավոր հարցում ($կ_1$ - գործակցով),

Գ - գործնական աշխատանք ($կ_2$ - գործակցով),

Թ – թեմատիկ գրավոր աշխատանք ($կ_3$ - գործակցով),

Կ – կիսամյակային ամփոփիչ աշխատանք ($կ_4$ - գործակցով):

Կշռային գործակիցները ոչ բացասական թվեր են, որոնց գումարը հավասար է 1-ի: Դրանք ստորակետից հետո մեկ թվանշան պարունակող տասնորդական կոտորակներ են:

Եթե ստուգման բոլոր տեսակներից կշռային գործակիցներով հաշվարկված կիսամյակային գնահատականը ձևավորող միավորների գումարը՝ ԿԳ - ն, ամբողջ թիվ չի կազմում, ապա կիրառվում է թվերի մոտարկման կանոնը:

Ընթացիկ առաջադիմության ստուգումները գրանցվում են տասը միավորային սանդղակով:

| Միա վորը | Անվանումը |
|---|---|
| 10 | «բացառիկ» |
| 9 | «գերազանց» |
| 8 | «շատ լավ» |
| 7 | «լավ» |
| 6 | «միջինից բարձր» |
| 5 | «միջին» |
| 4 | «բավարար» |
| 3 | «անբավարար» |
| 2 | «վատ» |

| | |
|---|---|
| 1 | «շատ վատ» |

Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները:

Բացի «10» միավորային համակարգից, ուսումնական գործընթացում կարելի է կիրառել նաև գնահատման այլ համակարգ՝ ապահովելով դրանց համարժեքությունը, կամ գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք:

Կիսամյակային գնահատականների հիման վրա ձևավորվում է սովորողի տարեկան գնահատականը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

### Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ


1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:

2. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:

3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981:

4. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:

5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:

6. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982:

7. Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1979:

8. Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982:

9. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

10. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971:

11. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:

12. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:

13. Վարդան Վարդապետ (Արևելցի), Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:

14. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956:

15. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

16. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, Երևան, 1999:

17. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988:

18. Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870:

19. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հտ. 1 (Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը), Երևան, 1981:

20. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հտ. 1 (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), Երևան, 2007:


### Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հտ. Ա., Երևան, 1964:

2. Աղոնց Ն. Գ. Հայաստանի պատմություն. ակունքները (X-VI դդ. մ.թ.ա.): Հայերի

ծագումը, Երևան, 1972:
3. Ադոնց Ն. Գ., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:
4.Ավանդապատում (ցանկացած հրատարակություն):
5. Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950:
6. Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հտ. 1, Կահիրե, 1941:
7. Բաբայան Լ. Հ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964:
8. Գարագաշյան Ա., Քննական պատմութիւն Հայոց, մասն Ա-Դ, Թիֆլիս, 1895:
9. Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:
10. Զուլալյան Մ. Կ., Հայոց պատմության թուրքական կեղծարարությունը, Ե., 1995:
11. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975:
12. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հտ. 1, 2, Երևան 1966, 1967:
13. Կիրակոսյան Գ. Ե., Հայաստանը Լենկթեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.), Երևան, 1997:
14. Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984:
15. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I-IV, ՀԽՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1971, 1972, 1976, 1984:
16. Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ., Երևան, 1976:
17. Հարությունյան Բ. Հ., «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997:
18. Մանանդյան Հ. Հ., Երկեր, հտ. Ա-Զ, Երևան, 1977-1985:
19. Մանասերյան Ռ. Լ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ (մ.թ.ա 94-64 թթ.), Երևան, 1987:
20. Մելիք-Բախշյան Ս. Տ., Հայոց պատմության աղբյուրագիտություն (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1989:
21. Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, Երևան, 2003:

22. Շահինյան Լ. Փ., Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993:

23. Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996:

24. Ուլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:

25. Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. 1-2, Կ. Պոլիս, 1912-1913:

## 2. ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՆԵՐ

### Ա. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն. 1721-1736 թթ. Վենետիկ, 1977:
2. Եսայի Հասան-Ջալալյանց, Համառոտ պատմություն Աղվանից երկրի, Երևան, 1997:
3. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Երևան, 1991:
4. Հակոբ Շահամիրյան, Գիրք, անուանեալ որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913:
5. «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Բեյրութ, 1958:
6. «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները» (1918-1920 թթ.), Երևան, 1998:
7. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքակա-նության փաստաթղթերում» (1828-1923), Երևան, 1972:
8. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում». (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1991:
9. «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1999:
10. Մեվլան Զատե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990:
11. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990:
12. Լազյան Գ., Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1991:
13. Մյասնիկյան Ա. Ֆ., Ընտիր երկեր, Երևան, 1957:
14. Շահումյան Ստ. Գ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1-5, Երևան, 1975-1978:

### Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հտ. Ա, Բ, Երևան, 1964, 1967:
2. Աղոնց Ն. Գ., Հայկական հարց, Երևան, 1996:
3. Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հտ. 2, 3, Կահիրե, 1955, 1960:
4. Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

5. Ավետիսյան Հ. Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
6. Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ. Կ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978:
7. Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
8. Զարեվանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993:
9. Զարեվանդ, Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ, Երևան, 1997:
10. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
11. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:
12. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975:
13. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Երկեր, Երևանի համալս. հրատ., Եր., 1992:
14. Իսկանյան Վ. Կ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Եր., 1991:
15. Լեո, Հայոց պատմություն. Երկերի ժողովածու, հտ. 3-4, Երևան, 1969-1984:
16. Խատիսյան Ա., Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
17. Խուրշուդյան Լ. Ա., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995:
18. Խուրշուդյան Լ. Ա., Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, 1999:
19. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003:
20. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1920-1991 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007:
21. Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, 1999:
22. Կիրակոսյան Ջ. Ա., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:
23. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005:
24. Համբարյան Ա. Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:
25. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV-VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, 1970, 1972, 1974, 1981:

26. «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996:
27. «Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր», մաս 1-3, Երևան, 1995:
28. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
29. Մելիքսեթյան Հ. Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:
30. Մկրտչյան Լ. Հ., Զեյթունի ապստամբությունը (1895-1896 թթ.), Երևան, 1995:
31. Նազարյան Ա. Ս., Հայկական զորամասերի կազմավորումը կովկասյան ճակատում (1914-1918 թթ.), Երևան, 1999:
32. Նասիբյան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923 թթ., Բեյրութ, 1994:
33. Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը, Երևան, 1969:
34. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Երևան, 2000:
35. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք 1-2, Երևան, 1996:
36. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
37. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
38. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Եր., 2002:
39. Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. 3, Երուսաղեմ, 1927:

Հաստատված է
ՀՀ ԿԳ նախարարի
-------- 2008թ. N ------ Ա/Ք հրամանով

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԾՐԱԳԻՐ

(X - XII դասարաններ)

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի հումանիտար հոսքի խորացված ուսուցման ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, առարկայի միջին դպրոցի չափորոշիչը և ծրագիրը, ՀՀ կառավարության կողմից հաստատված ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը:

Հայոց պատմության հումանիտար հոսքի ծրագիրը հենվում է նախորդ կրթական աստիճանում՝ միջին դպրոցի ծրագրի շրջանակներում ուսումնասիրված ու յուրացված նյութի վրա, խորացվել է նոր հարցադրումներով ու հայեցակարգային մոտեցումներով: Դրանով ապահովվում է պատմական կրթության շարունակականությունն ու հաջորդականությունը: Խորացված ուսուցման ծրագիրը կազմվել է նաև նկատի ունենալով ավագ դպրոցի պատմական կրթության չափորոշիչները, ինչպես նաև հումանիտար բարձրագույն կրթության ժամանակակից պահանջները:

Ուսումնական ծրագրի բովանդակության ձևավորման համար հիմնական չափանիշ է ընտրվել պատմության մեկնաբանման և արժևորման քաղաքակրթական սկզբունքը՝ զուգորդելով այն ֆորմացիոն տեսության ձեռքբերումների հետ: Կառուցվածքային առումով ծրագրի հիմքում գլխավորապես դրված են հիմնախնդիրների ժամանակագրական և թեմատիկ ուսուցման մոտեցումները:

Առարկայի ավագ դպրոցի խորացված ծրագիրը ժամանակագրական առումով ընդգրկում է հայկական քաղաքակրթության ամբողջական պատմությունը՝ նրա սկզբնավորման ակունքներից մինչև ժամանակակից հետարդյունաբերական հասարակության շրջանը:

Ծրագրի բովանդակային առանցքը կազմել է հայկական պետականության պատմությունը, որովհետև քաղաքակրթական արդի փուլում մեզ համար կարևորվում է ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը:

Հայաստանը հին ժամանակներից հայտնի է որպես քաղաքակրթության բնօրրան, եղել է եվրոպական ու արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, ստեղծել, պահպանել ու զարգացրել է յուրատիպ ազգային մշակույթ, որի շնորհիվ հայությունը, հազարամյակներ կտրելով, հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակույթի հարուստ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրումը կազմել է ծրագրի երկրորդ կարևոր բովանդակային ուղղությունը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է նաև ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը, ինչը, բնականաբար, կազմել է ծրագրի բովանդակային մյուս ուղղությունը:

Առարկայի գլխավոր նպատակն է՝ սովորողներին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության պատմական զարգացման ընթացքի հիմնական օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ, նպաստել նրանց՝ պատմական կարևոր իրադարձությունները և երևույթները ուսումնասիրելու, հասկանալու, վերլուծելու, համեմատելու, համադրելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, հայկական պատմամշակութային ժառանգությունն արժևորելու կարողությունների զարգացմանը: Ավագ դպրոցում հատկապես կարևորվում է սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, ազգային արժեքային համակարգի, նրանց աշխարհայացքի ամբողջական ձևավորման խնդրի լուծումը:

Ավագ դպրոցում պետք է ապահովել ուսումնական այնպիսի գործընթաց, որպեսզի սովորողները կարողանան՝ հիմնարար գիտելիքների հենքի վրա զարգացնել իրենց ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, իմաստավորել ու յուրացնել ազգային արժեքային համակարգը:

Հայոց քաղաքակրթության ժառանգության յուրացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր ապագա քաղաքացուն պատմական փորձը լավագույնս ծառայեցնել իր անկախությունը վերականգնած Հայաստանի շենացմանը և հզորացմանը: Հայոց պատմության իմացության խորացումն ու ամրապնդումը ավագ դպրոցում հնարավորություն կտա նաև ապագա մասնագետներին նախապատրաստվել բարձր մակարդակում կրթությունը շարունակելու:

Նշված նպատակների ու խնդիրների հաջող և արդյունավետ լուծմանն է նպատակաուղղված «Հայոց պատմություն» առարկայի խորացված ծրագրի ներդրումը և դրան համապատասխան ուսուցման կազմակերպումը եռամյա ավագ դպրոցում:

«Հայոց պատմություն» առարկայի բովանդակությունն ավագ դպրոցի հումանիտար հոսքում ըստ դասարանների բաշխվում է հետևյալ կերպ.

X դասարան –հայկական քաղաքակրթությունը սկզբնավորումից մինչև IX դարի կեսերը,

XI դասարան – հայկական քաղաքակրթությունը IX դարի կեսերից մինչև 1918 թվականի հունիս,

XII դասարան – հայկական քաղաքակրթությունը նորագույն շրջանում:

Ծրագրով առարկայի դասավանդմանը հումանիտար հոսքում հատկացվում է՝ X դասարանում՝ 102 ժամ, XI դասարանում՝ 170 ժամ, XII դասարանում՝ 272 ժամ, ընդամենը՝ X - XII դասարանների համար՝ 544 ժամ: Խորացված ուսուցման ծրագրում յուրաքանչյուր թեմայի վերջում տրված են նաև բանավոր հարցման, թեմատիկ գրավոր և գործնական (ոչ բոլոր թեմաներում) աշխատանքների համար հատկացված ժամերը, որոնք թեմայի ուսումնասիրման համար նախատեսված ժամաքանակի մաս են կազմում:

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
# ԾՐԱԳԻՐ
(X դասարան, շաբաթական 3 ժամ, տարեկան 102 ժամ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (5 ժամ)

«Հայոց պատմություն» առարկան ավագ դպրոցում. բովանդակությունը, դասավանդման նպատակը և խնդիրները: Հայոց պատմության պարբերացումը: Աղբյուրները: Հայ պատմագիտության անցած ուղին:

Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները. Հայկական լեռնաշխարհը հայոց քաղաքակրթության բնօրրան, աշխարհաքաղաքական դիրքը, տարածքը, հաղորդակցության ուղիները:

Բանավոր և գրավոր հարցում (2 ժամ)

## ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (65 ժամ)

## ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

(6 ժամ)

Նախնադարի պարբերացումը: Հայկական լեռնաշխարհը՝ մարդկության պատմության զարգացման վաղնջական բնօրրան: Հնագույն բնակատեղիները Հայկական լեռնաշխարհում (Արտին լեռ, Ազոխ, Արզնի, Երևան, Հատիս):

Քաղաքակրթության ակունքներում. Նեոլիթյան հեղափոխությունը և էնեոլիթը Հայկական լեռնաշխարհում: Վաղ երկրագործական հանրությունները, յուրացնող և արտադրող տնտեսաձևեր (Աղձնիք, Ուրֆա, Առատաշեն, Ակնաշեն):

Պաշտամունքը, հավատալիքների համակարգը: Արվեստը: Գիության տարրերի առաջացումը:

Բանավոր և գրավոր հարցում (2 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (8 ժամ)

### Թեմա 1. Հայոց ծագումնաբանությունը (3 ժամ)

Հայոց ազգաբանության հիմքերը, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը: Հայկ Նահապետը և Հայկյան Արամ աշխարհակալ թագավորը՝ հայ-արմեն ցեղանվան և Հայք-Արմենիա երկրանվան անվանադիր նախնիներ: Հայաստանի մասին վկայությունները Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

### Թեմա 2. Վաղ պետական կազմավորումները Ք. ա. III հազարամյակից մինչև Ք. ա. I հազարամյակի սկզբները (5 ժամ)

Շենգավիթի, Մեծամորի, Լոռի-բերդի, Բարձր Հայքի և այլ հնագիտական մշակույթը պետական վաղ կազմավորումների զարգացման մասին: Քաղաքները, ամրոցները, բերդ-շեները:

Հայկական պետական վաղ կազմավորումները (Արատտա, Արմանում): Հայասայի թագավորությունը, նրա հարաբերությունները Խեթական պետության հետ: Հայկյանների Այրարատյան թագավորությունը, Արմավիր մայրաքաղաքը: Նաիրյան համադաշնությունը՝ որպես հայ նախարարական համակարգի վաղագույն դրսևորում:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (32 ժամ)

### Թեմա 1. Վանի համահայկական թագավորությունը (7 ժամ)

Վանի թագավորության հիմնադրումը. Արամե: Սարդուրի I: Վան-Տուշպայի բարձրացումը: Վանի թագավորության հզորացումը Իշպուինի, Մենուա թագավորների օրոք: Թագավորությունը Առաջավոր Ասիայի հզորագույն տերություն Արգիշտի I-ի ժամանակ: Թագավորությունը նրա հաջորդների օրոք:

Վանի թագավորության տնտեսությունը, շինարարության հզոր վերելքը: Հայկական պետականության զարգացումը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Հայկազուն Երվանդյանների թագավորությունը (6 ժամ)

Հայոց թագավոր Պարույր: Հայկազուն Երվանդյանների բարձրացումը: Հայոց թագավորության դերը Առաջավոր Ասիայում Երվանդ և Տիգրան Երվանդյան թագավորների օրոք: Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները Ք. ա. VI դարի վերջից մինչև Ք. ա. IV դ. 30-ական թթ.:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Աքեմենյան տերության անկումը: Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփք-Կոմմագենեի թագավորությունները: Պայքար Սելևկյանների դեմ Ք. ա. III դ. վերջում:

Տնտեսական կյանքի վերելքը: Հնագույն Արմավիրի զարգացման նոր փուլը: Երվանդաշատ մայրաքաղաքի և այլ քաղաքների կառուցումը: Պետական կարգը, բանակը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը (12 ժամ)

Աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում Ք. ա. II դ. սկզբին: Մագնեսիայի ճակատամարտը, Մեծ Հայքի ու Ծոփքի թագավորությունների վերականգնումը: Արտաշես I Բարեպաշտ. Արտաշեսյանների հարստության հիմնումը: Հայկական հողերի վերամիավորումը: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշես I–ի բարեփոխումները, դրանց նշանակությունը: Մեծ Հայքի պետության հզորացումը, դերը միջազգային հարաբերություններում:

**Տիգրան II Մեծ**: Հայոց պետականության հզորության գագաթնակետը՝ Տիգրան Մեծի աշխարհակալությունը: Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին, արտաքին նվաճումները: Քաղաքաշինության վերելքը, Տիգրանակերտ մայրաքաղաքի և այլ քաղաքների հիմնադրումը: Տիգրան Մեծի պետական ռազմավարությունը:

Հայ–հռոմեական պատերազմը. պատճառները, սկիզբը: Պատերազմի ընթացքը, հայկական զորքի հաղթանակը: Պոմպեոսի արշավանքը և Արտաշատի հաշտությունը: Տիգրան Մեծի դերը համաշխարհային և Հայոց պատմության մեջ:

**Մեծ Հայքի թագավորությունը Տիգրան Մեծի հաջորդների օրոք**: Հայաստանի դերը միջազգային նոր իրադրությունում: Արտավազդ II: Հայ-պարթևական դաշինքը և հռոմեա-հայկական հարաբերությունների սրումը: Պայքար հռոմեական նվաճողների դեմ. Արտաշես II-ի գահակալությունը: Արտաշեսյանների թագավորության անկումը. պատճառները և հետևանքները:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 4.Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը I-III դարերում (7 ժամ)

Քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում. պայքար Հայոց գահի շուրջ I դարի առաջին կեսին: Պարթև-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Տասնամյա պատերազմը, Հռանդեայի պայմանագիրը: Տրդատ I Արշակունի. Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը:

Վաղարշ I. Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Մեծ Հայքում Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:

Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները III դարում: Տրդատ III Մեծի գահակալումը: Մծբինի հաշտությունը:

Պետական կարգը Արշակունիների օրոք: Տնտեսության զարգացումը: Բնակչությունը, քաղաքները և գյուղական բնակավայրերը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

# ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (17 ժամ)

## Թեմա 1. Հայկական մշակույթը Ք. ա. IX – Ք. ա. III դարերում (8 ժամ)

Մշակույթի զարգացման պատմական պայմանները:

Վանի թագավորության շրջանի մշակույթը. կրոնը, գիրը, գիտելիքը, արվեստը, ճարտարապետությունը:

Հայկազուն Երվանդյանների ժամանակաշրջանի մշակույթը: Բնապաշտական, նախնիների պաշտամունքի, հայրենասիրական պատկերացումները Հայոց էպոսում: Առասպելները: Հին հայկական վեպը: Դիցարանը: Նյութական մշակույթը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Մշակույթի վերելքը հելլենիզմի դարաշրջանում (9 ժամ)

Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը: Շինարարության զարգացումը, նյութական մշակույթը: Դիցարանը: Արվեստը. քանդակագործություն, թատրոն: Տոմարը: Հայ հին գրչությունը. մեհենագրերը: Գրականությունը:

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը: Հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները, դրանց նշանակությունը համաշխարհային պատմության մեջ:

Բանավոր հարցում (2 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

### Ամփոփում (2 ժամ)

# ՄԱՍ Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (32 ժամ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Հայոց քաղաքակրթության զարգացման պատմական պայմանները, առանձնահատկությունները և արդյունքները միջնադարում:

## ԲԱԺԻՆ 1. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (20 ժամ)

### Թեմա 1. Քրիստոնեության ընդունումը: Ավատատիրության հաստատումը

### (5 ժամ)

**Քրիստոնեության հռչակումը պետական կրոն:** Քրիստոնեության ընդունման նախադրյալները: Քրիստոնեական համայնքների տարածումը Հայաստանում: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն (301 թ.): Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատումը: Ազգային և քրիստոնեական արժեքների համադրումը, ազգային արժեքային նոր համակարգի ձևավորումը: Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:

**Ավատատիրության հաստատումը:** Նախարարական համակարգի ավատատիրական զարգացման ընթացքը, ավատատիրության հաստատումը: Նոր հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները Հայաստանում: Ավատատիրական աստիճանասանդուղքը: Պետական կառավարման համակարգը: Բանակը: Բնակչությունը, քաղաքային կյանքը:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

### Թեմա 2. Արշակունյաց թագավորությունը 301-428 թվականներին (5 ժամ)

**Պայքար թագավորական իշխանության ուժեղացման համար:** Տրդատ III Մեծի գործունեությունը: Երկրի հետագա ամրապնդման Խոսրով III Կոտակի քաղաքականությունը: Տիրան թագավորը: Պետություն-եկեղեցի հարաբերությունները:

Արշակ II-ի քաղաքականությունը: Ներսես Մեծ կաթողիկոսը: Աշտիշատի առաջին եկեղեցական ժողովը: Հայ-պարսկական պատերազմները, հետևանքները:

Պապ թագավորի գահակալումը: Ձիրավի հաղթական ճակատամարտը: Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը:

**Թագավորության թուլացումն ու անկումը:** Արշակունիների պետության թուլացման պատճառները: Մեծ Հայքի 387 թ. բաժանումը: Թագավորության վերամիավորումը Խոսրով IV և Վռամշապուհ արքաների օրոք: Հայ Արշակունիների թագավորության անկումը, դրա հետևանքները:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Հայկական պետականության նախարարական շրջանը (10 ժամ)

Հայոց պետականության անցումը նախարարական համակարգին: Մարզպանական Հայաստանը. պարսից արքունիքի քաղաքականությունը, քաղաքական, տնտեսական և կրոնական հակածանքների սաստկացումը:

**Ազատագրական պայքարը V դարում:** Վարդան Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական ապստամբությունը: Խաղխաղի ճակատամարտը: Ավարայրի ճակատամարտը, պատմական նշանակությունը:

Վահանանց ապստամբության պատճառները, սկիզբը և ընթացքը: Նվարսակի պայմանագիրը: Հայ եկեղեցու իրավունքների ճանաչումը և նախարարական տների ժառանգական իրավունքների վերականգնումը: Արևելյան Հայաստանի ինքնուրույնության հաստատումը. Վահան Մամիկոնյանը՝ Հայոց տանուտեր:

**Հայաստանը VI - VII դարերում:** Արևմտյան Հայաստանը VI դ. առաջին տասնամյակներին: Հուստինիանոս I-ի ռազմավարչական վերափոխությունները:

Արևելյան Հայաստանի վիճակը VI դարի սկզբներին: Դվինի 506 թ. և 554 թ. եկեղեցական ժողովները: Հայոց 571 թ. ապստամբության վերաճումը պարսկա-բյուզանդական պատերազմի: Հայաստանի բաժանումը 591թ.:

Պարսկա-բյուզանդական պատերազմները VII դ. առաջին տասնամյակներին և Հայաստանը: Արաբական նվաճումները և Հայաստանը: Հայ-արաբական պայմանագրի կնքումը Թեոդորոս Ռշտունու կողմից: Հայաստանի անկախության վերականգնումը VII դ. երկրորդ կեսին:

**Նախարարական համակարգը արաբների տիրապետության շրջանում:** «Արմինիա» փոխարքայության կազմավորումը խալիֆայության կազմում: Հայ նախարարների և Հայոց եկեղեցու իրավունքների սահմանափակման արաբների քաղաքականությունը: VIII դարի հակաարաբական ապստամբությունները և դրանց նշանակությունը:

Հայկական իշխանական տների հզորացումը IX դ. առաջին կեսին: Աշոտ Մսակեր Բագրատունի: 850-855 թթ. ապստամբությունը, դրա նշանակությունը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (9 ժամ)

### Թեմա 1. Ազգային – քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը (9 ժամ)

Հայկական մշակույթի վերելքի նախադրյալները: Մաշտոցյան գրերի գյուտը, նշանակությունը: Դպրոցը:

Մշակույթի Ոսկեդարը: Թարգմանական և ինքնուրույն գրականության սկզբնավորումը: Մեսրոպատառ հայ պատմագրության հիմնադրումը (Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի): Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունը, ազգային գաղափարախոսության ձևակերպումը:

VII դարի պատմագրությունը (Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի): Հովհան Մամիկոնյան, Ղևոնդ վարդապետ (VIII դար):

Փիլիսոփայություն (Դավիթ Անհաղթ, Եզնիկ Կողբացի): Բնափիլիսոփայություն. Անանիա Շիրակացի: Իրավունք: Եկեղեցական կանոնական գրականություն:

Արվեստը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

Ամփոփում (2 ժամ)

# XI դասարան (170 ժամ)
## (շաբաթական՝ 5 ժամ, տարեկան՝ 170 ժամ)

## ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ
## (շարունակություն) (60 ժամ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (2 ժամ)

Հայոց քաղաքակրթությունը զարգացած և ուշ միջնադարյան շրջանում. պատմական ընթացքի առանձնահատկությունները, հիմնական արդյունքները:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (27 ժամ)

### Թեմա 1. Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը (12 ժամ)

Հայոց թագավորության վերականգնման նախադրյալները: Աշոտ I Բագրատունի: Հայ-բյուզանդական հարաբերությունները և պայքարը արաբական նվաճողների դեմ Սմբատ I-ի օրոք: Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացումը: Աշոտ II Երկաթ: Աբաս Բագրատունի: Աշոտ III Ողորմած: Անին Հայաստանի մայրաքաղաք: Սմբատ II Տիեզերակալ: Հայկական թագավորությունների համադաշնությունը: Հայաստանի հզորացումը Գագիկ I-ի օրոք:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Հայոց եկեղեցին: Ավատատիրական հարաբերությունների զարգացումը: Բնակչությունը: Բագրատունյաց թագավորության տնտեսական կյանքի վերելքը:

Թագավորության թուլացման պատճառները: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը և հայկական տարածքների բռնազավթումը (Տարոն, Տայք): Պայքար Բյուզանդիայի դեմ. Գագիկ II: Անիի թագավորության անկումը:

Բանավոր հարցում (4 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

## Թեմա 2. Հայոց պետականությունը XI-XIV դարերում (4 ժամ)

Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: Հայերի զանգվածային արտագաղթը: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Կարսի, Սյունիքի, Լոռու թագավորությունները: Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխությունները:

Ազատագրական պայքարը մահմեդական ամիրայությունների դեմ: Զաքարյանների գլխավորած իշխանությունները Հայաստանում: Իշխանական նոր տները: Մոնղոլական ասպատակությունները: Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ: Հայկական իշխանական տները XIII դարի երկրորդ կեսին - XIV դարում:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Կիլիկյան Հայաստանը (11 ժամ)

Հայկական պետականության ստեղծման նախադրյալները Կիլիկիայում: Հայկական իշխանությունների առաջացումը Կիլիկիայում: Ռուբեն I: Խաչակիրները և Կիլիկիայի հայերը: Ռուբինյան իշխանության ընդլայնումը և ամրապնդումը: Հայոց եկեղեցու նոր թեմերի ձևավորումը, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա, Ներսես Շնորհալի: Լևոն I Մեծագործ, Կիլիկիայի Հայկական թագավորության հռչակումը: Ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հեթումյանների արքայատոհմի հաստատումը: Կիլիկիայի հայկական պետության հարաբերությունները խաչակիրների, մոնղոլների և մամլուքների հետ: Պապականությունը և Կիլիկյան Հայաստանը, ունիթորական և հակաունիթորական շարժումը: Թագավորության թուլացումը և անկումը 1375 թ.: Պետականության պահպանումը Կիլիկիայի լեռնային շրջաններում:

Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Գյուղատնտեսությունը, արհեստները: Ծովային և ցամաքային առևտուրը, կապերը այլ երկրների հետ:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Ավատատիրական հարաբերությունների առանձնահատկությունները: Քաղաքները և քաղաքային կյանքը: Բնակչությունը: Արևելքի ու Եվրոպայի հետ քաղաքակրթական շփումները, փոխազդեցությունները:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Կրկնություն (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (10 ժամ)

### Թեմա 1. Կորուստների և վերականգնումի ժամանակաշրջան (6 ժամ) (XV դար-XVII դարի առաջին կես)

Հայկական անկախ պետականության անկման հետևանքները: Պայքար վաչկատուն ցեղերի դեմ: Ազատագրական լեգենդը: Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում:

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին: Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները, դրանց հետևանքները:

Հայաստանի ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը (Ստեփանոս Սալմաստեցի, Աբգար Դպիր Թոխաթեցի):

Հայկական իշխանությունները հայոց պետականության կրողներ. Արցախի, Սյունիքի մելիքությունները, Զեյթունի իշխանությունը:

Բանավոր հարցում (2 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

### Թեմա 2. Հայկական գաղթավայրերը (4 ժամ)

Հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: «Գաղութ» և «համայնք» հասկացությունները: Գաղթավայրերի ներդրումը ազգային ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանման, զարգացման գործում: Հայաստանի ազատագրության գաղափարների մշակումը: Հիմնական գաղթավայրերը:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (19 ժամ)

### Թեմա 1. Մշակույթի վերելքը X-XIV դարերում (13 ժամ)

Հայ մշակույթի վերելքի պատմական պայմանները: Կրթական գործի առաջընթացը: Բարձրագույն դպրոցներ և համալսարաններ:

Պատմագրությունը (Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Հովհաննես Դասխուրանցի, Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ):

Իրավագիտությունը (Դավիթ Ալավկաորդի, Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ): Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը. Գրիգոր Տաթևացի:

Գրականություն. Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Վարդան Այգեկցի:

Արվեստ. ճարտարապետություն, մանրանկարչություն, որմնանկարչություն, քանդակագործություն, խաչքարեր, երաժշտություն:

Հայկական մշակութային վերածննդի հիմնական արդյունքները:

Բանավոր հարցում (3 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (2 ժամ)

### Թեմա 2. Մշակույթը դժվարին ժամանակներում (XV դար – XVII դարի առաջին կես) (6 ժամ)

Մշակույթի պահպանման և զարգացման պայմանները: Տպագրության սկզբնավորումը և զարգացումը (Հակոբ Մեղապարտ, Աբգար Դպիր Թոխաթեցի): Դպրոցը: Պատմագրությունը: Բնագիտությունը և բժշկությունը (Ամիրդովլաթ Ամասիացի): Կերպարվեստը, գեղանկարչությունը, ճարտարապետությունը:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

### Ամփոփում (2 ժամ)

# ՄԱՍ Բ. ՆՈՐ ՇՐՋԱՆ (110 ժամ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (2 ժամ)

Նոր շրջանի պատմության բովանդակությունը, առանձնահատկությունները, հիմնական արդյունքները:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 1. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (XVII դարի երկրորդ կես – XIX դարի առաջին կես) (24 ժամ)

### Թեմա 1. Ազատագրական շարժումները XVII դ. երկրորդ կեսին - XVIII դարում (16 ժամ)

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները: Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը, Մահտեսի Մուրադ Բաղիշեցի, Հովհաննես Թութունջի: Էջմիածնի 1677թ. ժողովը, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակության գործունեությունը:

Հայաստանի ազատագրության` **Իսրայել Օրու ծրագրերը:** Օրու գործունեությունը Արևմտյան Եվրոպայում: Վերադարձը Հայաստան. Անգեղակոթի ժողովը: Պֆալցյան ծրագիրը: Իսրայել Օրին Ռուսաստանում, հայ-ռուսական բանակցությունները, պարսկական դեսպանությունը, բանակցությունները հայ մելիքների հետ: Օրու գործունեության նշանակությունը:

**Արցախի և Սյունիքի զինված պայքարը:** Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում XVIII դարի սկզբին: Ռազմական ամրությունների (սղնախներ) կազմավորումը Արցախում: Ռուսական զորքերի 1722 թ. Կասպիական արշավանքը: Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս 1723 թ.: Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը: Շարժման ծավալումը Արցախում: Շուշիի և Վարանդայի ինքնապաշտպանական կռիվները:

Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Հալիձորի պաշտպանությունը: Մխիթար սպարապետ: Ապստամբության ավարտը:

Զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունը Արցախում (Խամսայի մելիքություններ):

**Ազատագրական պայքարը XVIII դարի երկրորդ կեսին:** Պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմին. նրա գործունեության նշանակությունը: Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը: Հայաստանի ազատագրության Հյուսիսային (Հովսեփ արք. Արղությանի) ծրագիրը: Մադրասի հայրենասիրական խմբակը: Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» և Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի

յորդորակ» աշխատությունները: Հայաստանի ազատագրության Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը:

Հայոց եկեղեցին և ազատագրական պայքարը XVIII դարում:

Բանավոր հարցում (5 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Հայոց պետականության վերականգնման խնդիրը XIX դարի առաջին կեսին (8 ժամ)

**Արևելյան Հայաստանը և Ռուսաստանը:** Քաղաքական կացությունը Անդրկովկասում, տերությունների շահերի բախումը: Ռուս – պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայերի մասնակցությունը պատերազմներին և ակնկալիքները: Ներսես Աշտարակեցի: Պարսկահպատակ հայերի վերադարձը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ:

Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մարզը: Հայոց եկեղեցին և ցարական կառավարության քաղաքականությունը. 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

**Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:** Արևելյան հարցը և ռուս – թուրքական պատերազմները, դրանց արդյունքները: Հայերի մասնակցությունը պատերազմներին և ակնկալիքները: Արևմտահայերի տեղափոխությունը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ: Արևմտահայության ծանր դրությունը 1830-1840-ական թվականներին:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Կրկնություն (1 ժամ)

# ԲԱԺԻՆ 2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ (53 ժամ)

## Թեմա 1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում (5 ժամ)

Ագրարային վերափոխման իրականացումը Արևելյան Հայաստանում: Քաղաքացիական բարեփոխումները: Գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը հետռեֆորմյան շրջանում: Քաղաքային կյանքը: Հայ բուրժուազիայի և բանվորության ձևավորումը: Սոցիալական շարժումները: Ցարական կառավարության քաղաքականությունը ազգային հարցում:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հայ գյուղացիության հողազրկումը Օսմանյան կայսրությունում: Քաղաքները: Արհեստներն ու առևտուրը: Մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Հայկական հարցի միջազգայնացումը (4 ժամ)

Արևելյան հարցի սրումը, մեծ տերությունների միջև հակասությունները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառները, ընթացքը, արդյունքները: Հայերի մասնակցությունը պատերազմին և ակնկալիքները:

**Հայկական հարցի միջազգայնացումը:** Հայկական հարցը՝ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Եվրոպական տերությունների և Ռուսաստանի միջև հակամարտությունը: Հայկական պատվիրակությունը Եվրոպայում. Մկրտիչ Խրիմյան և Մինաս Չերազ: Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագիրը: Բեռլինի կոնգրեսը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի տարբերությունները: Կարսի մարզի կազմակերպումը:

Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: «Երկաթե շերեփի» գաղափարը:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Ազգային- հասարակական զարթոնքը: Հայ քաղաքական կյանքի կազմակերպումը (11 ժամ)

**Հայ հասարակական-քաղաքական հոսանքները:** Հայկական պահպանողականությունը, դրա առանձնահատկությունները: Լիբերալիզմի հիմնական գաղափարները, դրսևորումները հայ իրականության մեջ: Ազգայնականության երևան գալու

պատճառները: Ազգայնականությունը հայ իրականության մեջ: Սոցիալիզմը հայ իրականության մեջ:

**Ազգային-հասարակական շարժումները:** Արևմտահայերի սահմանադրական շարժումը, «Ազգային սահմանադրությունը», դրա նշանակությունը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և դրա պատմական նշանակությունը:

Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացումը: Ազատագրական զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը. Մկրտիչ Խրիմյան, Րաֆֆի, Ծերենց, Մուրացան, Ռ. Պատկանյան, Ս. Շահազիզ:

Ազատագրական խմբակների և կազմակերպությունների ստեղծումը, դրանց ծրագրերն ու գործունեությունը, նշանակությունը:

**Հայ ազգային կուսակցությունները:** Կուսակցությունների առաջացման նախադրյալները և պատմական պայմանները:

Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը: «Արմենիա» թերթը: Արմենականները 1890-ական թթ.: Հնչակյան կուսակցության հիմնադրումը: Կուսակցության ծրագիրը: «Հնչակ» թերթը: Ավետիս Նազարբեկյան և Արփիար Արփիարյան: Լոնդոնի համագումարը և կուսակցության բաժանումը երկու մասի: Հ.Յ. Դաշնակցություն: Հիմնադրումը: Ք.Միքայելյան, Ս.Զավարյան, Ռոստոմ: Կուսակցության պրակտիկ գործունեության ծրագիրը: «Դրոշակ» թերթը: Դաշնակցությունը որպես հայ հասարակական-քաղաքական կյանքի գերիշխող կուսակցություն: Կուսակցությունների գործունեության նշանակությունը:

Բանավոր հարցում (3 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 4. Հայ ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը (7 ժամ)

**Հայդուկային շարժումը:** Հայդուկային շարժման առաջացման պատճառները: Հայդուկային շարժման կենտրոնները: Նշանավոր հայդուկներ. Արաբո, Աղբյուր Սերոբ, Հրայր, Մեծ Մուրադ, Անդրանիկ, Գևորգ Չաուշ և ուրիշներ:

Արևմտահայերի զինված պայքարը օսմանյան տիրապետության դեմ: Ֆիդայական շարժումը և հայ քաղաքական կուսակցությունները: Արևելահայերի օգնությունը և մասնակցությունը արևմտահայության պայքարին: Ֆիդայական շարժման վերելքը 1890-ական թվականներին:

Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը: 1894-1896 թթ. զանգվածային կոտորածները:

Հայ ազատագրական պայքարը 1894-1896 թվականներին: Հայկական հարցը և մեծ տերությունները: 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Ազատագրական

պայքարի դասերը, նոր մարտավարության ընդունումը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 5. Ազատագրական շարժումները XX դարի սկզբին (9 ժամ)

**Արևելյան Հայաստանը:** Սոցիալ-տնտեսական դրությունը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը, 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքը: Հայերի հակացարական շարժումը, արդյունքները: Հայ - թաթարական (ադրբեջանական) ընդհարումները ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին: Հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, արդյունքները:

Արևելյան Հայաստանը 1907-1914 թվականներին. սոցիալական և քաղաքական իրավիճակը: Ցարիզմը և Հայոց եկեղեցին: Հայ հոգևորականության մասնակցությունը ազատագրական շարժմանը:

**Արևմտյան Հայաստանը:** Արևմտահայերի ծանր վիճակը: Զինված ընդհանուր ապստամբության նախապատրաստումը: Առաքելոց վանքի կռիվը (1901 թ.): Սասունի 1904 թ. ապստամբությունը, դրա նշանակությունը:

Համիդյան վարչակարգի ընդդիմադիր ուժերի համախմբման փորձերը: Երիտթուրքերի 1908 թ. հեղաշրջումը: Հայ ազատագրական շարժման նոր մարտավարությունը, քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: Երիտթուրքերը հայերի ոչնչացման համիդյան ծրագրի շարունակողներ. հայերի կոտորածը Կիլիկիայում: Պանթուրքիզմը երիտթուրքերի պետական քաղաքականության առանցք:

Հայկական հարցը 1912-1914 թվականներին: Բալկանյան պատերազմը և Հայկական հարցի վերաբացումը: Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը, գործունեությունը: Մեծ տերությունները և հայկական բարենորոգումների խնդիրը: 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 6. Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին (17 ժամ)

Աշխարհամարտի սկիզբը: Ռուսաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական պլանները Մերձավոր Արևելքում: Աշխարհամարտի կովկասյան ճակատը. ռազմական գործողությունների ընթացքը 1914-1917 թթ., արդյունքները: Հայ կամավորական շարժումը. ջոկատների ստեղծումը, մասնակցությունը մարտական գործողություններին:

Հայկական հարցը և տերությունները. Սայքս – Պիկոյի համաձայնագիրը: Ցարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում:

**Հայոց Մեծ եղեռնը:** Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն: Ցեղասպանության իրագործման փուլերը: Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը 1915 թվականին: Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը: Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու պատժումը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

**Հայաստանը 1917 թ. ռուսական հեղափոխությունների շրջանում:** Փետրվարյան հեղափոխությունը. ցարիզմի տապալումը: Օզակոմի ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Արևմտահայերի առաջին համագումարը. Արևմտահայ Ազգային խորհրդի ստեղծումը:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Արևելահայերի համագումարը: Արևելահայ Ազգային խորհրդի ստեղծումը:

Հոկտեմբերյան հեղաշրջումը: Իրադրությունը Անդրկովկասում և կովկասյան ճակատում: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական հողերի բռնակցումը Թուրքիային:

**Անկախության վերականգնման ճանապարհին:** Ռուսական զորքերի հեռացումը կովկասյան ճակատից: Հայկական ազգային զորամիավորումների ստեղծումը: Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայոց զորքի հերոսական դիմադրությունը: Հայկական միասնական ճակատի ստեղծման ծրագիրը: Բաքվի կոմունան և նրա պայքարը թուրք զավթիչների դեմ:

Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը: Հայոց անկախ պետականության վերականգնումը:

Բանավոր հարցում (5 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ (27 ժամ)

### Թեմա 1. Հայկական մշակույթը (XVII դ. երկրորդ կես - XIX դ. առաջին կես) (8 ժամ)

**Մշակույթը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում:** Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Լուսավորականությունը որպես աշխարհի մասին պատկերացումների նոր համակարգ. հայկական լուսավորականությունը, դրա դրսևորման յուրահատկությունը (Հ. Էմին, Մ. Բաղրամյան, Շահամիրյաններ):

Դպրոցները: Տպագրությունը: Առաջին հայ պարբերականը. Հարություն Շմավոնյանը և «Ազդարար»-ը:

Գիտությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը և նրա դերը հայապահպանության ու մշակույթի զարգացման գործում: Միքայել Չամչյանի «Պատմություն հայոցը»: Պատմագիտությունը: Գեղարվեստական գրականությունը: Արվեստը:

**XIX դ. առաջին կեսի մշակութային զարգացման արդյունքները:** Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցը (Աղաբաբյան, Լազարյան, Ներսիսյան և այլն): Գիտությունը: Գրականությունը. Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան: Արվեստը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Մշակույթի վերելքը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին (13 ժամ)

Մշակույթի զարգացման նախադրյալները: Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցական ցանցը. արական և իգական դպրոցներ, եկեղեցական-ծխական դպրոցներ, հայկական դպրոցները գաղթավայրերում:

Գիտության զարգացումը: Հումանիտար գիտությունները: Պատմագիտությունը (Ղ.Ալիշան, Մ.Օրմանյան, Մ.Էմին, Ս.Պալասանյան, Ալ.Երիցյան, Լեո, Ն. Ադոնց և ուրիշներ): Փիլիսոփայությունը : Լեզվաբանությունը և գրականագիտությունը: Բնական գիտությունների զարգացումը:

Մամուլը: Կ.Պոլիսը և Թիֆլիսը՝ հայ պարբերական մամուլի կենտրոններ: Կուսակցական մամուլի առաջացումը: Մամուլի դերը հասարակական –քաղաքական կյանքում:

Գրականության զարգացումը, հասարակական նշանակությունը: Նշանավոր գրողները: Արվեստը և ճարտարապետությունը:

Հայկական մշակույթի նվաճումները նոր շրջանում:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (2 ժամ)

## Թեմա 3. Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում (XVII դ. երկրորդ կես-XX դ. սկիզբ) (6 ժամ)

Գաղութահայ հիմնական կենտրոնները, նրանց առջև ծառացած խնդիրները: Ազգային-հասարակական և մշակութային կյանքը հայ գաղթավայրերում: Հայոց

եկեղեցու գործունեությունը գաղթավայրերում: Հայ գաղթավայրերի դերը ազգային մշակույթի պահպանման և զարգացման գործում:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

### Ամփոփում (4 ժամ)

# XI I դասարան
(շաբաթական՝ 8 ժամ, տարեկան՝ 272 ժամ)

## ՆՈՐԱԳՈւՅՆ ՇՐՋԱՆ (1918 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ) (136 ժամ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)

Հայոց պատմության նորագույն շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները: Հայկական անկախ պետականության վերականգնումը և զարգացումը: Ազգային հիմնախնդիրները արդի փուլում: Հայկական մշակույթի նվաճումները:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (24 ժամ)

### Թեմա 1. Նորանկախ պետության ներքին կյանքը (7 ժամ)

**Հանրապետության կայացումը:** Հայաստանի հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների ստեղծումը (օրենսդիր, գործադիր, դատական): Ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայերենը՝ պետական լեզու: Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

**Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը:** Սոցիալ – տնտեսական դրությունը: Գաղթականության և ներգաղթի խնդիրը: Ագրարային վերափոխումները, արդյունաբերության և առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումները: ԱՄՆ–ի օգնությունը Հայաստանի Հանրապետությանը, Ամերկոմի գործունեությունը:

Քաղաքական կուսակցությունները: Հասարակական կազմակերպությունները: Արևմտահայերի 2-րդ համագումարը:

Հայ առաքելական եկեղեցին հայոց անկախ պետականության վերականգնման և կայացման շրջանում:

**Երկրի կայունությանը սպառնացող վտանգներ:** Թուրք – թաթարական խռովությունները, դրանց ճնշումը, արդյունքները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը: Ապստամբության ընթացքը: ՀՀ կառավարության ձեռնարկումները ապստամբությունը ճնշելու համար: Բյուրո – կառավարության ստեղծումը: Ապստամբության պարտությունը, հետևանքները:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Հանրապետության միջազգային դրությունը: Հայկական հարցը (11 ժամ)

Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Քառյակ միության պարտությունը Առաջին աշխարհամարտում, թուրքական զորքերի հեռանալը Հայաստանից: Տերությունների դիրքորոշումն ու քաղաքականությունը Անդրկովկասի և Հայաստանի նկատմամբ: Հայ-վրացական հարաբերությունները. 1918 թ. հայ-վրացական պատերազմը, Լոռու «չեզոք գոտու» ստեղծումը: Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.: Զանգեզուրի պայքարը 11-րդ կարմիր բանակի և Ադրբեջանի դեմ: Պայքարը Ադրբեջանի նկրտումների դեմ Ղարաբաղում, Նախիջևանում, Շարուր - Դարալագյազում:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը: Հայկական երկու պատվիրակությունների գործունեությունը: Միացյալ ծրագրի կազմումը: 1919 թ. մայիսի 28-ին Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը ՀՀ խորհրդարանի կողմից: Հայկական հարցը Սան-Ռեմոյի կոնֆերանսում: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը:

**Կիլիկիահայության աղետը:** Հայկական լեգեոնի կազմավորումը և մասնակցությունը ռազմական գործողություններին: Հայերի վերադարձը: Մ. Տամատյանի կառավարության ստեղծումը: Ֆրանսիայի դիրքորոշումը, քեմալականների հարձակումը և կիլիկիահայության հերոսական դիմադրությունը: Կիլիկիայի նվաճումը Թուրքիայի կողմից:

**Հայ–ռուսական հարաբերությունները:** ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Խորհրդային Ռուսաստանի ադրբեջանամետ դիրքորոշումը: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Առաջին Հանրապետության անկումը (6 ժամ)

Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալական շարժումը և Հայաստանը: Բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումը: Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականությունը:

1920 թ. թուրք – հայկական պատերազմի սկիզբը, ընթացքը: Կարսի անկումը, զինադադարի կնքումը: Հայ-թուրքական բանակցությունները Ալեքսանդրապոլում, դեկտեմբերի 2-ի պայմանագիրը:

Հայհեղկոմի նոյեմբերի 29-ի հռչակագիրը Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը: Հայաստանի խորհրդայնացումը:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (34 ժամ)

### Թեմա 1. Խորհրդային Հայաստանը 1920-1922 թվականներին (6 ժամ)

Խորհրդային իշխանության հաստատումը: Կառավարման նոր մարմինների՝ Հեղկոմների, կազմավորումը և գործունեությունը: «Ռազմական կոմունիզմ»-ի քաղաքականության կիրառումը և դրա հետևանքները: 1921թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում: Ապստամբության պարտությունը և խորհրդային իշխանության վերահաստատումը: ՀՍԽՀ նոր կառավարության՝ Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ) կազմավորումը:

Անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը (նէպ): Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և արտաքին օգնությունը:

ՀՍԽՀ խորհուրդների ընտրությունները և առաջին համագումարը: ՀՍԽՀ Սահմանադրությունը: Հայաստանի Կարմիր բանակը:

Խորհրդային հանրապետությունների տնտեսական և ռազմաքաղաքական միավորման քաղաքականությունը: Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության (ԱԽՍՀԴՄ) ստեղծումը: Անդրկովկասյան դաշնային հանրապետության (ԱԽԴՍՀ) ստեղծումը: ԽՍՀՄ-ի կազմավորումը:

**Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը:** Զանգեզուրի գոյապայքարը (1920թ. վերջ – 1921թ. հուլիս): «Լեռնահայաստանի»... 

Բանավոր և գրավոր հարցում (2 ժամ)

## Թեմա 2. Սոցիալիստական հասարակության ձևավորումը Հայաստանում 1922-1941թվականներին (9 ժամ)

**Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը:** Տնտեսության վերականգնումը նէպի հիմքի վրա: Արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը, նոր ձեռնարկությունների կառուցումը: Նէպը և գյուղացիությունը: Պարենհարկը: Տնտեսության մեջ վարչահրամայական մեթոդների կիրառումը: Նէպի կասեցումը:

**Խորհրդային Հայաստանի ինդուստրացումը:** Ինդուստրացման աղբյուրները, տեմպերը: Հնգամյա ծրագրերը: Արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը Հայաստանում: Էներգահամակարգի հետագա զարգացումը: Երևանը Հայաստանի արդյունաբերական կենտրոն: Ինդուստրացման արդյունքները: Անցումը կառավարման վարչահրամայական եղանակի:

**Գյուղատնտեսության կոլեկտիվացումը:** Գյուղի վիճակը 1920 - ական թթ. վերջերին: Հացամթերումների ճգնաժամը: Անցում կոլեկտիվ տնտեսությունների ստեղծմանը: Համատարած բռնի կոլեկտիվացումը: Գյուղացիության պայքարի ձևերը: Կոլեկտիվացման արդյունքները և հետևանքները:

**Հասարակական-քաղաքական կյանքը:** Հասարակության սոցիալական կազմի փոփոխությունները: Կոմունիստական մենիշխանության հաստատումը: Քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասերը: Հալածանքներ այլ կուսակցությունների հանդեպ: Անհատի պաշտամունքի ձևավորումը: Ամբողջատիրությունը բոլշևիզմի օրինաչափ հետևանք: Խորհրդային պետության ազգային քաղաքականությունը: Զանգվածային բռնությունները:

Պետության անհանդուրժողական քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ:

**Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն:** ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրությունը: Անդրֆեդերացիայի լուծարումը: ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Խորհուրդների իշխանության ձևական բնույթը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

## Թեմա 3. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 -1945 թվականներ) (4 ժամ)

Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: ՀԽՍՀ-ն ֆաշիստական Գերմանիայի և Թուրքիայի ծրագրերում: Խորհրդային Հայաստանի տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան:

Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Հայ ռազմիկների մասնակցությունը մարտական գործողություններին: Խորհրդային

Միության հայ հերոսները: Խորհրդային բանակի հայ զորավարները: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին:

Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: «Սասունցի Դավիթ» և «Հովհաննես Բաղրամյան» տանկային շարասյուները: Հայկական լեգեոնի կազմակերպումը, նպատակը: Սփյուռքահայ հակաֆաշիստական կազմակերպությունները: Հայ առաքելական եկեղեցին պատերազմի տարիներին:

Բանավոր հարցում (1 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 4. Խորհրդային Հայաստանը հետպատերազմյան տարիներին (1945-1985 թվականներ) (6 ժամ)

Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը: Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Բնակչության սոցիալական վիճակը և փոփոխությունները:

Հասարակական-քաղաքական կյանքը: Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: «Մեծ հայրենադարձության» կազմակերպումը: Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949թ. զանգվածային աքսորը:

Անհատի պաշտամունքի քննադատումը և հետևանքների վերացման սկիզբը: Հայաստանը խրուշչովյան «ձնհալի» տարիներին: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը: Յա. Զարոբյան:

Խորհրդային Հայաստանը լճացման ժամանակաշրջանում: Բրեժնևյան ղեկավարության տնտեսական քաղաքականությունը: ՀԽՍՀ-ում արդյունաբերական նոր ճյուղերի հիմնումը, արդյունաբերության զարգացումը շրջաններում: Հայաստանը մեծ քիմիայի հանրապետություն: Էներգետիկ բազայի ընդլայնումը: Սևանի հիմնախնդիրը, Արփա-Սևան ջրատարի կառուցումը: Բնապահպանական խնդիրների սրումը: Ագրոարդյունաբերական համալիրների ստեղծումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները:

Լճացման երևույթները տնտեսության մեջ և սոցիալական բնագավառում: Հակասություններ պաշտոնական գաղափարախոսության և հասարակական գիտակցության միջև: Այլախոհությունը Հայաստանում: Կուսակցական մարմինների վերահսկողության և գրաքննության ուժեղացումը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 5. Խորհրդային Հայաստանը վերակառուցման շրջանում (9 ժամ)

**Վերակառուցման քաղաքականությունը:** Վերակառուցման նպատակները: Վերակառուցման տեղապտույտը Հայաստանում և լճացման երևույթների խորացումը: Վերափոխումները քաղաքական համակարգում, բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը: Ազգամիջյան հարաբերությունների սրումը:

**Արցախյան շարժման նոր փուլը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը: ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 1988թ-ի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը: Հանրահավաքներ Երևանում և Ստեփանակերտում: ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթի դեպքերը, դրա խեղաթյուրված որակումը կենտրոնի կողմից:

Շարժման հետագա վերելքը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ստեղծումը: ՀԽՍՀ գերագույն խորհրդի 1988թ-ի հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը Արցախի հիմնահարցի վերաբերյալ: ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1988թ-ի հուլիսի 18-ի նիստը և նրա որոշումը: Հայերի բռնագաղթեցումը Ադրբեջանից: ՀԽՍՀ ԳԽ նոյեմբերի 24-ի արտահերթ նստաշրջանը: «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունը: Կառավարման հատուկ կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ-ում :

Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբարի ազգային խորհրդի 1989թ-ի դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Բաքվի դեպքերը (1990թ. հունվար): Ադրբեջանի ոտնձգությունները Հայաստանի սահմաններում: Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և հանրապետության սահմանների պաշտպանությունը:

**1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը:** Երկրաշարժի ավերիչ հետևանքները: ԽՍՀՄ հանրապետությունների, արտասահմանյան երկրների և Սփյուռքի օգնությունը: Աղետի գոտու ծանր սոցիալ-տնտեսական վիճակը և դրա հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Խորհրդային բանակի և Ադրբեջանի ՄՀՕՋ-ի գործողությունները ԼՂԻՄ-ում 1991թ., ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: «Օղակ» գործողությունը (1991թ. ապրիլ-մայիս): Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը (Թ.Կրպեյան, Ա.Կարապետյան, Ս.Աչիկգյոզյան և ուրիշներ):

**Հայաստանի անկախության գործընթացը:** Շրջադարձային փոփոխություններ հանրապետության քաղաքական կյանքում: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիսի 20-ի այլընտրանքային ընտրությունները: Նոր Գերագույն խորհրդի ձևավորումը: Հայաստանի անկախության մասին 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը:

Ազգային շարժումների ուժեղացումը ԽՍՀՄ-ում: 1991թ. օգոստոսյան խռովությունը: Միութենական հանրապետությունների անկախության հռչակումը: ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը:

Բանավոր հարցում (2 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ (24 ժամ)

### Թեմա 1. Հայաստանի Հանրապետությունը (16 ժամ)

**Հայաստանի Հանրապետության պետականության կայացման գործընթացը:** 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն. ՀՀ անկախության հռչակումը: ՀՀ իշխանության մարմինների ստեղծումը: ՀՀ խորհրդանիշները՝ զինանշան, դրոշ, օրհներգ: Ազգային բանակաշինությունը. հայկական բանակի ծնունդը (1992թ. հունվարի 28) և կայացումը՝ որպես անկախ պետականության գլխավոր ձեռքբերում:

Անցումը նախագահական կառավարավարման ձևին: 1991թ. հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրությունները: ՀՀ Սահմանադրության ընդունումը (1995թ. հուլիս), ՀՀ Սահմանադրության նոր բարեփոխված տարբերակը (2005թ. նոյեմբեր):

**Ներքին դրությունը:** Տնտեսական կացությունը: Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը և դրա հետևանքները: Տնտեսական վերափոխումները. ազատ շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացը, գների ազատականացումը: Ագրարային վերափոխումների սկիզբը. հողի սեփականաշնորհումը: Բանկային նոր համակարգի ստեղծումը: Հայկական արժույթի՝ դրամի ընդունումը: Ֆինանսավարկային և հարկային քաղաքականությունը: Արտահանումը և ներմուծումը:

Բնակչության զբաղվածությունը և սոցիալական վիճակը, տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական հետևանքները: Զանգվածային գործազրկությունը և արտագաղթը: Հասարակության սոցիալական բևեռացումը:

**Հասարակական - քաղաքական կյանքը:** Հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացումը: Հայ առաքելական եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեծղման ու կայացման տարիներին: Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Հայ ավանդական կուսակցությունների վերադարձը Հայաստան: Նոր քաղաքական կուսակցությունների ստեղծումը (ԱԻՄ, ՀՀՇ, ՍԻՄ, ՀՀԿ,ՀԴԿ, ԱԺՄ, ՀԺԿ, ՕԵԿ, ԲՀԿ):

Ազգային ժողովի (1995թ. հուլիս) և 1996թ. նախագահական ընտրությունները: Քաղաքական ճգնաժամի խորացումը և ՀՀ նախագահի հրաժարականը 1998թ.: Նախագահական նոր ընտրություններ: Քաղաքական ուժերի նոր վերադասավորումը: 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը և նրա հետևանքները: Ներքաղաքական ճգնաժամը և ներքաղաքական զարգացումները 1999-2007թթ.: 2007թ.

խորհրդարանական և 2008 թ. նախագահական ընտրությունները: Ներքաղաքական նոր զարգացումները:

**ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:** Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: Հայաստանը ԱՊՀ, ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ:

Հարաբերությունները հարևան երկրների հետ: Հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ : Հայ-ռուսական հարաբերությունները, բարեկամության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր (1997թ.):

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը արևմտաեվրոպական երկրների հետ: Հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, Ֆրանսիայի դերը հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում: ՀՀ - Եվրամիություն հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ամերիկյան մայրցամաքի երկրների հետ: ՀՀ - ԱՄՆ դիվանագիտական կապերի հաստատումը: ԱՄՆ-ի մարդասիրական օգնությունը Հայաստանի Հանրապետությանը:

Հարաբերությունները Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի երկրների հետ:

Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայոց ցեղասպանության ճանաչումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից 1991-2008թվականներին:

Բանավոր հարցում (5 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (2 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (8 ժամ)

**Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հռչակումը և կայացումը:** Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ի լուծարումը: Ազգային խորհրդի կողմից ԼՂՀ անկախության հռչակումը (1991թ. սեպտեմբերի 2): 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության մասին հանրաքվեն: ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը: Անցում կառավարման նախագահական համակարգի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդանիշները. զինանշան, դրոշ, օրհներգ: Բանակը:

**Ադրբեջանա-Ղարաբաղյան պատերազմը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը: Ադրբեջանի նոր ագրեսիան ԼՂՀ դեմ: Պաշտպանական մարտերը: Ինքնապաշտպանական ուժերի հակահարձակումը և Շուշիի ու Լաչինի ազատագրումը (1992թ. մայիս): Ադրբեջանական զորքերի հարձակումը ԼՂՀ-ի վրա: Պատերազմի հետագա ընթացքը: Ղարաբաղյան բանակի հաղթանակը և զինադադարի կնքումը (1994թ. մայիս):

Արցախյան ազատամարտի հերոսներ. Մ.Մելքոնյան, Ա.Ղուլյան (Բեկոր), Շ.Մեղրյան, Լ.Ազգալդյան, Պ.Ղևոնդյան (Պետո), Վ.Ստեփանյան (Դուշման), Վ.Բախշյան, Յու.Պողոսյան, Գ. Ստեփանյան, Ա. Ղարիբյան և ուրիշներ:

**Ներքին դրությունը:** Սոցիալ-տնտեսական կացությունը: Ազգաբնակչության սոցիալական վիճակի ծանրացումը: Տնտեսական վերափոխումներ: Արդյունաբերական ձեռնարկությունների մի մասի վերագործարկումը և էներգետիկ համակարգի վերականգնումը: Ագրարային վերափոխումներ: Ռազմավարական նշանակության ճանապարհների կառուցումը:

**ԼՂՀ արտաքին քաղաքականությունն ու միջազգային դրությունը:** Արցախյան հիմնախնդիրը միջազգային տարբեր ատյաններում (ԵԱՀԽ, ՄԱԿ և այլն): ԵԱՀԽ Մինսկի խմբի գործունեությունը: Ռուսաստանի Դաշնության միջնորդական քայլերը: Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ գագաթնաժողովներում: Ղարաբաղյան հիմնախնդրի փուլային և փաթեթային տարբերակները: Հարցի նոր քննարկումներ միջազգային ատյաններում:

Բանավոր հարցում (2 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ (18 ժամ)

### Թեմա 1. Հայկական Սփյուռքը 1920-1939 թվականներին (4 ժամ)

Սփյուռքի առաջացումը: Սփյուռքահայ գլխավոր կենտրոնները: Սփյուռքահայ կուսակցությունները: Հայ Առաքելական եկեղեցին Սփյուռքում: Համասփյուռքյան կրթամշակութային և բարեգործական կազմակերպությունները: Հայկական հարցը և սփյուռքահայությունը:

Խորհրդային Հայաստան - Սփյուռք հարաբերությունները: Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): «Հայկական օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում: Ֆ.Նանսեն: Սփյուռքահայերի հայրենադարձությունը:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

## Թեմա 2. Հայկական Սփյուռքը 1946-1991թվականներին (7 ժամ)

Հայրենադարձությունը: Սփյուռքահայ կենտրոնները: Հասարակական-քաղաքական կյանքը: Համաշխարհային հայկական կոնգրեսը: Հայ դատի հանձնախմբերը: Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար:

Հայրենիք - Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

## Թեմա 3. Հայկական Սփյուռքը 1991-2008 թվականներին (7 ժամ)

Զանգվածային արտագաղթը և սփյուռքի ստվարացումը: Սփյուռքահայության տեղաշարժերը 1990-ական թթ.: Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի հայկական համայնքները 1991-2008թթ.: Սփյուռքահայերի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանն ու հասարակական-քաղաքական կյանքին: Սփյուռքի հասարակական - քաղաքական կյանքը: Հայ դատի համար պայքարի ակտիվացումը:

Նոր մոտեցումներ հայրենիք-սփյուռք հարաբերություններում: Եկեղեցու դերը սփյուռքում: Հայաստան-Սփյուռք համաժողովները և համահայկական մարզական խաղերը որպես աշխարհի հայությանը միավորելու փորձեր: Սփյուքի դերը համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման գործում:

Սփյուռքահայ երիտասարդության արդի հիմնախնդիրները, ազգային արժեքներն ու «վերադարձ»-ի գաղափարը: Սփյուռքահայ համայնքների հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հայրենակցական միությունների գործունեությունը Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ:

Բանավոր հարցում (1 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (29 ժամ)

### Թեմա 1. Մշակութային կյանքը Առաջին հանրապետության տարիներին (2 ժամ)

Դպրոցական գործի կազմակերպումը: Հայաստանի համալսարանի հիմնադրումը: Գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան: Հանրային գրադարանի, պետական թանգարանի հիմնադրումը:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

### Թեմա 2. Մշակույթը 1920-1941թվականներին (10 ժամ)

**Խորհրդային Հայաստանի մշակույթը:** Առաջին միջոցառումները կրթության և մշակույթի բնագավառում: Խորհրդային իշխանության դիրքորոշումը մտավորականության հանդեպ: Անգրագիտության վերացումը: Տարրական և յոթնամյա դպրոցներ: Միջնակարգ մասնագիտական և բուհական համակարգի ձևավորումն ու զարգացումը: Երևանի պետական համալսարանը:

Գիտահետազոտական առաջին կենտրոնները: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը: Հասարակական և բնական գիտությունները:

Խորհրդահայ գրականությունը: Պրոլետկուլտ: Գրողների միության ստեղծումը:

Արվեստը: Թատրոնը, կինոարվեստը, կերպարվեստը, երաժշտությունը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

Խորհրդահայ մշակույթը կոմունիստական գաղափարախոսության ոլորտում:

**Սփյուռքի հոգևոր-մշակութային կյանքը:** Սփյուռքահայ դպրոցը: Գրականությունը: Արվեստը: Հայագիտությունը: Ազգապահպանության հիմնախնդիրը:

Բանավոր հարցում (3 ժամ)
Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)
Գործնական աշխատանք (1 ժամ)

### Թեմա 3. Մշակույթի վերելքը (1945-1991 թվականներ) (12 ժամ)

**Խորհրդային Հայաստանի մշակույթը:** Բարեփոխումները մշակույթի բնագավառում: Մշակույթի զարգացման հիմնական միտումները, արդյունքները:

Կրթական համակարգը: Գիտությունը: Գիտությունների ակադեմիան: Գիտահետազոտական կենտրոնները, Բյուրականի աստղադիտարանը:

Կիբեռնետիկայի, էլեկտրոնիկայի զարգացումը: Հայագիտության զարգացումը, ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը:

Գրականությունը: Ականավոր գրողները:

Արվեստը. երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը: Ճարտարապետու-թյունը: Արվեստի բնագավառի ականավոր ներկայացուցիչները:

Գիտական և մշակութային կապերը: Խորհրդային Հայաստանի մշակույթի նվաճումները, բացթողումները:

**Սփյուռքահայ մշակույթը**: Դպրոցը: Կրթամշակութային ցանցի նշանակությունը ազգային նկարագրի պահպանման խնդրում: Սփյուռքահայ գրականությունը, մամուլը, երաժշտությունը, թատրոնը, կերպարվեստը, կինոարվեստը: Հայրենիք - Սփյուռք մշակութային կապերի ամրապնդումը:

Բանավոր հարցում (3 ժամ)

Գրավոր թեմատիկ աշխատանք (1 ժամ)

Գործնական աշխատանք (2 ժամ)

## Թեմա 4. Հայկական մշակույթի արդի վիճակը (5 ժամ)

**Մշակութային կյանքը**: Մտավոր ներուժի արտահոսքը: Մշակույթի դժվարին վիճակը, դրա հաղթահարման փորձերը: Գիտակրթական վերափոխումների քաղաքականությունը: Կրթական նոր համակարգի հիմնումը, դրա զարգացման միտումները: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը: Ճարտարապետությունը:

Սփյուռքահայ մշակույթը. դերը հայապահպանության և սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման գործում:

Հետարդյունաբերական հասարակության զարգացման միտումները և Հայաստանը: Մշակույթի զարգացման հիմնական միտումները արդի փուլում:

Բանավոր և գրավոր հարցում (1 ժամ)

Գործնական աշխատանք (1 ժամ)

## Ամփոփում (4 ժամ)

## Երկրորդ կիսամյակ

## Նախաքննական պարապմունքներ, կրկնություն (136 ժամ)

Հաստատված է
ՀՀ ԿԳ նախարարի

-------- 2008թ. N ------ Ա/Ք հրամանով

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԾՐԱԳԻՐ

(X – XII դասարաններ)

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական կրթակարգը և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը, «Հայոց պատմություն» առարկայի միջին դպրոցի չափորոշիչը և ծրագիրը, ՀՀ կառավարության կողմից հաստատված ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը:

Հայոց պատմության սույն ծրագիրը հենվում է նախորդ կրթական աստիճանում՝ միջին դպրոցի ծրագրի շրջանակներում ուսումնասիրված ու յուրացված նյութի վրա, խորացվում է նոր հարցադրումներով ու հայեցակարգային մոտեցումներով: Դրանով ապահովվում է պատմական կրթության շարունակականությունն ու հաջորդականությունը:

Ուսումնական ծրագրի բովանդակության ձևավորման համար հիմնական չափանիշ է ընտրվել պատմության մեկնաբանման և արժևորման քաղաքակրթական սկզբունքը՝ զուգորդելով այն ֆորմացիոն տեսության ձեռքբերումների հետ: Կառուցվածքային առումով ծրագրի հիմքում գլխավորապես դրված են հիմնախնդիրների ժամանակագրական և թեմատիկ ուսուցման մոտեցումները:

Ժամանակագրական առումով ծրագիրն ընդգրկում է հայկական քաղաքակրթության ամբողջական պատմությունը՝ նրա սկզբնավորման ակունքներից մինչև ժամանակակից հետարդյունաբերական հասարակության շրջանը:

Ծրագրի բովանդակային առանցքը կազմել է հայկական պետականության պատմությունը, որովհետև քաղաքակրթական արդի փուլում մեզ համար կարևորվում է ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը:

Հայաստանը հին ժամանակներից հայտնի է որպես քաղաքակրթության բնօրրան, եղել է եվրոպական ու արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, ստեղծել, պահպանել ու զարգացրել է յուրատիպ ազգային մշակույթ, որի շնորհիվ հայությունը, հազարամյակներ կտրելով, հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակույթի հարուստ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրումը կազմել է ծրագրի երկրորդ կարևոր բովանդակային ուղղությունը:

Հայոց պատմության յուրահատուկ գծերից է նաև ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը, ինչը, բնականաբար, կազմել է ծրագրի բովանդակային մյուս ուղղությունը:

Առարկայի գլխավոր նպատակն է՝ սովորողներին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության պատմական զարգացման ընթացքի հիմնական օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ, նպաստել նրանց՝ պատմական կարևոր իրադարձությունները և երևույթները ուսումնասիրելու,

հասկանալու, վերլուծելու, համեմատելու, համադրելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, հայկական պատմամշակութային ժառանգությունն արժևորելու կարողությունների զարգացմանը: Ավագ դպրոցում հատկապես կարևորվում է սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, ազգային արժեքային համակարգի, նրանց աշխարհայացքի ամբողջական ձևավորման խնդրի լուծումը:

Սովորողները կկարողանան հիմնարար գիտելիքների հենքի վրա զարգացնել իրենց ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, իմաստավորել ու յուրացնել ազգային արժեքային համակարգը:

Հայոց քաղաքակրթության հարուստ ժառանգության յուրացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր ապագա քաղաքացուն պատմական փորձը լավագույնս ծառայեցնել իր անկախությունը վերականգնած Հայաստանի շենացմանը և հզորացմանը: Հայոց պատմության իմացության խորացումն ու ամրապնդումը ավագ դպրոցում հնարավորություն կտա նաև ապագա մասնագետներին նախապատրաստվել բարձր մակարդակում կրթությունը շարունակելու:

Նշված նպատակների ու խնդիրների հաջող և արդյունավետ լուծմանն է նպատակաուղղված «Հայոց պատմություն» առարկայի ուսումնական նոր ծրագրի ներդրումը և դրան համապատասխան ուսուցման կազմակերպումը եռամյա ավագ դպրոցում:

«Հայոց պատմություն» առարկայի բովանդակությունն ավագ դպրոցի ընդհանուր հոսքում ժամանակագրական առումով ըստ դասարանների բաշխվում է հետևյալ կերպ.

X դասարան – հայկական քաղաքակրթությունը սկզբնավորումից մինչև միջնադարի ավարտը,

XI դասարան – հայկական քաղաքակրթությունը նոր շրջանից մինչև 1922 թվականը,

XII դասարան – հայկական քաղաքակրթությունը 1922 թվականից մինչև մեր օրերը:

Ուսումնական ծրագրով առարկայի դասավանդմանը հատկացվում է՝ X դասարանում՝ տարեկան 68 ժամ, XI դասարանում՝ տարեկան 68 ժամ, XII դասարանում՝ տարեկան 68 ժամ, ընդամենը՝ X - XII դասարանների համար՝ 204 ժամ:

«Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի սույն ծրագիրը գործածության է երաշխավորվում նաև հումանիտար հոսքի այն ենթահոսքերի համար, որտեղ առարկայի դասավանդումը խորացված ուսուցման ծրագրով չի կազմակերպվում:

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
# ԾՐԱԳԻՐ

## (X դասարան, շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

### Թեմա 1. Ներածություն (2 ժամ)

«Հայոց պատմություն» առարկայի բովանդակությունն ավագ դպրոցում: Հայոց պատմության պարբերացումը: Աղբյուրները: Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները. Հայկական լեռնաշխարհը հայոց քաղաքակրթության բնօրրան, աշխարհաքաղաքական դիրքը, տարածքը, հաղորդակցության ուղիները:

## ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (32 ժամ)

## ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ (3 ժամ)

Նախնադարի պարբերացումը: Հայկական լեռնաշխարհը՝ մարդկության պատմության զարգացման վաղնջական բնօրրան: Հնագույն բնակատեղիները Հայկական լեռնաշխարհում (Արտին լեռ, Ազոխ, Արզնի, Երևան, Հատիս):

Քաղաքակրթության ակունքներում. Նեոլիթյան հեղափոխությունը և էնեոլիթը Հայկական լեռնաշխարհում: Պաշտամունքը, հավատալիքների համակարգը: Արվեստը: Գիության տարրերի առաջացումը:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (4 ժամ)

### Թեմա 1. Հայոց ծագումնաբանությունը (2 ժամ)

Հայոց ազգաբանության հիմքերը, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը: Հայկ Նահապետը և Հայկյան Արամ աշխարհակալ թագավորը՝ հայ-արմեն ցեղանվան և Հայք-Արմենիա երկրանվան անվանադիր նախնիներ: Հայաստանի մասին վկայությունները Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում:

### Թեմա 2. Վաղ պետական կազմավորումները Ք. ա. III հազարամյակից մինչև Ք. ա. I հազարամյակի սկզբները (2 ժամ)

Շենգավիթի, Մեծամորի, Լոռի-բերդի, Բարձր Հայքի և այլ հնագիտական մշակույթը պետական վաղ կազմավորումների զարգացման մասին: Քաղաքները, ամրոցները, բերդ-շեները:

Հայկական պետական վաղ կազմավորումները (Արատտա, Արմանում): Հայասայի թագավորությունը, նրա հարաբերությունները Խեթական պետության հետ: Հայկյանների Այրարատյան թագավորությունը, Արմավիր մայրաքաղաքը: Նաիրյան համադաշնությունը՝ որպես հայ նախարարական համակարգի վաղագույն դրսևորում:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (16 ժամ)

### Թեմա 1. Վանի համահայկական թագավորությունը (3 ժամ)

Վանի թագավորության հիմնադրումը. Արամե: Սարդուրի I: Վան-Տուշպայի բարձրացումը: Վանի թագավորության հզորացումը Իշպուինի, Մենուա թագավորների օրոք: Թագավորությունը Առաջավոր Ասիայի հզորագույն տերություն Արգիշտի I-ի ժամանակ: Թագավորությունը նրա հաջորդների օրոք:

Վանի թագավորության տնտեսությունը, շինարարության հզոր վերելքը: Հայկական պետականության զարգացումը:

### Թեմա 2. Հայկազուն Երվանդյանների թագավորությունը (4 ժամ)

Հայոց թագավոր Պարույր: Հայկազուն Երվանդյանների թագավորությունը: Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները Ք. ա. VI դարի վերջից մինչև Ք. ա. IV դ. 30-ական թթ.:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Աքեմենյան տերության անկումը: Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփք-Կոմմագենեի թագավորությունները: Պայքար Սելևկյանների դեմ Ք. ա. III դ. վերջում:

Տնտեսական կյանքի վերելքը: Երվանդաշատ մայրաքաղաքի և այլ քաղաքների կառուցումը: Պետական կարգը, բանակը:

Կրկնություն (1ժամ)

### Թեմա 3. Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը (6 ժամ)

Աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում Ք. ա. II դ. սկզբին: Մագնեսիայի ճակատամարտը, Մեծ Հայքի ու Ծոփքի թագավորությունների վերականգնումը: Արտաշես I Բարեպաշտ. Արտաշեսյանների հարստության հիմնումը: Հայկական հողերի վերամիավորումը: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշես I–ի բարեփոխումները, դրանց նշանակությունը: Մեծ Հայքի պետության հզորացումը, դերը միջազգային հարաբերություններում:

**Տիգրան II Մեծ**: Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքին, արտաքին նվաճումները: Քաղաքաշինության վերելքը, Տիգրանակերտ մայրաքաղաքի և այլ քաղաքների հիմնադրումը: Հայ–հռոմեական պատերազմը. պատճառները, սկիզբը: Պատերազմի

ընթացքը: Պոմպեոսի արշավանքը և Արտաշատի հաշտությունը: Տիգրան Մեծի քաղաքակրթական դերը համաշխարհային և Հայոց պատմության մեջ:

**Մեծ Հայքի թագավորությունը Տիգրան Մեծի հաջորդների օրոք:** Հայաստանի դերը միջազգային նոր իրադրությունում: Արտավազդ II: Հայ-պարթևական դաշինքը և հռոմեա-հայկական հարաբերությունների սրումը: Պայքար հռոմեական նվաճողների դեմ. Արտաշես II-ի գահակալությունը: Արտաշեսյանների թագավորության անկումը. պատճառները և հետևանքները:

### Թեմա 4. Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը I-III դարերում (3 ժամ)

Քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում. պայքար Հայոց գահի շուրջ I դարի առաջին կեսին: Պարթև-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Տասնամյա պատերազմը, Հռանդեայի պայմանագիրը: Տրդատ I Արշակունի. Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը:

Վաղարշ I. Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Մեծ Հայքում Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը: Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները III դարում: Տրդատ III Մեծի գահակալումը: Մծբինի հաշտությունը:

Պետական կարգը Արշակունիների օրոք: Տնտեսության զարգացումը: Բնակչությունը, քաղաքները և գյուղական բնակավայրերը:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (8 ժամ)

### Թեմա 1. Հայկական մշակույթը Ք. ա. IX – Ք. ա. III դարերում (3 ժամ)

Մշակույթի զարգացման պատմական պայմանները: Վանի թագավորության շրջանի մշակույթը. կրոնը, գիրը, գիտելիքը, արվեստը, ճարտարապետությունը:

Հայկազուն Երվանդյանների ժամանակաշրջանի մշակույթը: Առասպելները: Հին հայկական վեպը: Դիցարանը: Նյութական մշակույթը:

### Թեմա 2. Մշակույթի վերելքը հելլենիզմի դարաշրջանում (5 ժամ)

Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը: Շինարարության զարգացումը, նյութական մշակույթը: Դիցարանը: Արվեստը: Տոմարը: Հայ հին գրչությունը. մեհենագրերը: Գրականությունը:

Ազգային արժեքային համակարգի ձևավորումը: Հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները, դրանց նշանակությունը համաշխարհային պատմության մեջ:

Կրկնություն (1ժամ)

Ամփոփում (1 ժամ)

## ՄԱՍ Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (34 ժամ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Հայոց քաղաքակրթության զարգացման պատմական պայմանները, առանձնահատկությունները և արդյունքները միջնադարում:

### ԲԱԺԻՆ 1. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (10 ժամ)

#### Թեմա 1. Քրիստոնեության ընդունումը: Ավատատիրության հաստատումը

(2 ժամ)

**Քրիստոնեության հռչակումը պետական կրոն:** Քրիստոնեության ընդունման նախադրյալները: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն (301 թ.): Հայ առաքելական եկեղեցու նվիրապետության հաստատումը: Ազգային և քրիստոնեական արժեքների համադրումը, ազգային արժեքային նոր համակարգի ձևավորումը: Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:

**Ավատատիրության հաստատումը:** Նոր հասարակական հարաբերությունների ձևավորումը: Ավատատիրական աստիճանասանդուղքը: Պետական կառավարման համակարգը: Բանակը: Բնակչությունը, քաղաքային կյանքը:

#### Թեմա 2. Արշակունյաց թագավորությունը 301-428 թվականներին (3 ժամ)

**Պայքար թագավորական իշխանության ուժեղացման համար:** Տրդատ III Մեծի գործունեությունը: Երկրի հետագա ամրապնդման Խոսրով III Կոտակի քաղաքականությունը: Տիրան թագավորը: Պետություն-եկեղեցի հարաբերությունները: Արշակ II-ի քաղաքականությունը: Ներսես Մեծ կաթողիկոսը: Աշտիշատի առաջին եկեղեցական ժողովը: Հայ-պարսկական պատերազմները, հետևանքները:

Պապ թագավորի գահակալումը: Ձիրավի հաղթական ճակատամարտը: Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը:

**Թագավորության թուլացումն ու անկումը:** Արշակունիների պետության թուլացման պատճառները: Մեծ Հայքի 387 թ. բաժանումը: Թագավորության վերամիավորումը Խոսրով IV և Վռամշապուհ արքաների օրոք: Հայ Արշակունիների թագավորության անկումը, դրա հետևանքները:

### Թեմա 3. Հայկական պետականության նախարարական շրջանը (5 ժամ)

Հայոց պետականության անցումը նախարարական համակարգին: Մարզպանական Հայաստանը. պարսից արքունիքի քաղաքականությունը: Վարդան Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական ապստամբությունը: Ավարայրի ճակատամարտը, պատմական նշանակությունը:

Վահանանց ապստամբության պատճառները, սկիզբը և ընթացքը: Նվարսակի պայմանագիրը: Արևելյան Հայաստանի ինքնուրույնության հաստատումը. Վահան Մամիկոնյանը՝ Հայոց տանուտեր:

**Հայաստանը VI - VII դարերում:** Արևմտյան Հայաստանը VI դ. առաջին տասնամյակներին: Հուստինիանոս I-ի ռազմավարչական վերափոխությունները:

Արևելյան Հայաստանի վիճակը VI դարի սկզբներին: Դվինի 506 թ. և 554 թ. եկեղեցական ժողովները: Հայոց 571 թ. ապստամբության վերաճումը պարսկա-բյուզանդական պատերազմի: Հայաստանի բաժանումը 591թ.:

Արաբական նվաճումները և Հայաստանը: Հայ-արաբական պայմանագրի կնքումը Թեոդորոս Ռշտունու կողմից: Հայաստանի անկախության վերականգնումը VII դ. երկրորդ կեսին:

**Նախարարական համակարգը արաբների տիրապետության շրջանում:** «Արմինիա» փոխարքայության կազմավորումը խալիֆայության կազմում: Հայ նախարարների և Հայոց եկեղեցու իրավունքների սահմանափակման արաբների քաղաքականությունը: VIII դարի հակաարաբական ապստամբությունները և դրանց նշանակությունը: Հայկական իշխանական տների հզորացումը IX դ. առաջին կեսին: 850-855 թթ. ապստամբությունը, դրա նշանակությունը:

Կրկնություն (1ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (10 ժամ)

### Թեմա 1. Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը (4 ժամ)

Հայոց թագավորության վերականգնման նախադրյալները: Աշոտ I Բագրատունի: Հայ-բյուզանդական հարաբերությունները և պայքարը արաբական նվաճողների դեմ Սմբատ I-ի օրոք: Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացումը: Աշոտ II Երկաթ: Աբաս Բագրատունի: Աշոտ III Ողորմած: Անին Հայաստանի մայրաքաղաք: Սմբատ II Տիեզերակալ: Հայկական թագավորությունների համադաշնությունը: Հայաստանի հզորացումը Գագիկ I-ի օրոք:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Հայոց եկեղեցին: Ավատատիրական հարաբերությունների զարգացումը: Բնակչությունը: Բագրատունյաց թագավորության տնտեսական կյանքի վերելքը:

Թագավորության թուլացման պատճառները: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը և հայկական տարածքների բռնազավթումը (Տարոն, Տայք): Պայքար Բյուզանդիայի դեմ. Գագիկ II: Անիի թագավորության անկումը:

## Թեմա 2. Հայոց պետականությունը XI-XIV դարերում (2 ժամ)

Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքները: Հայերի զանգվածային արտագաղթը: Հայկական թագավորությունները և իշխանությունները: Կարսի, Սյունիքի, Լոռու թագավորությունները: Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխությունները:

Ազատագրական պայքարը մահմեդական ամիրայությունների դեմ: Զաքարյանների գլխավորած իշխանությունները Հայաստանում: Իշխանական նոր տները: Մոնղոլական ասպատակությունները: Պայքար թաթար-մոնղոլական տիրապետության դեմ: Հայկական իշխանական տները XIII դարի երկրորդ կեսին - XIV դարում:

## Թեմա 3. Կիլիկյան Հայաստանը (4 ժամ)

Հայկական պետականության ստեղծման նախադրյալները Կիլիկիայում: Հայկական իշխանությունների առաջացումը Կիլիկիայում: Ռուբեն I: Խաչակիրները և Կիլիկիայի հայերը: Ռուբինյան իշխանության ընդլայնումը և ամրապնդումը: Հայոց եկեղեցու նոր թեմերի ձևավորումը, կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա, Ներսես Շնորհալի: Լևոն I Մեծագործ, Կիլիկիայի Հայկական թագավորության հռչակումը: Ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հեթումյանների արքայատոհմի հաստատումը: Կիլիկիայի հայկական պետության հարաբերությունները խաչակիրների, մոնղոլների և մամլուքների հետ: Պապականությունը և Կիլիկյան Հայաստանը, ունիթորական և հակաունիթորական շարժումը: Թագավորության թուլացումը և անկումը 1375 թ.: Պետականության պահպանումը Կիլիկիայի լեռնային շրջաններում:

Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը: Գյուղատնտեսությունը, արհեստները: Ծովային և ցամաքային առևտուրը, կապերը այլ երկրների հետ:

Պետական կառավարման համակարգը: Բանակը: Ավատատիրական հարաբերությունների առանձնահատկությունները: Քաղաքները և քաղաքային կյանքը: Բնակչությունը: Արևելքի ու Եվրոպայի հետ քաղաքակրթական շփումները, փոխազդեցությունները:

Կրկնություն (1ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (4 ժամ)

### Թեմա 1. Կորուստների և վերականգնումի ժամանակաշրջան (3 ժամ) (XV դար-XVII դարի առաջին կես)

Հայկական անկախ պետականության անկման հետևանքները: Պայքար վաչկատուն ցեղերի դեմ: Ազատագրական լեգենդը: Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: Հայոց թագավորության վերականգնման փորձը Աղթամարում:

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին: Հայաստանը և թուրք-պարսկական պատերազմները, դրանց հետևանքները:

Հայաստանի ազատագրության պայքարի նոր փուլի սկզբնավորումը (Ստեփանոս Սալմաստեցի, Աբգար Դպիր Թոխաթեցի):

Հայկական իշխանությունները հայոց պետականության կրողներ. Արցախի, Սյունիքի մելիքությունները, Զեյթունի իշխանությունը:

### Թեմա 2. Հայկական գաղթավայրերը (1 ժամ)

Հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: «Գաղութ» և «համայնք» հասկացությունները: Գաղթավայրերի ներդրումը ազգային ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանման, զարգացման գործում: Հիմնական գաղթավայրերը:

## ԲԱԺԻՆ 4. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (8 ժամ)

### Թեմա 1. Ազգային – քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը (3 ժամ)

Հայկական մշակույթի վերելքի նախադրյալները: Մաշտոցյան գրերի գյուտը, նշանակությունը: Դպրոցը:

Մշակույթի Ոսկեդարը: Թարգմանական և ինքնուրույն գրականության սկզբնավորումը: Մեսրոպատառ հայ պատմագրության հիմնադրումը: Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունը, ազգային գաղափարախոսության ձևակերպումը:

VII դարի պատմագրությունը (Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի): Հովհան Մամիկոնյան, Ղևոնդ վարդապետ (VIII դար):

Փիլիսոփայություն: Բնափիլիսոփայություն. Անանիա Շիրակացի: Եկեղեցական կանոնական գրականություն: Արվեստը:

## Թեմա 2. Մշակույթի վերելքը X-XIV դարերում (3 ժամ)

Մշակույթի վերելքի պատմական պայմանները: Կրթական գործի առաջընթացը: Բարձրագույն դպրոցներ և համալսարաններ. Անի, Սիս, Գլաձոր, Տաթև:

Պատմագրությունը: Իրավագիտությունը: Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը. Գրիգոր Տաթևացի: Գրականությունը: Արվեստը:

Հայկական մշակութային վերածննդի հիմնական արդյունքները:

## Թեմա 3. Մշակույթը դժվարին ժամանակներում (XV դար – XVII դարի առաջին կես) (2 ժամ)

Հայկական մշակույթի պահպանման և զարգացման պայմանները: Տպագրության սկզբնավորումը և զարգացումը: Դպրոցը: Պատմագրությունը: Բնագիտությունը և բժշկությունը: Արվեստը:

Կրկնություն (1ժամ)

**Ամփոփում (1 ժամ)**

# XI դասարան (68 ժամ)

## ՄԱՍ Ա. ՆՈՐ ՇՐՋԱՆ (50 ժամ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Նոր շրջանի պատմության բովանդակությունը, առանձնահատկությունները, հիմնական արդյունքները:

### ԲԱԺԻՆ 1. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
(XVII դարի երկրորդ կես – XIX դարի առաջին կես) (10 ժամ)

#### Թեմա 1. Ազատագրական շարժումները XVII դ. երկրորդ կեսին - XVIII դարում (6 ժամ)

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները: Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը, Մահտեսի Մուրադ Բաղիշեցի, Հովհաննես Թութունջի: Էջմիածնի 1677թ. ժողովը, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակության գործունեությունը: Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու ծրագրերը: Օրու գործունեության նշանակությունը:

Արցախի և Սյունիքի **զինված պայքարը:** Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում XVIII դարի սկզբին: Ռազմական ամրությունների (սղնախներ) կազմավորումը Արցախում: Ռուսական զորքերի 1722 թ. Կասպիական արշավանքը: Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս: Երևանի հերոսական պաշտպանությունը: Շարժման ծավալումը Արցախում: Ազատագրական պայքարը Սյունիքում: Դավիթ Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Մխիթար սպարապետ: Ապստամբության ավարտը:

Զինված պայքարի արդյունքները: Հայկական ինքնավարությունը Արցախում (Խամսայի մելիքությունները):

**Ազատագրական պայքարը XVIII դարի երկրորդ կեսին:** Պայքարի գաղութահայ կենտրոնները: Հովսեփ Էմին. նրա գործունեության նշանակությունը: Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը: Հայաստանի ազատագրության Հյուսիսային (Հովսեփ արք. Արղությանի) ծրագիրը: Մադրասի հայրենասիրական խմբակը: Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» և Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունները: Հայաստանի ազատագրության Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը:

Հայոց եկեղեցին և ազատագրական պայքարը XVIII դարում:

### Թեմա 2. Հայոց պետականության վերականգնման խնդիրը XIX դարի առաջին կեսին (4 ժամ)

**Արևելյան Հայաստանը և Ռուսաստանը:** Քաղաքական կացությունը Անդրկովկասում, տերությունների շահերի բախումը: Ռուս – պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հայերի մասնակցությունը պատերազմներին և ակնկալիքները: Ներսես Աշտարակեցի: Պարսկահպատակ հայերի վերադարձը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ:

Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մարզը: Հայոց եկեղեցին և ցարական կառավարության քաղաքականությունը. 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

**Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին:** Արևելյան հարցը և ռուս – թուրքական պատերազմները, դրանց արդյունքները: Հայերի մասնակցությունը պատերազմներին և ակնկալիքները: Արևմտահայերի տեղափոխությունը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած շրջաններ: Արևմտահայության ծանր դրությունը 1830-1840-ական թվականներին:

Կրկնություն (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ (26 ժամ)

### Թեմա 1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում (3 ժամ)

Ագրարային վերափոխման իրականացումը Արևելյան Հայաստանում: Քաղաքացիական բարեփոխումները: Գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը հետռեֆորմյան շրջանում: Քաղաքային կյանքը: Հայ բուրժուազիայի և բանվորության ձևավորումը: Սոցիալական շարժումները: Ցարական կառավարության քաղաքականությունը ազգային հարցում:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հայ գյուղացիության հողազրկումը Օսմանյան կայսրությունում: Քաղաքները: Արհեստներն ու առևտուրը: Մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը:

### Թեմա 2. Հայկական հարցի միջազգայնացումը (2 ժամ)

Արևելյան հարցի սրումը, մեծ տերությունների միջև հակասությունները: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառները, ընթացքը, արդյունքները:

**Հայկական հարցի միջազգայնացումը:** Հայկական հարցը՝ Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Եվրոպական

տերությունների և Ռուսաստանի միջև հակամարտությունը: Հայկական պատվիրակությունը Եվրոպայում. Մկրտիչ Խրիմյան և Մինաս Չերազ: Բեռլինի կոնգրեսը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի տարբերությունները: Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: «Երկաթե շերեփի» գաղափարը:

## Թեմա 3. Ազգային - հասարակական զարթոնքը: Հայ քաղաքական կյանքի կազմակերպումը (5 ժամ)

**Հայ հասարակական-քաղաքական հոսանքները:** Հայկական պահպանողականությունը, առանձնահատկությունները: Լիբերալիզմի հիմնական գաղափարները, դրսևորումները հայ իրականության մեջ: Ազգայնականությունը հայ իրականության մեջ: Սոցիալիզմը հայ իրականության մեջ:

**Ազգային-հասարակական շարժումները:** Արևմտահայերի սահմանադրական շարժումը, «Ազգային սահմանադրությունը», դրա նշանակությունը: Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և դրա պատմական նշանակությունը:

Ազատագրական զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը. Մկրտիչ Խրիմյան, Րաֆֆի, Ծերենց, Մուրացան, Ռ. Պատկանյան, Ս. Շահազիզ:

Ազատագրական խմբակների և կազմակերպությունների ստեղծումը, դրանց ծրագրերն ու գործունեությունը, նշանակությունը:

**Հայ ազգային կուսակցությունները:** Կուսակցությունների առաջացման նախադրյալները և պատմական պայմանները:

Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը: «Արմենիա» թերթը: Արմենականները 1890-ական թթ.: Հնչակյան կուսակցության հիմնադրումը: Կուսակցության ծրագիրը: «Հնչակ» թերթը: Լոնդոնի համագումարը և կուսակցության բաժանումը երկու մասի: Հ.Յ. Դաշնակցություն: Հիմնադրումը: Կուսակցության ծրագիրը: «Դրոշակ» թերթը: Դաշնակցությունը որպես հայ հասարակական-քաղաքական կյանքի գերիշխող կուսակցություն: Կուսակցությունների գործունեության նշանակությունը:

## Թեմա 4. Հայ ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը (3 ժամ)

**Հայդուկային շարժումը:** Հայդուկային շարժման առաջացման պատճառները: Նշանավոր հայդուկներ. Արաբո, Աղբյուր Սերոբ, Հրայր, Մեծն Մուրադ, Անդրանիկ, Գևորգ Չաուշ և ուրիշներ: Արևմտահայերի զինված պայքարը օսմանյան տիրապետության դեմ: Ֆիդայական շարժումը և հայ քաղաքական կուսակցությունները: Ֆիդայական շարժման վերելքը 1890-ական թվականներին:

Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի իրագործման սկիզբը: 1894-1896 թթ. զանգվածային կոտորածները: Հայ ազատագրական պայքարը 1894-1896 թվականներին: Հայկական հարցը և մեծ տերությունները: 1895 թ. Մայիսյան

բարենորոգումների ծրագիրը: Ազատագրական պայքարի դասերը, նոր մարտավարության ընդունումը:

Կրկնություն (1 ժամ)

## Թեմա 5. Ազատագրական շարժումները XX դարի սկզբին (5 ժամ)

**Արևելյան Հայաստանը:** Սոցիալ-տնտեսական դրությունը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը, 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքը: Հայերի հակացարական շարժումը, արդյունքները: Հայ - թաթարական (ադրբեջանական) ընդհարումները ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին: Հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, արդյունքները:

Արևելյան Հայաստանը 1907-1914 թվականներին. սոցիալական և քաղաքական իրավիճակը: Ցարիզմը և Հայոց եկեղեցին: Հայ հոգևորականության մասնակցությունը ազատագրական շարժմանը:

**Արևմտյան Հայաստանը:** Արևմտահայերի ծանր վիճակը: Զինված ընդհանուր ապստամբության նախապատրաստումը: Առաքելոց վանքի կռիվը (1901 թ.): Սասունի 1904 թ. ապստամբությունը, դրա նշանակությունը:

Համիդյան վարչակարգի ընդդիմադիր ուժերի համախմբման փորձերը: Երիտթուրքերի 1908 թ. հեղաշրջումը: Հայ ազատագրական շարժման նոր մարտավարությունը, քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: Երիտթուրքերը հայերի ոչնչացման համիդյան ծրագրի շարունակողներ. հայերի կոտորածը Կիլիկիայում: Պանթուրքիզմը երիտթուրքերի պետական քաղաքականության առանցք:

Հայկական հարցը 1912-1914 թվականներին: Բալկանյան պատերազմը և Հայկական հարցի վերաբացումը: Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը, գործունեությունը: Մեծ տերությունները և հայկական բարենորոգումների խնդիրը: 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը:

## Թեմա 6. Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին (8 ժամ)

Աշխարհամարտի սկիզբը: Ռուսաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական պլանները Մերձավոր Արևելքում: Աշխարհամարտի կովկասյան ճակատը. ռազմական գործողությունների ընթացքը 1914-1917 թթ., արդյունքները: Հայ կամավորական շարժումը. ջոկատների ստեղծումը, մասնակցությունը մարտական գործողություններին: Հայկական հարցը և տերությունները. Սայքս – Պիկոյի համաձայնագիրը: Ցարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում:

**Հայոց Մեծ եղեռնը:** Հայերի ցեղասպանությունը՝ երիտթուրքերի պետական քաղաքականություն: Ցեղասպանության իրագործման փուլերը: Հայերի հերոսական

ինքնապաշտպանությունը 1915 թվականին: Մեծ տերությունների և համաշխարհային հանրության վերաբերմունքը: Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունն ու պատժումը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

**Հայաստանը 1917 թ. ռուսական հեղափոխությունների շրջանում:** Փետրվարյան հեղափոխությունը. ցարիզմի տապալումը: Օզակոմի ստեղծումը: Ժամանակավոր կառավարությունը և Արևմտյան Հայաստանը: Արևմտահայերի առաջին համագումարը. Արևմտահայ Ազգային խորհրդի ստեղծումը: Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Արևելահայերի համագումարը: Արևելահայ Ազգային խորհրդի ստեղծումը:

Հոկտեմբերյան հեղաշրջումը: Իրադրությունը Անդրկովկասում և կովկասյան ճակատում: Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը, Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և հայկական հողերի բռնակցումը Թուրքիային:

**Անկախության վերականգնման ճանապարհին:** Ռուսական զորքերի հեռացումը կովկասյան ճակատից: Հայկական ազգային զորամիավորումների ստեղծումը: Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան և Անդրկովկաս: Հայկական միասնական ճակատի ստեղծման ծրագիրը: Բաքվի կոմունան և նրա պայքարը թուրք զավթիչների դեմ:

Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը: Հայոց անկախ պետականության վերականգնումը:

Կրկնություն (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ (12 ժամ)

### Թեմա 1. Հայկական մշակույթը (XVII դ. երկրորդ կես - XIX դ. առաջին կես) (4 ժամ)

**Մշակույթը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարում:** Հայկական մշակույթի զարգացման պայմանները: Լուսավորականությունը որպես աշխարհի մասին պատկերացումների նոր համակարգ. հայկական լուսավորականությունը (Հ. Էմին, Մ. Բաղրամյան, Շահամիրյաններ):

Դպրոցները: Տպագրությունը: Առաջին հայ պարբերականը. Հարություն Շմավոնյանը և «Ազդարար»-ը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Գիտությունը: Պատմագիտությունը: Գրականությունը: Արվեստը:

**XIX դարի առաջին կեսի մշակութային զարգացման արդյունքները:** Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցը: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը:

## Թեմա 2. Մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին (6 ժամ)

Մշակույթի զարգացման նախադրյալները: Հայ մշակույթի կենտրոնները: Դպրոցական ցանցը, հայկական դպրոցները գաղթավայրերում:

Գիտության զարգացումը: Հումանիտար գիտությունները: Պատմագիտությունը Փիլիսոփայությունը: Լեզվաբանությունը և գրականագիտությունը: Բնական գիտությունների զարգացումը:

Մամուլը: Կուսակցական մամուլի առաջացումը: Մամուլի դերը: Գրականության զարգացումը, հասարակական նշանակությունը: Նշանավոր գրողները: Արվեստը և ճարտարապետությունը: Հայկական մշակույթի նվաճումները նոր շրջանում:

## Թեմա 3. Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում (XVII դ. երկրորդ կես-XX դ. սկիզբ) (2 ժամ)

Գաղութահայ հիմնական կենտրոնները, նրանց առջև ծառացած խնդիրները: Ազգային-հասարակական և մշակութային կյանքը հայ գաղթավայրերում: Հայոց եկեղեցու գործունեությունը գաղթավայրերում: Հայ գաղթավայրերի դերը ազգային մշակույթի պահպանման և զարգացման գործում:

Կրկնություն (1 ժամ)

**Ամփոփում (1 ժամ)**

# ՄԱՍ Բ. ՆՈՐԱԳՈւՅՆ ՇՐՋԱՆ (18 ժամ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Հայոց պատմության նորագույն շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները: Հայկական անկախ պետականության վերականգնումը:

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (11 ժամ)

### Թեմա 1. Նորանկախ պետության ներքին կյանքը (4 ժամ)

**Հանրապետության կայացումը:** Հայաստանի հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների ստեղծումը: Ազգային բանակի ստեղծումը: Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները: Հայերենը՝ պետական լեզու: Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը:

**Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը:** Սոցիալ – տնտեսական դրությունը: Գաղթականության և ներգաղթի խնդիրը: Ագրարային վերափոխումները, արդյունաբերության և առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումները: ԱՄՆ–ի օգնությունը Հայաստանի Հանրապետությանը, Ամերկոմի գործունեությունը:

Քաղաքական կուսակցությունները: Հասարակական կազմակերպությունները: Արևմտահայերի 2-րդ համագումարը:

Դպրոցական գործի կազմակերպումը: Հայաստանի համալսարանի հիմնադրումը: Գիտության և մշակույթի գործիչների վերադարձը Հայաստան: Հանրային գրադարանի, պետական թանգարանի հիմնադրումը:

Հայ առաքելական եկեղեցին հայոց անկախ պետականության վերականգնման և կայացման շրջանում:

**Երկրի կայունությանը սպառնացող վտանգներ:** Թուրք – թաթարական խռովությունները, դրանց ճնշումը, արդյունքները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը: ՀՀ կառավարության ձեռնարկումները ապստամբությունը ճնշելու համար: Ապստամբության պարտությունը, հետևանքները:

### Թեմա 2. Հանրապետության միջազգային դրությունը: Հայկական հարցը (5 ժամ)

Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: Քառյակ միության պարտությունը Առաջին աշխարհամարտում, թուրքական զորքերի հեռանալը Հայաստանից: Տերությունների դիրքորոշումն ու քաղաքականությունը Անդրկովկասի և Հայաստանի նկատմամբ: Հայ-վրացական հարաբերությունները. 1918 թ. հայ-վրացական պատերազմը, Լոռու «չեզոք գոտու» ստեղծումը: Զանգեզուրի պայքարը 11-

րդ կարմիր բանակի և Ադրբեջանի դեմ: Պայքարը Ադրբեջանի նկրտումների դեմ Ղարաբաղում, Նախիջևանում, Շարուր - Դարալագյազում:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը: Հայկական երկու պատվիրակությունների գործունեությունը: Միացյալ ծրագրի կազմումը: 1919 թ. մայիսի 28-ին Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը ՀՀ խորհրդարանի կողմից: Հայկական հարցը Սան-Ռեմոյի կոնֆերանսում: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը:

**Կիլիկիահայության աղետը:** Հայկական լեգեոնը: Հայերի վերադարձը: Մ. Տամատյանի կառավարության ստեղծումը: Ֆրանսիայի քաղաքականությունը: Կիլիկիայի նվաճումը Թուրքիայի կողմից:

**Հայ–ռուսական հարաբերությունները:** Հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Խորհրդային Ռուսաստանի ադրբեջանամետ դիրքորոշումը: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը:

### Թեմա 3. Առաջին Հանրապետության անկումը (2 ժամ)

Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալական շարժումը և Հայաստանը: Բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումը: Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականությունը:

1920 թ. թուրք – հայկական պատերազմի սկիզբը, ընթացքը: Զինադադարի կնքումը: Հայ-թուրքական բանակցությունները Ալեքսանդրապոլում, դեկտեմբերի 2-ի պայմանագիրը:

Հայհեղկոմի հռչակագիրը Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը: Հայաստանի խորհրդայնացումը:

## ԲԱԺԻՆ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ (5 ժամ)

### Թեմա 1. Խորհրդային Հայաստանը 1920-1922 թվականներին (5 ժամ)

Կառավարման նոր մարմինների՝ հեղկոմների, կազմավորումը և գործունեությունը: «Ռազմական կոմունիզմ»-ի քաղաքականության կիրառումը և դրա հետևանքները: 1921թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում: Ապստամբության պարտությունը և խորհրդային իշխանության վերահաստատումը: ՀՍԽՀ նոր կառավարության՝ Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ) կազմավորումը:

Անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը (նէպ): Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և արտաքին օգնությունը:

ՀՍԽՀ խորհուրդների ընտրությունները և առաջին համագումարը: ՀՍԽՀ Սահմանադրությունը: Հայաստանի Կարմիր բանակը:

Խորհրդային հանրապետությունների տնտեսական և ռազմաքաղաքական միավորման քաղաքականությունը: Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության (ԱԽՍՀԴՄ) ստեղծումը: Անդրկովկասյան դաշնային հանրապետության (ԱԽԴՍՀ) ստեղծումը: ԽՍՀՄ-ի կազմավորումը:

**Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը:** Զանգեզուրի գոյապայքարը (1920թ. վերջ – 1921թ. հուլիս): «Իսքնավար Սյունիքի» հռչակումը: Գարեգին Նժդեհ: Զանգեզուրի միացումը ՀՍԽՀ-ին:

Հայկական տարածքների հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում: 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը:

Հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերություններն ու սահմանների հարցը: Լոռու «Չեզոք գոտու», Ջավախքի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրները:

Հայ-իրանական հարաբերությունները: Հանրապետության դիվանագիտական կապերը: Հայկական հարցը Լոնդոնի 1921թ. և Լոզանի 1922-1923թթ. խորհրդաժողովներում:

Կրկնություն (1 ժամ)

**Ամփոփում (1 ժամ)**

# X I I դասարան
(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ (շարունակություն)
(34 ժամ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Հայոց պատմության խորհրդային շրջանը: Հայկական անկախ պետականության վերականգնումը և զարգացումը: Ազգային հիմնախնդիրները արդի փուլում: Հայկական մշակույթի նվաճումները:

## ԲԱԺԻՆ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ –Ի ԿԱԶՄՈՒՄ
(11 ժամ)

### Թեմա 1. Սոցիալիստական հասարակության ձևավորումը Հայաստանում 1922-1941թվականներին (3 ժամ)

**Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը:** Տնտեսության վերականգնումը նէպի հիմքի վրա: Նէպի կասեցումը:

**Խորհրդային Հայաստանի ինդուստրացումը:** Ինդուստրացման աղբյուրները, տեմպերը: Հնգամյա ծրագրերը: Ինդուստրացման արդյունքները:

**Գյուղատնտեսության կոլեկտիվացումը:** Գյուղի վիճակը 1920 - ական թթ. վերջերին: Անցում կոլեկտիվ տնտեսությունների ստեղծմանը: Համատարած բռնի կոլեկտիվացումը: Կոլեկտիվացման արդյունքները և հետևանքները:

**Հասարակական-քաղաքական կյանքը:** Հասարակության սոցիալական կազմի փոփոխությունները: Կոմունիստական մենիշխանության հաստատումը: Անհատի պաշտամունքի ձևավորումը: Ամբողջատիրությունը բոլշևիզմի օրինաչափ հետևանք: Խորհրդային պետության ազգային քաղաքականությունը: Զանգվածային բռնությունները: Պետության անհանդուրժողական քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ:

**Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն:** ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրությունը: Անդրֆեդերացիայի լուծարումը: ՀԽՍՀ նոր Սահմանադրությունը: Խորհուրդների իշխանության ձևական բնույթը:

## Թեմա 2. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 -1945 թվականներ) (2 ժամ)

Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: ՀԽՍՀ-ն ֆաշիստական Գերմանիայի և Թուրքիայի ծրագրերում: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Հայ ռազմիկների մասնակցությունը մարտական գործողություններին: Խորհրդային Միության հայ հերոսները: Խորհրդային բանակի հայ զորավարները: Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին:

Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: «Սասունցի Դավիթ» և «Հովհաննես Բաղրամյան» տանկային շարասյուները: Հայկական լեգեոնի կազմակերպումը, նպատակը: Սփյուռքահայ հակաֆաշիստական կազմակեր-պությունները: Հայ առաքելական եկեղեցին պատերազմի տարիներին:

## Թեմա 3. Հետպատերազմյան տարիները (1945-1985 թվականներ) (2 ժամ)

Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը: Արդյունաբերության վերականգնումը և զարգացումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Բնակչության սոցիալական վիճակը և փոփոխությունները:

Հասարակական-քաղաքական կյանքը: Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: «Մեծ հայրենադարձության» կազմակերպումը: Քաղաքական բռնությունների նոր փուլը: 1949թ. զանգվածային աքսորը:

Անհատի պաշտամունքի քննադատումը և հետևանքների վերացման սկիզբը: Հայաստանը խրուշչովյան «ձնհալի» տարիներին: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը: Յա. Զարոբյան:

Խորհրդային Հայաստանը լճացման ժամանակաշրջանում: Արդյունաբերական նոր ճյուղերի հիմնումը: Բնապահպանական խնդիրների սրումը: Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Լճացման երևույթները տնտեսության մեջ և սոցիալական բնագավառում: Հակասություններ պաշտոնական գաղափարախոսության և հասարակական գիտակցության միջև: Այլախոհությունը Հայաստանում:

## Թեմա 4. Խորհրդային Հայաստանը վերակառուցման շրջանում (4 ժամ)

**Վերակառուցման քաղաքականությունը:** Վերակառուցման նպատակները: Վերափոխումները քաղաքական համակարգում, բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը:

**Արցախյան շարժման նոր փուլը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը: ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 1988թ-

ի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը: Հանրահավաքներ Երևանում և Ստեփանակերտում: ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգայիթի դեպքերը, դրա խեղաթյուրված որակումը կենտրոնի կողմից:

Շարժման հետագա վերելքը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ստեղծումը: ՀԽՍՀ գերագույն խորհրդի 1988թ-ի հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը Արցախի հիմնահարցի վերաբերյալ: ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1988թ-ի հուլիսի 18-ի նիստը և նրա որոշումը: Հայերի բռնագաղթեցումը Ադրբեջանից: ՀԽՍՀ ԳԽ նոյեմբերի 24-ի արտահերթ նստաշրջանը: «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունը: Կառավարման հատուկ կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ-ում :

Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբարի ազգային խորհրդի 1989թ-ի դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Բաքվի դեպքերը (1990թ. հունվար): Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և հանրապետության սահմանների պաշտպանությունը:

**1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը**: Երկրաշարժի ավերիչ հետևանքները: Աղետի գոտու ծանր սոցիալ-տնտեսական վիճակը և դրա հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:

Խորհրդային բանակի և Ադրբեջանի ՄՀՕՋ-ի գործողությունները ԼՂԻՄ-ում 1991թ.: «Օղակ» գործողությունը (1991թ. ապրիլ-մայիս): Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը:

**Հայաստանի անկախության գործընթացը**: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990թ. մայիսի 20-ի այլընտրանքային ընտրությունները: Նոր Գերագույն խորհրդի ձևավորումը: Հայաստանի անկախության մասին 1990թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը: Ազգային շարժումների ուժեղացումը ԽՍՀՄ-ում: 1991թ. օգոստոսյան խռովությունը: Միութենական հանրապետությունների անկախության հռչակումը: ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը:

Կրկնություն (1 ժամ)

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ (7 ժամ)

### Թեմա 1. Հայաստանի Հանրապետությունը (5 ժամ)

**Հայաստանի Հանրապետության պետականության կայացման գործընթացը**: 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն. ՀՀ անկախության հռչակումը: ՀՀ իշխանության մարմինների ստեղծումը: ՀՀ խորհրդանիշները՝ զինանշան, դրոշ, օրհներգ: Հայոց ազգային բանակի ծնունդը (1992թ. հունվարի 28) և կայացումը՝ որպես անկախ պետականության գլխավոր ձեռքբերում: Անցումը նախագահական կառավարավարման ձևին: ՀՀ Սահմանադրության ընդունումը (1995թ. հուլիս), ՀՀ Սահմանադրության նոր բարեփոխված տարբերակը (2005թ. նոյեմբեր):

**Ներքին դրությունը**: Տնտեսական կացությունը: Ազատ շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացը: Ագրարային վերափոխումները. հողի սեփականաշնորհումը: Ֆինանսավարկային և հարկային քաղաքականությունը: Արտահանումը և ներմուծումը:

Բնակչության զբաղվածությունը և սոցիալական վիճակը, տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական հետևանքները: Զանգվածային գործազրկությունը և արտագաղթը: Հասարակության սոցիալական բևեռացումը:

**Հասարակական - քաղաքական կյանքը**: Հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացումը: Հայ առաքելական եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեղծման ու կայացման տարիներին: Բազմակուսակցական համակարգի ձևավորումը. հայ ավանդական կուսակցությունների վերադարձը Հայաստան, նոր քաղաքական կուսակցությունների ստեղծումը: Ազգային ժողովի (1995թ. հուլիս) և 1996թ. նախագահական ընտրությունները: Քաղաքական ճգնաժամի խորացումը և ՀՀ նախագահի հրաժարականը 1998թ.: Նախագահական նոր ընտրություններ, քաղաքական ուժերի նոր վերադասավորումը: 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը և նրա հետևանքները: Ներքաղաքական ճգնաժամը և ներքաղաքական զարգացումները 1999-2007թթ.: 2007թ. խորհրդարանական և 2008 թ. նախագահական ընտրությունները: Ներքաղաքական նոր զարգացումները:

**ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը**: Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և դիվանագիտական կապերի հաստատումը: Հայաստանը ԱՊՀ -ի, ՍԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ:

Հարաբերությունները հարևան երկրների հետ: Հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ: Հայ-ռուսական հարաբերությունները, բարեկամության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր (1997թ.):

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը արևմտաեվրոպական երկրների հետ: Հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը, Ֆրանսիայի դերը հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում: ՀՀ -

Եվրամիություն հարաբերությունները: ՀՀ - ԱՄՆ դիվանագիտական կապերի հաստատումը:

ՀՀ քաղաքականությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայոց ցեղասպանության ճանաչումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից 1991-2008թվականներին:

### Թեմա 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (2 ժամ)

**Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հռչակումը և կայացումը:** Ազգային խորհրդի կողմից ԼՂՀ անկախության հռչակումը (1991թ. սեպտեմբերի 2): 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության մասին հանրաքվեն: ԼՂՀ իշխանության մարմինների ստեղծումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդանիշները. զինանշան, դրոշ, օրհներգ: Բանակը:

**Ադրբեջանա-Ղարաբաղյան պատերազմը:** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զինված փուլը: Շուշիի ու Լաչինի ազատագրումը (1992թ. մայիս): Պատերազմի հետագա ընթացքը: Ղարաբաղյան բանակի հաղթանակը և զինադադարի կնքումը (1994թ. մայիս): Արցախյան ազատամարտի հերոսներ. Մ.Մելքոնյան, Ա.Ղուլյան (Բեկոր), Շ.Մեղրյան, Լ.Ազգալդյան, Պ.Ղևոնդյան (Պետո), Վ.Ստեփանյան (Դուշման), Վ.Բախշյան, Յու.Պողոսյան, Գ. Ստեփանյան, Ա. Ղարիբյան և ուրիշներ:

**ԼՂՀ արտաքին քաղաքականությունն ու միջազգային դրությունը:** Արցախյան հիմնախնդիրը միջազգային տարբեր ատյաններում (ԵԱՀԽ, ՄԱԿ և այլն): ԵԱՀԽ Մինսկի խմբի գործունեությունը: Ռուսաստանի Դաշնության միջնորդական քայլերը: Ղարաբաղի հիմնահարցը ԵԱՀԿ գագաթնաժողովներում: Ղարաբաղյան հիմնախնդրի փուլային և փաթեթային տարբերակները: Հարցի նոր քննարկումներ միջազգային ատյաններում:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ (6 ժամ)

### Թեմա 1. Հայկական Սփյուռքը 1920-1939 թվականներին (2 ժամ)

Սփյուռքի առաջացումը: Սփյուռքահայ գլխավոր կենտրոնները: Սփյուռքահայ կուսակցությունները: Հայ առաքելական եկեղեցին Սփյուռքում: Համասփյուռքյան կրթամշակութային և բարեգործական կազմակերպությունները: Հայկական հարցը և սփյուռքահայությունը: Խորհրդային Հայաստան - Սփյուռք հարաբերությունները: Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): «Հայկական օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում: Ֆ.Նանսեն: Սփյուռքահայերի հայրենադարձությունը:

### Թեմա 2. Հայկական Սփյուռքը 1946-1991թվականներին (2 ժամ)

Սփյուռքահայ կենտրոնները: Հասարակական-քաղաքական կյանքը: Համաշխարհային հայկական կոնգրեսը: Հայ դատի հանձնախմբերը: Սփյուռքահայերի պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Հայրենիք - Սփյուռք կապերի բարելավումը և ամրապնդումը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը:

### Թեմա 3. Հայկական Սփյուռքը 1991-2008 թվականներին (2 ժամ)

Զանգվածային արտագաղթը և սփյուռքի ստվարացումը: Սփյուռքահայության տեղաշարժերը 1990-ական թթ.: Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի հայկական համայնքները 1991-2008թթ.: Սփյուռքի հասարակական - քաղաքական կյանքը: Հայ դատի համար պայքարի ակտիվացումը:

Նոր մոտեցումներ հայրենիք-սփյուռք հարաբերություններում: Եկեղեցու դերը սփյուռքում: Հայաստան-Սփյուռք համաժողովները և համահայկական մարզական խաղերը որպես աշխարհի հայությանը միավորելու փորձեր: Սփյուքի դերը համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման գործում:

Սփյուռքահայ երիտասարդության արդի հիմնախնդիրները, ազգային արժեքներն ու «վերադարձ»-ի գաղափարը: Սփյուռքահայ համայնքների հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հայրենակցական միությունների գործունեությունը Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (8 ժամ)

### Թեմա 1. Մշակույթը 1920-1941թվականներին (3 ժամ)

**Խորհրդային Հայաստանի մշակույթը**: Առաջին միջոցառումները կրթության և մշակույթի բնագավառում: Անգրագիտության վերացումը: Տարրական և յոթնամյա դպրոցներ: Միջնակարգ մասնագիտական և բուհական համակարգի ձևավորումն ու զարգացումը: Երևանի պետական համալսարանը:

Գիտահետազոտական առաջին կենտրոնները: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը: Հասարակական և բնական գիտությունները:

Խորհրդահայ գրականությունը: Արվեստը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

Խորհրդահայ մշակույթը կոմունիստական գաղափարախոսության ոլորտում:

**Սփյուռքի հոգևոր-մշակութային կյանքը**: Սփյուռքահայ դպրոցը: Գրականությունը: Արվեստը: Հայագիտությունը: Ազգապահպանության հիմնախնդիրը:

## Թեմա 2. Մշակույթի վերելքը (1945-1991 թվականներ) (3 ժամ)

**Խորհրդային Հայաստանի մշակույթը:** Մշակույթի զարգացման հիմնական միտումները, արդյունքները: Կրթական համակարգը: Գիտությունը: Գիտությունների ակադեմիան: Գիտահետազոտական կենտրոնները, Բյուրականի աստղադիտարանը: Հայագիտության զարգացումը, ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը:

Գրականությունը: Արվեստը: Գիտական և մշակութային կապերը: Խորհրդային Հայաստանի մշակույթի նվաճումները, բացթողումները:

**Սփյուռքահայ մշակույթը:** Դպրոցը: Կրթամշակութային ցանցի նշանակությունը ազգային նկարագրի պահպանման խնդրում: Սփյուռքահայ գրականությունը, մամուլը, արվեստը: Հայրենիք - Սփյուռք մշակութային կապերի ամրապնդումը:

## Թեմա 3. Հայկական մշակույթի արդի վիճակը (2 ժամ)

**Մշակութային կյանքը**: Մշակույթի դժվարին վիճակը, դրա հաղթահարման փորձերը: Գիտակրթական վերափոխումների քաղաքականությունը: Կրթական նոր համակարգի հիմնումը, դրա զարգացման միտումները: Գիտությունը: Գրականությունը: Արվեստը: Ճարտարապետությունը:

Սփյուռքահայ մշակույթը. դերը հայապահպանության և սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման գործում:

Հետարդյունաբերական հասարակության զարգացման միտումները և Հայաստանը: Մշակույթի զարգացման հիմնական միտումները արդի փուլում:

Կրկնություն (1 ժամ)

**Ամփոփում** (1 ժամ)

**Երկրորդ կիսամյակ**

Նախաքննական պարապմունքներ, կրկնություն (34 ժամ)